



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



8585 XVI<sub>2</sub> II.

РАСПАРЬЯЦЪ

РАСПАРЬЯЦЪ

РАСПАРЬЯЦЪ

РАСПАРЬЯЦЪ

РАСПАРЬЯЦЪ

РАСПАРЬЯЦЪ

25 NOV 2010

30 OCT 2006

Յաւերաւած «ՄՈՒՐՃ» անասորի

891.71

U-78

# ԳԱԻԱՃԱՆՈՒԹԻՒՆ

ԴՐԱՍԱՏԻԿԱԿԱՆ ԼԵԳԵՆԴԱ ՎՐԱՍԱՆԻ ԱՆՑԵԱԼԻՑ

5 ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԻԵՍ. Ա. ՍՈՒՄՐԵՏՈՎԻ

Թարգմանութիւն

Ա.Լ. ՆԱՏՈՒՐԵԱՆԻ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ Ա. Բուժաթիւլաձէի, Նիկ. № 21  
1904



1002  
6035

5.17.08  
58.0

Дозволено цензурою. Тифи́сь, 17 марта 1904 года

## ՀԵՂԻՆԱԿԻ ՅԱՌԱԶԱՐԱՆԸ

Որքան ինձ յայտնի է, Վրաստանի սարքն ու կենցաղը, ուր կատարում է պիեսիս գործողութիւնը, շատ սակաւ են երևան եկել ուսական բեմի վրայ և այն էլ շատ առաջ: Այդ հանգամանքն անհրաժեշտ է դարձնում իմ ներկայ բացատրութիւնը:

Իհարկէ, զեղարուեստական գլխաւոր գրգիչ պատճառը (АМПУЛЬСЪ), որ ինձ հարկադրեց պիեսիս նիւթ ընտրել Վրաստանի անցեալը, էր առանձին անհատների, ժողովրդական բարքերի այն ընդհանուր վառ երանգը և պատմական անցքերի գունաւորումն, որ յատուկ է հարաւին և որը մի առանձին թափով հանդէս է գալիս մանաւանդ պատմութեան լարուած մոմենտներին, երբ մի ժողովուրդ իր վերջին ճիգն է թափում ձեռքից չտալու այն, ինչ որ իր համար ամենայն արդարութեամբ ամենից թանգն է համարում—իր հաւատը և իր անկախութիւնը: Բացի դրանից, ինձ թւում էր, որ այս վերջին հարիւր տարւայ ընթացքում Վրաստանի ունեցած սերտ կապը Ռուսաստանի պետական, հասարակական և հոգևոր կեննքի հետ, վրաց ժողովուրդը դարձնում է աւելի մօտ և հետաքրքրական ուս հասարակութեան համար, քան ուրիշ շատ երկրների ու ազգերի կեննքը, որը դրամատիկական երկերի նիւթ դարձած՝ երևան է հանում ուսական բեմը:

Սակայն ինքնըստնքեան ևս Վրաստանն իր անցեալով աւելի է արժանի ուշադրութեան, քան այն, որ նա գրաւում է ուսաց գրականութեան մէջ. արժանի է շնորհիւ այն բանի, որ նրա ամբողջ պատմութիւնը միջատեալ և մինչև Ռուսաստանի հետ տեղի ունեցած ազատ ու բարեյօժար միացման գործողութիւնը ներկայացնում է մի փոքրիկ ազգի անընդհատ, լարուած մաքառումն իսլամի անսահման ոյժի դէմ յանուն բրիտաննէութեան կուլտուրական սկզբունքների: Գիտակցաբար թէ անգիտակցաբար, միայն թէ Վրաստանի ամբողջ ժողովուրդը՝ թագաւորից սկսած մինչև վերջին աղքատը՝ թէ արեան հեղեղների գնով, թէ առանձին անհատների կամ բովանդակ ազգի անթւելի սխրագործութիւնների շնորհիւ, կարողացել է 1200 տարւայ տարածութեան վրայ պահել-պահ-

պանել այն, ինչ որ չէ յաջողուած իր բոլոր մաքրութեամբ պահպանելու ուրիշ ազգերին, որոնք անհամեմատ աւելի բարեյաջող պարագաների մէջ են եղած: Լայն կրօնական համբերատարութիւն և յարգանք դէպի օտար դաւանութիւնները, առանց սակայն կրօնական անտարբերութեան ամենախորթիկ ցոյցի կամ նշանի—այդ բանը պէտք է վկայեն ամենքը, ովքեր առիթ են ունեցել խորը դիտելու մեր ժամանակի վրացիներ յարաբերութիւնները, նրանց վերաբերմունքը դէպի հրէաները, ալանդաւորները և նոյնիսկ դէպի այն իսլամը, որը ընդամենը հարիւր հինգ տարի սրանից առաջ քար-քարի վրայ չթողեց թիֆլիսում և ջնջեց Վրաստանի ընակչութեան կէսը: Վրացի կնոջ անձնական ու ընտանեկան ազատութիւնը և նրա անազին ազգեցութիւնը ոչ միայն ընտանեկան, այլև հասարակական կեանքում թէ վերին, թէ ստորին դասակարգերում ներկայացընում են մի դժուար հաւատալի ու դժուար մեկնելի երևոյթ, եթէ հակադրելու լինես վրացունու այդ դիրքը ժամանակակից իսլամական կնոջ դերին և յիշես, որ Վրաստանը հազար տարի շարունակ տնքում էր այդ իսլամի ծանր գարշապարի տակ, որից հերոսական ճիգեր թափելով՝ շատ սակաւ անգամ կարողանում էր ազատուել, այն էլ ոչ երկարատե: Իւրաքանչիւրի անձնական, մարդկային արժանիքը՝ անկախ նրա սոցիալական դիրքից կամ հարստութիւնից, առանց տեղի տալու լիտիութեան կամ անասնձութեան, լիակատար յարգանք դէպի ինքը ու դէպի ուրիշը—այդ ամենը կազմում է վրաց ժողովրդի բընորոշ գիծը, մի գիծ, որը ջնջել չկարողացաւ իշխանութեան ոյժի կամ փողի առաջ խոնարհուող այն ստրկական ոգին, որի մէջ ամփոփուած են իսլամական տէրութիւնների ամբողջ իմաստն ու էութիւնը: Վերջապէս, Վրաստանի թոյլ կուլտուրան կարողացաւ այնուամենայնիւ պաշտպանել ոչ միայն իր հաւատը, այլև իր ազգային ուրոյնացումը, իր տիպիկական ազգայնականութիւնը, մինչդեռ հին պարսից առաւել զօրեղ կուլտուրան ոյժ չունեցաւ իսլամականութեան մէջ անաղարտ պահպանելու իր ազգային հաղարամեայ բնագծերը:

Իրիստոնէական հումանիզմի, կնոջ ազատութեան, մարդկային արժանապատուութեան և ազգայնութեան համար Վրաստանի մղած այդ կուլտուրական կռիւը, կռիւ՝ ևս առաւել ազնիւ նրանով, որ այդ սկզբունքներն իհարկէ, ոչ միշտ դաւանուում էին գիտակցաբար, այլ նրանք թանգ ու մօտ էին և՛ ժողովրդական մասսաներին, և՛ նրանց զեկավարներին աւելի շուտով բնազգաբար,—այդ կռիւն առաջ էր տարւում ոչ միշտ միևնոյն ճանապարհով, միևնոյն միջոցներով: Իսլամի ճնշումից

գտած ազատութեանն արագօրէն հետևում էր անողորմ և արիւնահեղ ստրկացման խիստ շրջան: Իսլամը հարուածում էր որպէս շանթ ու կայծակ: Տղամարդիկ կոտորուում էին. իբրև գերիներ, վաճառքի էին հանւում: Հայրենիքի համար կուռ մի բուռն անվեհեր քաջերի հերոսական ջանքերն անգոր էին մի բան անելու այն անթիւ-անհամար պարսիկ կամ տաճիկ, թաթար կամ արաբ զօրախմբերի ու հրոսակների քանակի դէմ, որ ներկայացնում էր իսլամի ոյժը: Եւ այլադաւանների այդ սպանիչ լծի տակ գալիս, տիրում էր մեռելային հանգիստ՝ հեռն էլ մի կրօն—մռայլ ու անհամբերատար, խիստ ծիսական, անջերմ, անսէր, աններողամիտ, լի արհամարհանքով դէպի կեանքի ուրախութիւններն: Ասես անապատի հրաշէկ աւազով խանձուեց ու ծածկուեց Վրաստանի ծաղկազարդ, օրհնեալ բընութիւնը: Լոեց երգն ու տաղը: Եկեղեցական զանգակների ձայնը սկսում է զրգուել դոռող ու յաղթանակող պետերին. կանանց բաց երեսները վերաւորում են նրանց կեղծաւորութիւնը, այն կեղծաւորութիւնը, որ սէրը փոխանակել է հեշտանքի, ընտանիքը—հարեմի, հաւատի բոցավառ բռնկումներն ու ջերմաջերմ սէրն առ Աստուած—Փանտիկոսութեան, անողորմ ծիսականութեան և անուզողի անեղ Ալլահի առաջ: Սակայն իսլամը ոչ լոկ զազրանք է ազդում վրացու պարզ ու պայծառ բնոյթին—նրա մէջ կան և շատ վսեմ գծեր. նա հզօր է և անհեղ, նրա ալիքները, ըստ միջնադարեան վրացու հասկացողութեան, հեղեղել են համայն աշխարհը: Երուսաղէմը ու Բիզանդիոնը—քրիստոնէական այդ երկու սրբութիւններն արդէն նրա ձեռքումն են: Կովկասեան լեռները—Վրաստանի հովիտների այդ հինաւուրց թշնամիները—նրա իշխանութեան ներքոյ են: Վրաստանը մի կղզեակ է՝ ընկած ծովի մէջ, ծովը մոլեգնած կըսուի է մղում նրա ափերի հետ և պատրաստ է ջրահեղձ անել նրան իր ալիքներով: Այդ անուշի զօրութիւնը յուզում, բորբոքում ու ապշութեան է հասցնում մարդկանց հարաւային երեւակայութիւնը, մարդկանց, որոնց բոլոր ոյժը կենտրոնացած է իր անձը ոչ թէ գիտակցօրէն, այլ բնազդով ճշմարտութեան նուիրելու: Սկսում է դրժումն, հաւատուրացութիւն, սպասաւորումն՝ յաղթական թշնամիներին, ստրկահոգութիւն, քրձնումն. վաճառքի է հանւում խիղճը, մոռացում է այն ամենը, ինչ որ մի ժամանակ կեանքից էլ թանգ էր: Սակայն ժողովրդի գիտակցութեան խորքում, ստրկացման ամենածանր շրջաններին անգամ, ապրում էր մի հաւատամբ: Այդ հաւատամբի մէջ էին կուլտուրայի այն նուիրական սկզբունքները, որոնց Վրաստանը բնազդօրէն պահում-պահպանում էր իր ա-

րեան հեղեղների գնով, կարծես, գիտենալով, որ վաղ թէ ուշ այդ սկզբունքներն անխղիչ կապելու են ասիական մի փոքրիկ ժողովուրդ աշխարհի մեծ ազգերի հետ և այդ սկզբունքների համար մղած կռիւը փոքրիկ ժողովուրդին ևս տալու է սրբազան և անկապտելի իրաւունք, որպէս համահաւասար, մտնելու այդ մեծ ազգերի ընտանիքը: Այդ հաւատամքը՝ Սաչն էր—և նըրան պահպանեց գլխաւորապէս վրացի կինը, դարձեալ, կարծես, հնազանդաբար, բայց աւելի ճիշտը՝ լիովին գիտակցաբար ըմբռնելով, որ այդ Սաչի մէջ է իր փրկութիւնն ու ազատութիւնը: Վրացական կենցաղի բոլոր պատմիչներն ու հետազոտողները միաբերան յիշատակում են վրացունու դերը և նշակութիւնը Վրաստանի լուսաւորութիւնը պահպանելու գործում: Վրացի կանայք անգիր էին անում Սուրբ Գիրքը, աղօթքները, վրաց հեղինակների բանաստեղծական երկերը: Նրանք համարեա ամենքն էլ գրագէտ էին և նոյնն իրանց աղջիկերանցն էին ուսուցանում: Տղաներին նրանք պատրաստում էին կուսելու այն սրբազան հաւատամքի համար, որին ապաւինել էին սրտի բոլոր ձգտումներով ու ակնկալութիւններով, որի մէջ ամփոփել էին իրանց ամբողջ յոյսը՝ ազատուելով մի օր հարեմական հարձի վիճակից, կազմելու այնպիսի ընտանիք, որի մէջ պահող-պաշտպանող տարրը ինքը կինը լինէր, և ոչ ներքինին, կինը՝ բաց դէմքով և ոչ թէ ծածկոցով, որը նրանց համար դազադից էլ վառթար էր: Եւ ահա ջարդից յետոյ, իսլամի լծի տակ, հաւատաւրացիների, ներքինիների, մեծ ու փոքր բռնակալների տիրացած աշխարհում, ահաբեկուած ստրուկների մթնոլորտում, անել կարօտութեան մէջ սկսում է վրացի կնոջ ազգաշէն գործը: Կանանց մի մասը պատրաստում էր իր զաւակներին ազատութեան յաղթական կուռի համար: Նա երգում էր նրանց հայրենիքի երգեր, պատմում էր նըրանց նախնիների քաջագործութիւններն ու հերոսական մահը, օրհնում էր նրանց ու խաչակնքում—և այդ բոլորն անում էր՝ ամեն բոպէ դէս ու դէն նայելով, ամեն շըշուկի ականջ դնելով, մահուան ու նահատակութեան վախը միշտ աչքի դիմաց ունենալով: Նա երկիւղ էր կրում և՛ իր, և՛, որ գլխաւորն է, իր զաւակների համար, որոնք բացի մօով ու արիւնով մօտ լինելուց իրան, մօտ էին արդէն և՛ ոգով, և՛ ամբողջ ապագայով: Կանանց այդ մասը պատրաստում էր մարդիկ: Միւս կանայք պատրաստում էին անցքեր. պատրաստում նոյն տեղականութեամբ, նոյն ըզզուէութեամբ, ամեն բոպէ նոյն երկիւղն աչքի առաջ ունենալով, որ իրանց բազմամեայ աշխատանքը, որպէս ոս-

տայն, կարող է յանկարծ լուկ միայն ձեռքի մի կոշտ հպումից ոչնչանալ: Իրանց դերն աւելի դժուարին ու աւելի բարդ էր: Իրանք հարեմն ընկած կանայք էին, որոնք լաւ կերակրուող ու պարարուող թոչունի նման, նախապէս որոշուած էին ապրելու ու պահուելու՝ միայն օտարի պահանջներին բաւականութիւն տալու համար: Իրանք չունէին ոչ միայն որևէ իրաւունք, այլև—որևէ պարտականութիւն, բացի մի բանից, այն է՝ ծառայել իրանց տէրերի պագշտութեան ու սուփանքներին: Երբ, ինչպէս որ այդ յաճախ պատահում էր, այնպիսի կին էր ընկնում այդ աշխարհը, որ ներշնչուած էր լինում մեր յիշած առաջին տիպի վրացի կանանց ձգտումներով ու հակումներով, այն ժամանակ այդպիսի կնոջ վիճակը սարսափելի էր: Ամբողջ հարեմը մի սոսկալի հակապատկեր էր ներկայացնում նրա ներքին աշխարհին, և նրա մաքառումը պահանջում էր նրանից ոչ միայն արիւնթիւն ու անձնուրացութիւն, այլև բարոյական զիջումների մի ամբողջ շարք: Նպատակին հասնելու համար նրան վիճակուած էր հաշտուել իր անձի ստորացման, իր պատուի ու մաղկային արժանիքի անարգման հետ: Այդ ամենն, իհարկէ, անհետեանք չէր անցնում նրա հոգևոր բարոյական պատկերի համար: Երբորդ տիպը ներկայացնում էին կին-նահատակները: Եւ սրանք անհամար քանակութիւն էին կազմում: Տեղեկութիւն կայ, որ 1226 թւին 50000-ից աւելի կանայք հաւատի համար նահատակուել են Սորասանի սուլթան Ջալալ-Էդդինի ձեռքով: Սրանք պատրաստում էին ժողովրդի ըզին, ինչպէս որ առաջինները պատրաստում էին մարդիկ, իսկ միւսները—անցքեր:

Այդէս ուրեմն, մենք տեսնում ենք, որ Սաչի համար եղած վրացական բազմադարեան կուռի ընդհանուր տիպը, որպէս կուստուրայի նուիրական սկզբունքների մարմնացած մի հաւատամք, մեզ ներկայանում է հետեւեալ կերպով. մատնչող զինւորութիւնը ոչնչացրուած է ջարդի ժամանակ, շատերը փախել են, շատերն էլ վերջապէս անձնատուր եղել թշնամուն: Ժողովրդական ոգին ընկել է: Այդ ժամանակ կինն է սկսում իր ստեղծագործական աշխատանքը և սիրով ու խնամքով, երկար ժամանակ կրում է իր մէջ ապագան, որպէս երեխային արգանդում, համարելով իրան լուկ մի անօթ, որի մէջ պահուած է բարձր բարիք:

Սակայն, ինչպէս որ իր հայրենիքի համար կուող տղամարդ-պաշտպանների դէմ իսլամն առաջ էր քաշում իր կարող ու քաջայողթ զինւորներին, որոնք չնայելով իրանց բոլոր մտայն կողմերին, այնքան հրապուրիչ էին իրանց

ուժով ու մեծութեամբ, այնպէս էլ նա կանանց դէմ պատ-  
րաստեց հարեմում և, իբրև զիմազիր ոյժ, առաջ մղեց իր կի-  
նարմատին՝ շատ նուազ իր մաքրութեամբ, բայց ոչ նուազ իր  
ոյժով: Նրա ոյժն, իրաւ է, միայն ժամանակաւոր յաղթութիւն  
կարող է տալ, քանի որ այդ ոյժը հոգևոր ոյժ չէ, այլ զուտ  
նիւթական: Բայց և այնպէս՝ դա հեշտանքի և գեղեցկութեան  
այն ոյժն է, որի հետ պատմութիւնը միայն իսլամականութեան  
մէջ չէ որ ստիպուած է եղել գործ ունենալ: Հարեմը մեքենա-  
յութիւնների և պաղձոտութեան աղբիւր ծառայող կնոջ տիպը  
հասցրեց ամենաբարձր զարգացման: Հարեմը կարողացաւ վար-  
պետութեամբ, յաջորդաբար իր այդ ներկայացուցիչների մէջ  
սպառել, անկենսունակ դարձնել համարեա այն բոլոր բա-  
րոյական բարձր սկզբունքները, որոնք դանդաղեցնում, կանգ-  
նեցնում էին մեքենայութիւնների ու ոճիրների ընթացքը, և  
փոխարէնը զինեց նրանց անխոցելի գորութեամբ՝ իշխելու  
կեանքի ամբողջ զգայնական կողմի վրայ: Ինչպէս որ ստոր են  
միջոցները, այնպէս էլ ստոր են հարեմական կնոջ և՛ նպա-  
տակները, և՛ ձգտումները: Սակայն նրանց հասնելու, նրանց  
իրականացնելու գործում հարեմի կինը ոչ պակաս հաստատա-  
կամ է և զինուած, քան բարձր կուլտուրային և բարձր բարո-  
յական սկզբունքներին ծառայող կանայք: Եւ միանգամայն բը-  
նական է, որ կանացիական երկու կուլտուրաների բնազդա-  
կան թշնամութիւնը հասնում է անհաշտելի ատելութեան, երբ  
անցքերի ընթացքը դէմ առ դէմ է բերում նրանց միևնոյն կուլ-  
դաշտում, ինչպէս որ այդ տեղի էր ունենում շարունակ Վրաս-  
տանի և իսլամի մէջ մղուած անվերջ կռոււմ:

Իմ պիեսում բնականաբար ինձ հետաքրքրեց այդ՝ դէմքե-  
րով, անցքերով և երանգներով անքան հարուստ արևելքի աշ-  
խարհը: Եւ ցանկանալով ոյժերիս ներածին չափ ծանօթացնել  
ուսս հասարակութիւնը վրաց ժողովրդի տիպիկական կողմերի  
և նրա պատմական վիճակի ընդհանուր բնաւորութեան հետ,  
ես չուզեցի իմ այդ փորձի մէջ կաշկանդուած լինել ոբևէ ձըշ-  
տիւ ու խստիւ որոշուած պատմական մոմէնտով: Դա անխու-  
սափելի կերպով իր ժամանակաւոր, անցողական կնիքը կը դը-  
նէր և՛ դէմքերի, և՛ անցքերի վրայ—և ազատութիւն չէր տալ  
ինձ իր խիստ որոշականութեամբ: Դրա համար պիեսիս ֆա-  
բուլան և գործող անձերի անունները մտացածին են, է-  
պոխը ճշտիւ չեմ որոշած, և այդ կողմից «Դաւաճանութիւն»-ը  
չէ յաւակնում պատմական ճշգրտութեան: Սակայն անցքերի  
իմաստն ու էութիւնը պիեսում, գործող անձերի՝ որպէս ժո-  
ղովրդի տիպիկական ու գաղափարական սկզբունքների արտա-

յայտիչների՝ բնաւորութիւններն ու հոգեբանութիւնը, վերջա-  
պէս, Վրաստանի պատմութեան ընդհանուր ոգին—այդ ամենն  
ինձ համար առանձին հոգածութեան և ուշաջան մշակման ա-  
ռարկայ է եղել: Առանց ինքս ինձանից ծածկելու պիեսի թե-  
րութիւնները ես այնուամենայնիւ կարծում եմ, որ ոչ մի բա-  
նում չեմ շեղուած ներքին պատմական ճշմարտութիւնից, որն,  
իմ կարծիքով, աւելի կարևոր է, քան արտաքին ժամանակագը-  
րական և փաստական ճշտութիւնը, այնպիսի աշխատութիւնե-  
րում, որոնք չեն ձգտում գիտական նշանակութիւն ունենալու:

# ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Սիւլէյման-խան, շահի գրանիկ գնդի հրամանատար և փոխարքայ Վրաստանում:

Ջէյնաբ, 40 տարեկան, նրա գլխաւոր կինը, Վրաստանի Թէյմուրազ թագաւորի այրին:

Ռուքայա, 25 տարեկան, Սիւլէյման-խանի ստրկուհին:

Նասխար, Ջէյնաբի դայեակը, Անանիա Գլխայի կինը:

Օթար-բէկ, Քարթլինայի կուսակալ, հաւատուրաց վըրացի, 50 տարեկան:

Գայիանէ, նրա դուստրը, 18 տարեկան:

Անանիա Գլխայ, գիւղացի, 70 տարեկան:

Էրէկլէ, նրա հոգեգաւազը, 22 տարեկան:

Դաթո, նրա որդին, 25 տարեկան:

Սաբա, աստանդական՝ հոգևոր դասից, 50 տարեկան:

Ղարա-Իւուֆ, Թիֆլիսի քաղաքացի:

Ալ-Ռազաբ, հաբէշ, Սիւլէյման-խանի ներքինապետ:

Բեսո, Օթար-բէկի ծառան, 45 տարեկան:

Մայկո, Գայիանէի դայեակը:

Նըն-Սաադ, պահակախմբի գլխաւոր, արաբ:

Գիզա, վրացի զօրական:

Օրքելիան } վրաց ազատ զօրքի առաջնորդներ:  
Սմբատ }

Սիւլէյման-խանի պահակախումբ: Վրաց զօրականներ: Սիւլէյման-խանի հարձեր: Գիւղացիներ: Օթար-բէկի ծառաներ:

I գործողութիւն—Սիւլէյման-խանի ապարանքը Թիֆլիսում:

II և III գործողութիւն—Օթար-բէկի այգին, Գորիի մօտերքում:

IV գործողութիւն—կիրճ Թիֆլիսի մօտերքում:

V գործողութիւն—Սիւլէյման-խանի ապարանքը Թիֆլիսում:

Ամբողջ գործողութիւնը տեղի է ունենում միջին դարերի վերջերում, Վրաստանում, պարսից ձեռքով կատարուած նուաճումներից մէկի ժամանակ:

Առաջին գործողութիւնից մինչև երկրորդն անցնում է հինգ օր:

Երկրորդը և երրորդը կատարուած են մի օրուգիշերում:

Երրորդից մինչև չորրորդն անցնում է հինգ օր:

Չորրորդը և հինգերորդը տեղի են ունենում մի գիշերուայ մէջ:

# ԱՐԱՐՈՒՍԾ ԱՌԱՋԻՆ

Ստորայարկի պառչամբ (терпача) Սիւլէյման-խանի ապարանքում, ամբողջ մէջ, Թիֆլիսում, Գուր գետի ափին: Ետևի վարագույրը ներկայացնում է գետի միւս եզերքին դանուղ քաղաքամասը, Մեախի քարափը՝ վերան ամրաց ու եկեղեցի: Պառչամբը գետից անջատուած է մի շարք մարմարէ գունաւոր, որուն սիններով, որոնք միացած են կամարներով և զարդարուած արարական դրերով ու արևելեան բազմագոյն նախշերով: Չորս կողմը վարդեր և պատաստուկ բոյսեր: Հանդիսականներից աջ ու ձախ պատերին ոսկենախշ քանդակներ և արձնապակէ զարդանկարներ: Պատերում քանդակազարդ դռներ: Բեմի մէջ տեղում—քառանկիւնի աւազան, որը լցուած է անկիւնների չորս առիւծի երախներից թափուող անուշահոտ ջրով: Աւազանից դէպի ձախ—լայն գահոյք՝ վերան զորգեր ու բարձեր: Վաղամուտ զարուն է: Պայծառ վերջալոյսը զգալի արագութեամբ տեղի է տալիս պայծառ լուսնեակ գիշերին:

Սիւլէյման-խանը՝ չոր-չոր, բարձրահասակ մի ծերունի, թուլ դէմքով, սև միւրոքով, որի մէջ հաս-հատ միայն երևում են ձերմակ մազեր, երկայն արքայական հագուստով՝ բազմած է գահոյքի վրայ: Գլխին բարձր, ձերմակ ապարոջ՝ զարդարուած աղամանդեայ փետուրով: Ծնկներին դրած է մէջքից կապած սուրը, որից կախուած են թլրսիմներ, և որի վրայ երևում են Ալ-Ղորանից առած զանազան մակագրութիւններ: Գահոյքի ետևը կանգնած են թիկնապահներ՝ սպառազէն, գլխներին ապարօշներ: Գահոյքի ձախ կողմում—ներքինապետ Ալ-Ռազաբը՝ հաստիկ հաբէշ, ճարպակալած երեսով և փոքրիկ, անհանդիստ աչքերով: Աջ կողմում—Ղարա-Իւուֆը՝ ցանցառ միւրոքով, չոր-չոր, միջահասակ: Սիւլէյմանի առաջ կանգնած է Օթար-բէկը՝ Գորիի էրիսթալը, բարձրահասակ, լիքլիք, յազթակազմ, պարսկական հագուստով, անմիրուք, ձերմակ բեղերով, որոնց ծայրերը հասնում են մինչև կուրծքը: Յօնքերը թաւ, երեսն առնական, բայց բաց ու պարզ և երբեմն կենսուրախ. երեսին խոբին վերքի հետք, որն անցնում է ճակատից մինչև աչաի կէտը: Վրան գէնք շկայ: Լսուած է Գուրի խուլ մունչիւնը: Ալ Ռազաբը, Ղարա-Իւուֆը և Օթար-բէկը կանգնած են գլխակոր, աչքերը դետին յառած, հագուստների փեշերով ձեռքերը ծածկած: Սիւլէյման-խանն ահեղ, բայց յոգնած, մեղանման զեղնած գէմքով անշարժ նայում է դէպի վեր՝ ձեռքին փերուզէ թաւրէ (տէրոգորմեա) զցելով: Երկարասև լուսթիւն: Պալատականները հազիւ շունչ են քաշում:

I

Սիւլէյման-խան. Մեծ է Ալլահը:  
Երեք պալատականներ. (Մոնարքուելով) Մեծ է Ալլահը:  
(Լուսթիւն):

Սիւլէյման-խան. Փաղիշահը յանդիմանութիւններ է ուղարկում ինձ՝ Գիւրջըստանի պետիս: Գեուս հեուից է

խուլ դողողում նրա գայրոյթի ուրուր: Մենք ամենքս էլ նրա ոտքի փոշին ենք:

Երեք-պալատականներ. Թող նրա շուքը ծածկէ արարաշխարհը:

Սիւլէյման-խան. Իմերէթի նենգամիտ թագաւորը՝ ազդուած Ախալցխայի փառայի՝ այդ անիծեալ սիւննիի սպառնալիքներէց՝ ծպտեալ մարդիկ է ուղարկում Քարթալինիա և զով ու թարմութիւն է ներշնչում անհաւատ, շունք-քրատոնեաների սրտերին:

Օթար-բէկ. Թող ազուէաների և չաղալների ծարաւը յագեցնէ նրանց արիւնը:

Սիւլէյման խան. Սո՛ւր է իմ աչքը և նո՛ւրբ է իմ ականջը (այլը դարձնում է Օթար-բէկին): Գորու էրիսթաւ \*), դո՛ւ ես իմ նեցուկը Քարթալինիայում: Քո լեզուն ականջ է շոյում, բայց քո սրտում դաւաճանութիւն կայ թագնուած:

Օթար-բէկ. Թող ես զո՛հ գնամ քո արդարութեան, ս՛վ տէր: Քո գայրոյթն անեղ ու անսպասելի է ինձ համար, որպէս կայծակը պարզ ու պայծառ օրին: Իմ սիրտը մաքուր է քո դատաստանի առաջ:

Սիւլէյման-խան. Երբ դու երես դարձրիր խաւարից և ընդունեցիր իսլամի լոյսը, ես մոռացայ քո յանգուզն կոխը իմ անյաղթելի զօրքի հետ: Ես մօտեցրի քեզ իմ գահին և քեզ՝ իմ ստրկին՝ յանձնեցի իշխանական զեկա Քարթալինիայում:

Օթար-բէկ. Ո՛վ փէյղամբարի սուր: Ինձ արժանացրած շնորհներիդ համար ես ոչնչացրի այն տաճարները, ուր մի ժամանակ ինքս էի աղօթում: Ես խորտակեցի նախնիներիս շիրիմների կամարները, և այժմ գայլերն են ոռնում նրանց գերեզմանների վրայ: Մի՞թէ ես խնայեցի իմ մերձաւոր կամ հեռաւոր արիւնակիցներին: Մի՞թէ դու չէիր, որ ինձ ասում էիր — դո՛ւ ես, Օթար-բէկ, իմ հուրն ու սուրը: Մի՞թէ այս ձեռքը չէ, որ անա արդէն տամսեւթ տարի է քրիստոնէական հարամ արիւնով ներկում է Կուրի և Արագվայի ջրերը, և մի՞թէ այդ արեան հետ քիչ եմ խառնել ես իմ եղբայրների, հարազատների և բարեկամների արիւնը: Քար-քարի վրայ չթողնելով ես փլատակ արի քսանուերեք եկեղեցի, գետնի հետ հաւասարեցրի տամսեւթ վանք և տէր-բարաների ու սեպուղուհների անարգուած մարմինները փայտէ խաչերից կապած՝ նետեցի գետը, որ լողան գէպի Կասպից ծովը: Փռո՞ք Իրանին: Ես, ծննդովս վրացի, ոտքի տակ տուի Վրաստանը, որպէս որ-

\*) Երիսթաւ—գլուտի, շրջանի կուտակալ, կտոսվարիչ:

դին է ոտքի տակ տալիս իր անառակ մօրը, և նրան կապկըպած ու հնազանդած՝ բերի, գցեցի քո ոտքերի տակ: Եւ եթէ այդբանը դեռ բաւական չէ, եթէ այդ բոլորը հաճելի չէ քո յիշողութեան, ես—քո զոհն եմ: Վերջ տուր կեանքիս, զօրաւոր արքայ (խոնարհում է նրա ոտքերի առաջ):

Սիւլէյման-խան. (Լսում էր՝ բոլոր ժամանակ աչքերն անշարժ) Կախէթի էրիսթաւն աւելի հաւատարիմ է քեզանից: Նա տասն եերկու նզովուած երեանցիներ ողջ-ողջ թաղեց գետնի մէջ մինչև կոկորդը և եօթն օր, եօթը շո՞գ ու կրակ օր թողեց նըրանց այդպէս, որ ճանճերի և մօղուկների կերակուր դառնան: Նրանց վախուղ, նապաստակ կտրած սրտերը չդիմացան այդ չարչարանքներին. նրանք բաց արին մեր առաջ Երևանի սարգարի դիտաւորութիւններն ու մեքենայութիւնները: Նա իմ տակը փորում է Սպահանում: Նա պարգևներ է ուղարկում փազիշահին և ամեն մի պարգևին մի-մի զրպարտութիւն կցում իմ մասին: Իսկ ե՞ս ինչով արդարանամ:

Օթար-բէկ. (Ոտքի կանգնելով) Սրիգ զօրութեամբ, ս՛վ կարող արքայ:

Սիւլէյման-խան. (Մտախոն) Միայն սուրը չէ իշխողների զօրութիւնը: Երկար է տևում առիւծի գաղտագողի մօտեցալը որսին, բայց երբ նա վրայ թռաւ զոհին—թռիչքը պէտք է անշեղ և հաստատ մահաբեր լինի: Քնացրու թշնամուգ և ապա յօշոտիր նրան:

Ղարա-Պաուֆ. Հինաւուրց Սիւլէյման արքայի իմաստութիւնը փոշի է մեր մեծափառ տիրոջ իմաստութեան առաջ:

Սիւլէյման խան. Երևանի սարգարը հազար ու մի պարգևներ է թափում փազիշահի գահի առաջ: Նա ուղարկում է ոսկի ու արծաթ, Ղարաբաղի նժոյգներ, քարվաններով բրինձ, մրգեղէն ու ցորեն, ամբակազմ սարուկներ և գեղանի ստրկուհիներ: Նա փորսող է տալիս փազիշահի ոտքերի տակ և աչքը անկել է իմ Գիւրջտանին: Իսկ ո՞ւր էր այդ վախկոտ շունը, երբ ես սրանից քսան տարի առաջ, որպէս սպանիչ ժամտախտ, ոչնչացրի Վրաստանի քաջերին իրանց կանանցով ու երեխաներով: Մի՞թէ նա էր, որ Կախէթի և Քարթալինիայի իշխաններին դարձրեց Իրանի ստրուկներ, իսկ ազնւականներին և ժողովուրդը—որսկան շների կերակուր: Չէ՞ որ ես էի Գիւրջտանի արկը խաւարեցնողը և այս ձեռքն էր, որ դուրս գլխից նրա վերջին թագաւորի կրծքից նրա թրպրտող սիրտը (տան դուր կամացուկ բացում է դէպի պատշգամբ: Կռան յետեւ կանգնած է Ձէյսարը՝ պարսկական ճոխ հագուստով):

Ղարա-Իւսուֆ. Ո՞վ կարող է դիմա-  
դրել անյողթիգ գորութեան:

Ալ-Ռազաք. Ի՞նչ ես Ալլահի մանգաղը:

Օթար-բէկ. Թո՞ղ կուրանան քո թըշ-

նամիները:

զրեթէ ամենքը  
միասին:

Սիւլէյման-խան. (Գլուխը խոնարհելով) Եւ անձ մարդուս  
փառքը: Ես այստեղ նստած եմ իմ գահի վրայ, իսկ թշնամի-  
ներս արդէն մոռացել են իմ ոյժը և օղակի պէս պատել են  
չորս կողմս:

Օթար-բէկ. Փորձիր իմ հաւատարմութիւնը, մեծագօր  
տէր: Ես կը զինեմ ամբողջ Քարթալինիան, գրո՞հ կը տամ դէ-  
պի Քութայիս ու Ախալցխա, Իմերէթի թագաւորին և Ախալցը-  
խայի փաշային իրար կը կապեմ մի չուանով և խուրջինի  
պէս, էշի մէջը բարձած՝ կը բերեմ, կը ձգեմ նրանց քո դրան  
շեմքին: Հրամայիր միայն—և ես կը յարձակուեմ Երևանի վրայ.  
Ես սարդարի գլուխը կաշէ պարկի մէջ գցած՝ կ'ուղարկեմ  
քեզ:

Սիւլէյման-խան. (Խորանայեաց նայելով նրան) Երբ կը գայ  
ժամանակ, ես կ'արձակեմ քո կապը: Իսկ այժմ դեռ վաղ է:  
Փաղիշահի հրամանով կը թռչի սարդարի գլուխը: Ղարա-Իւ-  
սուֆ:

Ղարա-Իւսուֆ. (Խոնարհուելով) Հրամայիր, մեծագօր տէր:

Սիւլէյման-խան. Մի ստրկական նամակ շարադրիր՝ փա-  
ղիշահին ուղարկելու: Նամակը ինքզ կը տանես պարզկների  
հետ միասին: Օթար-բէկ, այսօր դեռ կէս-գիշերը չհասած՝ դու  
ճանապարհ կ'ընկնես Քարթալինիա: Տասնևմէկ օր ժամանակ  
եմ տալիս քեզ: Այնտեղից կ'ուղարկես ինձ մի բեռն իստակ  
ոսկի, երեք բեռն արծաթ և տասնուերկու նժոյգ ձի: Առաջին  
նժոյգը պէտք է ճերմակ լինի որպէս ձիւն, և վերջինը—սև,  
որպէս գիշեր: Եւ սկսած առաջինից մինչև վերջինը՝ ամեն մէ-  
կը պէտք է այնքան ազնւարիւն լինի, որ կաշու տակից երևայ  
երակների ցանցը:

Օթար-բէկ. (Խոնարհուելով) Ամենն էլ պատրաստ կը լինի  
իննը օրուայ մէջ:

Սիւլէյման խան. Կ'ընտրես ամենասիրուն աղջիկներին,  
որ իմ կողմից պարգև ուղարկեմ փաղիշահին: Ես ինքս կը  
քննեմ նրանց գեղեցկութիւնը և վնայ քեզ, թէ որ... Սպասիր...  
Ես լսել եմ, դու աղջիկ ունես:

Օթար-բէկ. (Յուզմունքը զսպելով համարով) Քառասունից ա-  
ւելի, տէր իմ, շնորհիւ մարգարէի, որն ազատեց մեզ մի կին

ունենալու վիճակից. օրհնեալ լինի նրա անունը: Նրանցից լա-  
ւագոյններին ես կը ներկայացնեմ քո լուսափայլ աչքին:

II

Ձէյնար. (Իռուր բանալով եւ երեսի ծածկոցը յետ ձգելով) Օ-  
թար-բէկ, չմոռանաս և Գայիանէին ուղարկելու:

Օթար-բէկ. (Յնցուելով՝ մի քայլ յետ է գնում եւ որպէսզի յուզ-  
մունքը թաղցնել կարողանայ, խորը վուխ է տալիս: Ձէյնարը մօտենում է  
Սիւլէյման-խանի թախտին, խոնարհուում է, համարուում է նրա ծնկները,  
ապա վեր է կենում ու նստում նրա կողքին: Միւսնոյն դոնից դուրս է  
գալիս պառու Իսախարը եւ կանգնում է բեմի խորքում, սիւնի մօտ: Ղա-  
րա-Իւսուֆը եւ Ալ-Ռազաքը խոնարհուում են Ձէյնարի առաջ):

Սիւլէյման-խան. Ո՞ւմ մասին է խօսքը, Ձէյնար:

Ձէյնար. Ո՞վ Վրաստանի արեգակ. վաղուց անցել, գնա-  
ցել է այն անիծեալ ժամանակը, երբ իմ աչքերը դեռ չէին  
տեսել ու ճանաչել քեզ, երբ իմ սիրտը դեռ չէին փռուած քո  
օտքի տակ: Ի՞նչ ես այժմ և՛ իմ հայրենիքը, և՛ իմ հաւատը, և՛  
իմ աչքն ու տիրակալնը: Բայց երբ ես դեռ քոնը չէի—օ՛, ա-  
նիծուի այդ սև օրերի յիշողութիւնը—երբ ես դեռ լծակից էի  
Գիւրջաստանի այն անարժան թագաւորին, այն ստոր ու ստա-  
հակ երկչոտին, որին քո կարող ձեռքը սպանեց, ես քաջ ճա-  
նաչում էի իմ խորամանկ ժողովրդին: Օ՛, ի գնւր չէր, որ ես  
այսքան տարիներ շարունակ ազերսում էի քեզ—մի խնայիր  
նրանց արիւնը, ոտքի տակ տնւր, կխճորիր նրանց: Միայն եր-  
կիւզն է ուղղում նրանց խաբեբայ սրտերը:

Սիւլէյման-խան. (Անեղաբար) Օթար-բէկ, ի՞նչ են նշանա-  
կում թագուհու խօսքերը:

Օթար-բէկ. (Նրան կորցրած): Չգիտեմ, տէր իմ: Թագուհին  
զայրոյթի է արժանացնում իր հլու ծառային:

Ձէյնար. (Արհամարհանքով) զայրոյթի արժանի է առիւծը,  
և ոչ աղուէսը: Տէր իմ, նա դեռ չկարողացաւ խաբել քեզ և  
չի էլ կարող, քանի ես կենդանի եմ: Հեռուն թէ մօտիկ՝ ես  
գիտեմ՝ ինչ են պատրաստում քեզ համար: Ես չեմ թողնիլ, որ  
քեզ խաբեն: Եւ քո ամբողջ պահակախումբը չէ կարող քեզ  
պահպանել այնպէս, ինչպէս որ իմ սէրն է պահպանում: Օթար  
բէկ, ո՞ւր է քո աղջիկը, որ դու ունեցար քո առաջին ամուս-  
նութիւնից Մուխրանի բատնի դստեր հետ, այն դստեր, որի  
յորդորանքներով դու այնքան երկար կուի մղեցիր մեր ան-  
պարտելի սրի դէմ Ախալքալաքի լեռներում: Ո՞ւր է Մարիա-  
մից ծնուած աղջիկը... (Նայում է երեսին սուր ու լարուած հայեացքով):

Քո քրիստոնեայ կին Մարիամից: Նա ընկաւ տիրոջս ձեռքից՝ պաշտանելով քո ամբողջը, երբ դու Քութայիսում քարշ էիր գալիս Իմերէթի արքայազատեր ետեից և նրա գող հօր օգնութիւնն էիր խնդրում անյաղթ Սիւլէյմանի դէմ պատերազմելու համար: Ո՞ւր է քո այդ աղջիկը, Գայիանէն: Ասա, որ մեռել է:

Օթար-բէկ. (Ջղաձգաբար բռնելով իր հագուստի փեշերը, գունաժափ, աչքերը լայն չոսած, լուռ է, խօսք չի գտնում ասելու):

Ջէյնար. (Աչքը ճեղքանելով նրանից) Գունատուիր, գունատուիր, ստորաքարշ աղուէս: Գայիանէն կենդանի է, ո՞վ Վրաստանի արեգակ: Նա թագցրել է իր աղջկանն անմերձենալի անտառներում, Ախալցխայի մօտերքում: Գայիանէն աձել, ծաղկել է, որպէս լեռնային շուշան, և Օթար-բէկն հիանում է նրա վրայ՝ գաղտուկ այցելելով նրան շարունակ: Ընդարձակ է հաւատուրացի հարեմը,—օ, եթէ նա սիրելիս չլինէր կանացի գեղեցկութիւնը, այնպէս հեշտութեամբ ոտքի տակ չէր տալ այն ամենը, ինչին որ հաւատում էր,—բայց այդ հարեմում չկայ Գայիանէն, և չկայ մէկը, որ հաւասար լինէր նրան իր գեղեցկութեամբ: Օթար-բէկ, քեզ համար պահիր քո բոլոր աղջիկներին, իսկ արքային բեր միայն Գայիանէին (նեղանքով նայում է Օթար-բէկին: Սա կանգնած է գունաժափ: Ղարա-Խուսթը եւ Ալ-Ռազաբը գիշտիչ հայեացք են մխտած նրա վրայ: Սիւլէյման-խանը աչքերը չարպուշակ կիողած, իր ամբողջ դիրքով յիշեցնում է վագրին, որ պատրաստ է յարձակում գործել: Նրկարատե լուծիւն՝ ամեն մէկն ապրում է իր զգացմունքով):

Սիւլէյման-խան. Օթար-բէկ, ի՞նչ կ'ասես:

Օթար-բէկ. (Նրքն իրան հաւարած, միամտօրէն եւ բարեսիրտ եղանակով) Եթէ այդ է միայն իմ մեղքը—ես անմեղ եմ: Գայիանէին ես քեզ համար էի մեծացնում և ուզում էի բերել, դնել ոտքերիդ առաջ, իբրև մի լաւագոյն պարզև ծառայի կողմից:

Ջէյնար. (Ցնցուկով ապշած, ակամայից) Ի՞նչպէս, դու...

(Նրքն իրան իշխելով) Վերջապէս:

Սուլէյման-խան. Քանի տարեկան է նա:

Օթար-բէկ. Տասնուվեց:

Ջէյնար. Տասնութ:

Օթար-բէկ. (Շփոթուելով) Շատ կարելի է, թագուհի: Ես իսկի իմ տարիքը չեմ յիշում, ո՞ւր մնաց որ մի երեխայ աղջկայ տարիքն յիշեմ: Բայց նա դեռ այնքան մատղաշ է երևում, որ երկիւղ էի կրում քո գայրոյթը շարժել, զօրմուր արքայ, այդպիսի մի անարժան պարզև բերելով քեզ:

Սիւլէյման-խան. Շատ խորամանկն ես, քարթալիսացի:

Օթար-բէկ. Ո՞վ ամենատես և ամենագէտ. ի՞նչ է իմ խո-

րամանկութիւնը քո իմաստութեան առաջ: Իրաւ է, առաջին տարիները ես կռիւ էի մղում քո դէմ—խաւարը կուրացրել էր իմ աչքերը: Բայց միթէ ես չէի առաջինը Գիւրջըստանի տէրերից ու իշխաններից, որ եկայ քո բարձր դրան շեմը և մերկացրած գլուխս խոնարհեցի քո սրի առաջ: Ո՞վ իւր հետ բերեց թէ Մուխրանի բատոնին, թէ իշխան Յիցային, թէ ըմբոստ Սմբատին և թէ լեռնային այլ պետերին: Երեք օր քաղցած-ծարաւ մենք ընկած էինք քո դրան առաջ և հլու-հնազանդ՝ մահուան էինք սպասում: Դու ներումն շնորհեցիր մեզ, և ես քո կամքով ընդունեցի յաղթական Իսլամը: Այն օրից համարեա քսան տարի է անցել: Յիշիր, ո՞վ Ալլահի սուրբ, և ասա—ո՞վ է ինձանից աւելի հաւատարիմ ծառայում քեզ: Մուխրանի բատոնը փախաւ Իմերէթ, Յիցան մեռաւ, իսկ չարանեղ Սմբատը միացաւ անհաւատարիմ Օրբելիանի հետ և թափառում է Եաղլուշի լեռներում՝ յարձակումներ գործելով քո հաւատարիմ ծառաների վրայ, որպէս ինձը գառների վրայ: Նրանց մօտ են վագում և այն քրիստոնեաները, որոնք առերես և իմ կատաղութեան երկիւղից ընդունել են Իսլամը: Նրանց մօտ են ապաստան գտել իմ ձեռքից ազատուած քրիստոնեայ տէրաէրներն ու վանականները: Միթէ ես կը սկսեմ խաղախութիւն բանեցնել քո առաջ իմ մի աղջկայ համար, երբ ես հօգիս, և՛ սուրս, և՛ ոյժս—բոլորն էլ դրել եմ քո յաղթական ոտքի տակ:

Ջէյնար. Մտրուկը իւր ծառայութիւնների հաշիւն է ներկայացնում իւր տիրոջը: Ի՞նչ ես դու, արքայական ոտքի փոշի: Ի՞նչ է քո ոյժը մեր արար գինւորների և մեր զըզըրաշների առաջ: Կամ, գուցէ, դու կարծում ես, որ դեռ մինչև հիմայ էլ քո այն վրացի լակոտին ես ծառայում, որին դուք, իշխաններդ, ստիպում էիք դողալ ձեր կամակորութեան առաջ, որին պահում էիք գահի վրայ միայն այն պատճառով, որ Ամիրախվարը վախենում էր՝ մի գուցէ՛ իր տեղ գահ նստէ Օրբելիանը, Օրբելիանը վախենում էր Սմբատից, Սմբատը—Յիցայից: Դուք ձեր գիշատիչ ատամներով զանազան կողմեր էիք քաշքշում թագաւորական գահի գորգը. իսկ նրա վրայ, որպէս մի խաղատիկին, նստած էր ձեր աղայամիտ թագաւորը: Սիւլէյմանն իր մի շնչով ընկճեց, արորեց ձեզ ամենքիդ. նրա սրի լոկ մի շաչիւնից թռան ձեր գլխները որպէս ոչխարների գլխներ: Եւ թող զգոյշ լինեն նրանք, որոնց գլխները դեռ ազատ են: Ողորմած է Սիւլէյման արքան: Օ՞, եթէ նա իմ խօսքը լսէր, վաղուց վրաց իշխաններն ու աղնա-

ուրները\*) քափ-քրտինք մտած՝ գետինը վարելիս կը լինէին արաք վերակացուների խարազաններէ տակ: Իսկ դու, որ հարեմի համար ծախեցիր քո խիղճը, դու միայն աղաչում պաղատում էիր, որ քեզ չզրկեն գինի խմելուց: Դու չգիտէիր որը գերադասել՝ հարեմը—գինուց, թէ գինի՞ն—հարեմից: Եւ, անկուշտ շան նման, ձեռք ու ոտք լիզելով՝ դու ստացար և՛ մէկը, և՛ միւրը: Ինչո՞վ ես դու պարծենում: Նրանով, որ ինքդ գինեմով ու զեղխաբարոյ, վախենալով մի գուցէ պատւից ու կեանքից զրկուես, փորսոյդ ես տալիս անյաղթի ոտքերի տակ: Երանի՛ Իսլամին, որի պահապանը գինու կարաս է կտրած:

Օթար-բէկ. (Աշխատելով կտակ անել) Ծերացել եմ, տիրուհի: Գինին գլուխս տաքացնելով, և՛ բազկիս է ոյժ տալիս՝ ի փնոս Իսլամի: Ես այս տեսակ մի չափ էի ընտրել ինձ համար—ի՛նչքան խմեմ, երկու անքան անհաւատի արիւն թափեմ: Շատ կարելի է, այդ չափը իմ կողմը ծռէ մարգարէի կշեռքի թաթը. օրհնեալ լինի նրա անունը:

Սիւլէյման-խան. Դու ծիծաղում ես, Օթար-բէկ:

Օթար-բէկ. Այո, ծիծաղում եմ, տէր իմ: Միայն շներն ու չարագործներն են, որ չեն ծիծաղում, իսկ մաքուր սրտով մարդը միշտ ժպտալով է ուրախացնում իր պետի սիրտը: Համ էլ տխրելու ինչ ունեմ: Երկնքումն է գրուած մեր ամենիս վիճակը, նրան փոխել չէ կարելի: Եթէ ինձ վիճակուած է զո՞հ գնալ քո կամ թագուհու զայրոյթին— պատրաստ եմ մեռնելու նոյն ժպիտը երեսիս, որովհետեւ իմ խիղճը մաքուր ու արդար է քո առաջ (անվեներ նայում է նրա աչքերի մէջ: Լուռիւն):

Սիւլէյման-խան. (Վերկենալով) Կատարիւր տուած հրամաններս: (Աչքերը շողացնելով) Եւ առանց խարդախ ճանապարհների: Ղարա-Իսուֆ... Այսօր դարձեալ զանգակների ձայն հասաւ ազանջիս. զահէս գնացել է այդ ձայնից: Գնա՛ս ասա՛ իմ կողմից Վրաստանի կաթողիկոսին, որ ես փոխում եմ իմ տուած իրաւունքը՝ զանգակներ խփելու Սիոնում, Անչիսխաթում և ամբողջ Թիֆլիսում: Թող առանց զանգակների աղօթք անեն: Այդ էլ լաւ է նրանց համար:

Ղարա-Իսուֆ. Նա առաջ կը բերէ դաշնագիրը, տէր: Վաղը նրանց գատիկն է:

Սիւլէյման-խան. Մարգարէն ասել է—Իսլամը քանդում է ամեն տեսակ դաշնագիր և փոխում է սրտերը: Ասա նրան, եթէ դարձեալ լսեմ այդ ձայնը, կը հրամայեմ թնդանօթներ ձուլել նրանց զանգակներից, իսկ եկեղեցիներն ախոռատներ

\*) Ազնուութ—ազնական:

կը դարձնեմ, ինչպէս որ Մետեխի տաճարը վառողի պահեստ դարձրի (Ղարա-Իսուֆը խորը զրուէ է տալիս եւ դուրս է գնում):

Օթար-բէկ. Էլ ի՛նչու յետաձգել, ո՞վ մեծդ արքայ: Թո՛ղ տուր, ես իսկոյն չափարներիս հետ միասին բոլոր զանգակները հաւաքեմ ու բերեմ այստեղ, ամբողջ:

Ջէյնար. Դու Թիֆլիսի զանգակների հոգսը մի քաշիր, Օթար-բէկ: Մենք առանց քեզ էլ կարող ենք այդ անել: Կամ, գուցէ, նրանք դեռ հանգիստ չեն տալիս քո ականջներին և քո մէջ զարթեցնում են այն, ինչ որ դու ուզում ես մոռացութեան տալ:

Օթար-բէկ. (Նարձեալ զունատուում է եւ զրուխը Թափ է տալիս) Ո՛չ, թագուհի: Այն, ինչ որ մոռացուել է—մեռած է, և մեռածը կենդանացնել չկարողացան նոյնիսկ հազարաւորների հառաչանքներն ու պաղատանքները, ո՛ր մնաց՝ որ այդ պղնձէ կաթսաների ձայնը:

Սիւլէյման-խան. Հետեիր ինձ, Ալ-Ռազաբ: (Վուրս են զընում: Ալ-Ռազաբն ու պահակները հետեւում են նրան):

III

Ջէյնար. (Օթար-բէկին) Սպասիր, Օթար-բէկ: Կամ, կարելի է, շտապում ես հասնել Օրբելիանի խնջոյքին: Ատում են, նա իր հրոսակների խմբով թափառում է այստեղ, մօտերքում:

Օթար-բէկ. Ես դաւաճանների մասին մտածել անգամ չեմ ուզում, թագուհի:

Ջէյնար. Բայց դու քո մասին հօ մտածում ես:

Օթար-բէկ. Ես դաւաճան չեմ: Ի՞նչով հաւատացնեմ քեզ, որ ես հաւատարիմ եմ:

Ջէյնար. Ո՛ւմ:

Օթար-բէկ. Իմ տիրապետին և քեզ:

Ջէյնար. Նոյնիսկ երկուսիս:

Օթար-բէկ. (Չհասկանալով) Իմ թագաւորն ու թագուհին անբաժան են ինձ համար: (Յանկարծ) Ես հէնց զրա համար էլ չէի շտապում Գայիանէին բերել Սիւլէյմանի մօտ. ես քո բարիքն էի ցանկանում, թագուհի: Մենք, ձերացած մարդիկս, անչափ սիրահար ենք մատաղ զեղեցկութեան: Բայց դու ինքդ կամեցար այսպէս. դու ինքդ ցոյց տուիր Գայիանէին: Ուրեմն մի մեղադրիր ինձ:

Ջէյնար. Նշանակում է՛ դու իմ հոգան էիր քաշում: Ծնորհակալ եմ, իմ վաղեմի ծառայ: Իսկ ես կարծում էի, նախկին

իշխանական պատերի մնացորդն է խօսում քո մէջ: Չէ որ Գայիանէն քո միակ աղջիկն է:

Օթար-բէկ. Ո՛չ, թագուհի...

Ձէյնար. Գիտեմ: Իմ խօսքը այն միւսների մասին չէ: Մարիամից, Մուխրանի բատոնի դատեր Մարիամից ծնուածը— միանկն է:

Օթար-բէկ. (Իողորջ ձայնով) Միանկն է...

Ձէյնար. Պատմիր ինձ նրա մասին: Նա բարձրահասակ է, վայելչակազմ է:

Օթար-բէկ. Վայելչակազմ է... և բարձրահասակ է:

Ձէյնար. Ես յիշում եմ նրա աչքերը:

Օթար-բէկ. Օ՛, նրա աչքերը... Ո՛չ, նրա աչքերը լաւ չեն, թագուհի:

Ձէյնար. Սո՛ւտ ես ասում: (Օթար-բէկն աչքերը կախում է) Նրա մայրն այնպիսի աչքեր ունէր, որոնց նմանը էլ չես տեսնիլ քո ամբողջ հարեմում:

Օթար-բէկ. Հայրը դատաւոր չէ իր աղջկայ գեղեցկութեան, թագուհի: Միայն բնաւորութիւնը տղամարդի բնաւորութիւն է, անվեհեր է և... (դժուարանալով) գոռոզ: Որսի սիրահար է, անմարդ ձի հեծած՝ գազանի ետեից է ընկնում, թըռչում, սլանում է, ասես, քամի լինի: Վախենում եմ, շահն-շահը չը հաւանի այդպիսի բնաւորութիւն (աղիքսանալով նայում է Ձէյնարին):

Ձէյնար. (Աչքը չնետցնելով նրա երեսից) շահն-շահը կը մեղմացնէ նրա բնաւորութիւնը: Երազի պէս յիշում եմ, ինչպէս քսան տարի առաջ նախկին թագաւոր և իմ ամուսին Թէյմուրազը ցոյց տալով քեզ իր մանուկ որդին՝ ասաց—Օթար, թող կինդ հարսնացու ծնի սրա համար: Երեի, դու այժմ աւելի կը գերադասէիր, որ աղջիկդ փոքրիկ վրաստանի թագաժառանգի կինը լինէր, քան թէ աշխարհակալի հարեմի զարդը:

Օթար-բէկ. (Կէմքը միայնած, հայեացքով արեւմտ է, որ նա մեղրանայ իրան) Մենք ամենքս էլ Ալլահի և նրա շուքի ըստրուկներն ենք այս երկրի վրայ:

Ձէյնար. Ի՞նչ ազատ վրացու պատասխան:

Օթար-բէկ. Ի՞նչ փորձում ես, թագուհի: Բայց եթէ քեզ համար թանգ է քո որդու յիշատակը...

Ձէյնար. (Ստանուծեամբ) Ի՞նչով ես դու լաւ ինձանից: Ի՞նչու իմ որդին, փոխանակ թագաւորելու վրաստանում, նիրհում է գերեզմանում, իսկ քո աղջիկն ազատ թռչկոտում է և ազատ շնչում հայրենիքի օդը: Ես շտապով մոռացայ իմ որդուն, դու էլ շուտով կը մոռանաս քո աղջկանը: Եւ այդ քեզ

համար աւելի հեշտ է: Ի՞նչ ունես տունուտեղ՝ լի կանանցով, հարձերով ու ստրուկներով, այնտեղ առատ է գինին, այնտեղ տիրում է և՛ հրճուանք, և՛ վայելչութիւն: Ի՞նչ կը կոչուես և՛ հայր փառելի հարձի—էլ ի՞նչ պատիւ է պէտք ուղղահաւատ վրացուն: Իսկ եթէ աղջիկդ կարողացաւ փառելի հարձի սիրտը շահել և նրա պաղած արիւնը տաքացնել, այն ժամանակ էլ ո՞վ կը համարձակուի ձեռք տալ քեզ, դիպչել քո մէջ հատ մազին: Ի՞նչ ապերախտ ես թէ դէպի բախտը, թէ դէպի ինձ, Օթար-բէկ: Ետապիր, աղջկանդ բեր այստեղ: Ի՞նչ մեզ օգնեցիր, որ փառելի հարձի ոտքի տակ դնենք մի ամբողջ քրիստոնեայ ժողովուրդ, մենք էլ անվարձ չենք թողնի քեզ—մենք էլ քո սիրասուն աղջկանը կը դնենք նրա ոտքի տակ: Իսկ իմ որդին գերեզմանումն է, և ես մոռացել եմ նրան: Ո՞րքան զօրք ունես դու Գորիում:

Օթար-բէկ. Հինգ հազար ձիաւոր:

Ձէյնար. Վրացիներ շատ կան նրանց մէջ:

Օթար-բէկ. Համարեա բոլոր հասարակ ձիաւորները վրացիներ են: Արաբներն ու պարսիկները կառավարում են զօրքերը:

Ձէյնար. Ի՞նչ պատասխանատու ես նրանց հաւատարմութեան համար:

Օթար-բէկ. Գլխովս, թագուհի: Նրանք ուրիշ տեղ չունեն գնալու:

Ձէյնար. Հապա Իմերէթ:

Օթար-բէկ. Այնտեղ իշխում է Ախալցխայի փաշան: Իսկ թուրքերն ինչո՞վ են առաւել պարսիկներից... (Ուշքի գալով) Այսինքն ուզում եմ ասել վրացիների, քրիստոնեայ ստրուկների համար... թող նրանք փառելի հարձի ոտքի հողը գառնան անիծուած սիւնիների հետ միասին:

Ձէյնար. (Զսպիլով սրտի գոնունակութիւնը) Վատ ես կեղծաւորում, ո՞վ քաջ Օթար-բէկ: Բայց լաւ ես շողորթում: Եւ այդ է միայն քեզ փրկողը: Գնա՛ խաղաղութեամբ, Օթար-բէկ: Ես չեմ մոռանալ քեզ: Գնա՛, խմիր, զուարճացիր, փայփայիր կանանցդ և ծառայիր մեզ հաւատարիմ շան նման: Էլ ի՞նչ ես ուզում, Օթար-բէկ:

Օթար-բէկ. Թող կեանքիդ օրերը երկարեն, թագուհի (զուրս է գնում՝ գլուխը խմարնած):

IV

Ձէյնար. (Իսպառին) Իսպառն: Եւ սո՛ւ այն Օթարն է, այն անվեհեր Օթարը, Թէյմուրազի աջ թե՛ր, վրաստանի առիւծը:

Իսախար. (Չայնը խուլ ու փնջուած: Հայեացքը խոր ու կենտրոնացած) Քանի կրակոտ ձին բեռան տակ է, նա ուղտի նման է, նա չի կարող արշաւել: Դէն գցիր նրա մէջքից այդ խայտառակութեան բեռը, և տես, ինչպէս նա կը սկսի խաղալ ու թռչկոտել:

Ձէյնար. Նա ինքն է տալիս իր աղջկանն առանց որևէ դիմադրութեան: Նա ինքն է առաջարկում պոկել, փշրել մեր դարաւոր եկեղեցիները դանդակները, այն եկեղեցիները, որտեղ նրան մկրտել են, պսակել են: Ես նրան անպատում էի—նա իմ ոտքի տակի հողն էր լիզում և, որպէս մտրակի տակ ընկած վախլուկ շուն, և՛ կաղկանձում էր, և՛ պոչն էր խաղացնում, և՛ գալարում էր: Եւ դա Օթարն է: Նա ինչ աջակից է նրան: Նա ինչ նեցուկ է... Նա կը դաւաճանէ, Իսախար, նա կը դաւաճանէ:

Իսախար. (Գլուխը շարժելով) Ո՛չ: Եթէ որ անցնի մեր կողմը—չի՛ դաւաճանիլ:

Ձէյնար. Ամեն ինչ մեռել է նրա մէջ, ամեն ինչ, բացի արբեցութիւնից, զեղխութիւնից և փառքի ծարաւից: Ստրկութիւնը սպանել է նրա մէջ սիրելու ընդունակութիւնը: Միթէ ամբողջ Վրաստանն էլ այդ վիճակումն է:

Իսախար. Իմացել ես ինչ է պատահել, թագուհի: Սիւլէյման-խանը հրամայում է, որ մզկիթ շինեն Սէյդաբադում: Ժողովուրդը վրայ է թափւում, ջարդում կոտորում է քարտաշներին և ինչ որ պատրաստի, տաշած քար է լինում, բոլորն առնում, ամուսն է շուրջ: Մինչև որ պարսիկները բերդից վրայ են հասնում ջարդի տեղը, ամեն բան արդէն վերջացած է լինում ու ժողովուրդն էլ ցրուած: Հիմայ անիծեալները քաղաքն ընկած՝ դէս ու դէն են վազում, մեղաւոր ու անմեղ չեն հարցնում, տանում են ու Ղարա-Իւսուֆի չար դատաստանին յանձնում: Ունեւորները փողի շնորհով գլուխները մի կերպ ազատում են այդ ազան շան ձեռից, իսկ չունեւորները մահուան պատիժ են կրում, եթէ հաւատները չեն փոխում:

Ձէյնար. (Վատուած աչքերով) Ո՛վքեր են, ինչ մարդիկ են դրանք:

Իսախար. Շրջակայքի գիւղացիներ, հովիւներ, հայ արհեստաւորներ, այգեպաններ, համքարաւորներ—սով գիտէ, էլի՞ սով. Ժողովուրդ:

Ձէյնար. (Աստուաղին) Իսախար, էլ յետաձգել չեմ կարող, սիրտս չի համբերում: Իմաց տուր Անանիային—թող բերէ նրան Գորի, Օթարի մօտ: Ես պէտք է տեսնեմ նրան. նա

է իմ յոյսը, իմ սիրան, իմ արիւնը. նա է Աստուծոյ ընտրեալ զինւորը, Վրաստանի փրկութիւնը:

Իսախար. Ժամանակ է, ժամանակ է:

Ձէյնար. Քսան տարի է, քսան տարի, Իսախար: Օ՛, ինչպէս նա թրտիրտում ու լալիս էր, ինչպէս չէր ուզում Անանիայի մօտ գնալ այն անիծեալ գիշերը: Ես պոկեցի նրան իմ կրծքից—և քսան տարի չէի համարձակւում նայել նրա պատկերին... Ո՛հ, եթէ գազան Սիւլէյմանն իմանար, որ նա կենդանի է... Ժամանակ է, ժամանակ է, Իսախար: Իմաց տուր, թող Անանիան մեր գաւաղներին բերէ Օթարի տունը: Ես այնտեղ կը լինեմ: Իսկ եթէ Օթարն, իբրև վրացի, դեռ չի մեռել բոլորովին, նա կ'ընկնէ նրա ոտքերը, նրա մէջ կը դարթնէ հաւատարիմ զինւորը, որ պատրաստ է կուել, կեանքը զոհել Աստուծուն, հայրենիքին, մատաղահաս թագաւորին:

Իսախար. Կամաց: Ո՛րքան մօտ է փոթորիկը, այնքան խորն է խաղաղութիւնը: Ո՛րքան մօտ է ժամը, այնքան լուռ պէտք է լինի լեզուն (գլուխը բարձրացնելով): Պայծառ է փայլում լուսինը, իսկ Մետեխի ետեից ամպն է բարձրանում: Քամին էլ դադարել է: Լսում ես, ինչ խաղաղութիւն է: Գիշերս փոթորիկ կը լինի:

Ձէյնար. Ա՛խ, երանի՛, երանի՛ շուտ գար այդ գիշերը, այդ անեղ, այդ զարհուրելի գիշերը՝ կրակուած ու բորբոքուած Աստուածային ցասման շանթերով:

(Բացում է դուռը. դրան մէջ երևում է Սիւլէյման-խանը: Իսախարը դարձեալ բաշում է բեմի խորքը: Ձէյնարը կանգնած է՝ աչքերը վեր ուղղած, շողուած լուսնի փայլով):

V

Սիւլէյման-խան. Այդ դ՞ու ես, Ձէյնար:

Ձէյնար. Ես եմ, տէր իմ:

Սիւլէյման-խան. Օղը ծանր է, որպէս կապար: Օթար-բէկը գնաց:

Ձէյնար. Գնաց, տէր իմ:

Սիւլէյման-խան. (Նստում է Թախտի վրայ: Առջը կանգնած է Ձէյնարը: Խորքում—Իսախարը) Ձէյնար, ես այլևս չեմ հաւատում նրան: Ալ-Ռազաքին պատուիրեցի, որ ձիաներ և շքախումբ պատրաստէ քեզ համար: Դու կը հետեւս Օթար-բէկին, Ձէյնար: Նայիր, աչքդ ու ախանջդ հարիւր արա: Իմացիր ամեն բան (մտածմունքի մէջ է ընկնում):

Չէյնար. (Սիւլէյմանի ոտքերի սուաշ խոնարհած) Կիմանամ, սով իմ տէր ու տիրական: Միթէ իմ սիրտն ինձ աւելի առաջ չի ասիլ այն, ինչ որ աչքս պէտք է տեսնէ և ահանջս լսէ:

Սիւլէյման-խան. Գիշերներն ինչ որ ձայներ են լսուում անկողնիս շուրջը: Աստղերն աղօտանում են, երբ ես նայում եմ նրանց:

Չէյնար. (Լարուած ուշով լսում է) Աստղերն աղօտանում են: Իսկ ինձ համար նրանք աւելի և աւելի պայծառ են շողշողում: Ես իմ մէջ կրում եմ քո հոգին. ես երկիւղ չունեմ քո կեանքի համար:

Սիւլէյման-խան. Հետևի՛ր Օթար-բէկի ամեն մի քայլին: Եւ եթէ մի թեթև լուր աննի ահանջդ, որ նա յարաբերութեան մէջ է Եաղլուշի սարերում բուն դրած ապստամբների հետ, կամ որևէ կապ ունի Իմերէթի թագաւորի, կամ Ախալցխայի, կամ Երևանի սարգարի հետ,—հրամայիր իսկոյն, որ հէնց քո աչքի առաջ սրախողխող անեն դաւաճանին, և նրա արիւնաշաղախ դրլուխն ուղարկիր ինձ:

Չէյնար. (Հաղիւս դպրած ուրախութիւնով) Հեռո՛ւ թէ մօտի՛կ քեզանից՝ իմ միակ երջանկութիւնը քեզ ծառային է, սով իմ թագ ու թագաւոր: Իսկ իմ սիրոյ միակ վարձը—քո քնիցը հայեացքը, քո ժպիտը, քո հանգիստը:

Սիւլէյման-խան. Ով հաւատում է կնոջը, նա ինքն է իր ձեռքով կտրում այն ճիւղը, որի վրայ նստած է: Բայց քեզ, Չէյնար, ես հաւատում եմ, որովհետև... եթէ ես կորչեմ, ինձ հետ կը կորչես և՛ դու:

Չէյնար. Ի՞նչ եմ անում ես կեանքն առանց քեզ, սով կեանքիս լոյս:

Սիւլէյման-խան. Քո գեղեցկութիւնն այժմ, Չէյնար, աշան օրերի գեղեցկութիւն է. նա չի փրկիլ քեզ... Քեզ ատում են Գիւրջըստանում, այդ պատճառով էլ ես հաւատում եմ քեզ:

Չէյնար. Կեանքիս երկիւղից չէ, որ ես աչքիս լոյսի պէս պահում-պահպանում եմ քեզ: Երբ դու Սողանլուխի կուից յետոյ մօտեցար Թիֆլիսին, ես կարող էի փախչել Իմերէթ, Մենգրելիա, Գուրիա... Ինքը Մոսկովի թագաւորը խոստանում էր ինձ այն ժամանակ իր օգնութիւնը: Բայց քո համբաւը լցրել էր իմ սիրտը: Քնած թէ արթուն՝ ես քեզ էի տեսնում իմ երազներում, իմ անուրջներում: Եւ, յիշում ես, ես ծունկ իջած քո նժոյգի առաջ՝ իմ ձեռքով մատուցի՛ քեզ ամբողջ բանալիները: Մահուան և իշխանութեան փայլն էր այդ բոպէին պսակում քո ճակատը: Երբ դու թեքուցիր դէպի ինձ, ասես, փայլակը շանթեց իմ կուրծքը:—Անապատի առիւծն է քո առաջ,

—ասում էր ինձ սրտիս ձայնը:—Նա յաղթեց, նա տիրեց աշխարհը. ի՞նչ է քո սիրտը, որ դիմադրէ նրա հայեացքին: Եւ ես սղջը, սղջը տուի քեզ—և՛ հաւատս, և՛ միտքս, և՛ կեանքս, և՛ հոգիս ու մարմինս: Աչքս անխուփ՝ ես հսկում էի քեզ գիշերները, խոնարհած քո գլխավերևը: Ես քո բարկութեան և աւերմունքի սլաքներն ուղղում էի այն մարդկանց կրծքերին, որոնք մի ժամանակ մեծացրել ու փայփայել էին ինձ և խոնարհուել իմ առաջ: Ես՝ թագաւորի աղջիկս և թագուհիս՝ սպասաւորում էի քեզ, որպէս սարկուհի. իսկ դու գիտես, որ ինձ օտար է մահուան երկիւղը և հպարտ անհնազանդ արիւն է հոսում իմ երակներում: Դու ինքդ էլ հասկացար այդ. երբ քո սիրոյ կիրքը սառաւ դէպի ինձ, դու թոյլ տուիր, որ ես խորհրդակից լինեմ քեզ, մասնակից լինեմ քո գահին և այդ գահը բազմեմ քեզ հետ միասին, քո կողքին: Բայց ի՞նչ եմ անում ես այդ իշխանութիւնը (խանդուութեամբ): Ես սղջը կը տայի, որ դու առաջուայ պէս թագցնէիր ինձ մարդկանց հայեացքից, տանջէիր քո խանդոտութեամբ, ենթարկէիր քո ներքինիների հսկողութեան: Միթէ ես այլևս գեղեցիկ չեմ այնքան: Միթէ չեմ կարող տալ քեզ այն վայելչութիւնն ու բաւակահանութիւնը, որ ստանում ես դու քո հարճերից (և ազանդութեամբ): Բայց դու այդպէս կամեցար—և ես հնազանդեցի քո կամքին: Ես ինքս սկսեցի հաճոյքի աղբիւրներ որոնել քեզ համար: Ես քեզ շրջապատեցի դրախտային հիւրիներով այս երկրի վրայ: Իմ փափագն էր, որ դու միշտ հանգիստ լինես, որ դու ճաշակես կեանքի վայելչութիւն. իսկ ես... ես... Օ՛, քո վայելչութեան ամեն մի գիշերը մահ էր ինձ համար, մահ: Դուք, տղամարդիկդ, միայն սիրային զուարճութիւնների էք ընդունակ, միթէ դուք գիտէք—ինչ ասել է սիրել:

Սիւլէյման-խան. Դու դեռ գեղեցիկ ես, երբ զայրանում ես:

Չէյնար. Ո՛չ, ես դեռ գեղեցիկ եմ, որովհետև սիրում եմ քեզ, ուզում եմ ծառայել քեզ... սողալ քո ոտքերի տակ և տիրանալ քո սրտին (փարում է նրա ծնկներով):

Սիւլէյման-խան. Ինձ դուր եկան երեկուայ սարկուհու հէքիաթները: Ուղարկիր նրան ինձ մօտ:

Չէյնար. Մենգրելի իշխանի պարզև՝ Ռուքայային:

Սիւլէյման խան. Չեմ յիշում ես նրանց անունները: Հետդ բեր և թաղը: Չով օդ է փչում: Կարելի է, ահանջ դրած նրա հէքիաթներին և քո թառի մեղմ նուազներին՝ աչքիս քուն դայ: Ես վաղուց է քուն չունեմ:

Չէյնար. (Համբուրելով նրա ձեռքերը) Իսկոյն, տէր իմ, իս-

կոյն (ղուրս է գնում. նրան հետեւում է Իսախարը: Գիմացի դռնից ներս է մտնում Ղարա-Իւտուֆը):

VI

Ղարա-Իւտուֆ. Ո՛վ արքայ, կաթողիկոսը սուրհանդակների բերանով հրաման ուղարկեց բոլոր քահանաներին ու բերերին \*), որ էլ զանգակներ չխփեն:

Սիւլէյման-խան. Պահակներն իրանց տեղումն են:

Ղարա-Իւտուֆ. Իրանց տեղումն են, տէր իմ:

Սիւլէյման-խան. Ձիաւոր գիշերապահներն ուղարկուած են քաղաքը շրջապայելու:

Ղարա-Իւտուֆ. Ուղարկուած են: Գարպանները փակուած են. իսկ թնդանօթները Մեաեխի ամրոցից ուղղուած են դէպի լեռներն ու քաղաքը:

Սիւլէյման-խան. Մզկիթը քանդողներէից շատ կան էլի՝ ձերբակալուած:

Ղարա-Իւտուֆ. Քսանօթ հոգու կողերից կեռեր անցկացրած՝ կախել տուի ամրոցի պատերից ի փառս Ալլահի: Յիսուանի գլուխը կտրեցի ու մարմիններն ածեցի աղբանոց: Երեսունուվեց հոգի էլ նոր բերին:

Սիւլէյման-խան. Էգուց նրանց գլուխներն էլ կտրել տուր Մէյդանում և յայտնիր ժողովրդին իմ հետեւալ հրամանը:—Թո՛ղ բոլոր բնակիչները մէջքերի վրայ մի-մի տաշած քար բերեն և դարսեն քանգած մզկիթի տեղը: Ամեն մի քարը պէտք է ունենայ կանգունուկէս երկայնութիւն, լայնութիւն և բարձրութիւն: Եօթ օր ժամանակ տուր նրանց:

Ղարա-Իւտուֆ. Փառք արդարագատիդ:

Սիւլէյման-խան. Օթար-բէկը ճանապարհ ընկաւ:

Ղարա-Իւտուֆ. Հէնց նոր նրա յետեից փակուեցին ամրոցի դարպասները:

Սիւլէյման-խան. Երեք օրից յետ ևս ուղարկում եմ նաև թագուհուն, որ նա սուր աչքով հետևի Օթար-բէկին: Իւսուֆ, դաւաճանութեան հոտ է փչում օդում (Ղարա-Իւտուֆը ցնցում է եւ դէմքը այլալուծ): Թագուհուն կ'ուղեկցէ Ալ-Ռազաքը:

Ղարա-Իւտուֆ. Ալ-Ռազաքը հաւատարիմ է, բայց յիմար է: Թագուհին խելօք է—Ալլահը երկարէ նրա կեանքի օրերը:

\*) Բեր—արեղայ, վանական:

Սիւլէյման-խան. Ի՞նչ ես ուզում ասել:

Ղարա-Իւտուֆ. Նա կը տեսնի ու կը կարգայ այն բոլորը, ինչ որ թագնուած կայ Օթար-բէկի սրտում և նրա շուրջը:

Սիւլէյման-խան. Յետո՛յ:

Ղարա-Իւտուֆ. (Մէջքը կորացրած) Ո՛վ Մերկուրիոսի աչք \*), այդպիսի մի գործի համար ես, իհարկէ, կ'ուղարկէի սիրելի կնիկանս, բայց օգնական կը տայի նրան և՛ այնպիսի մէկին, որը ձգտում է նոյնպէս սիրելի կին լինել: Ոսկին փորձում են քարով, կինը—կնոջով, ո՛վ իմաստութեան աղբիւր:

Սիւլէյման-խան. (Սուր հայեացքով նայում է Իւտուֆին) Գնա՛, քո խորհուրդը լա՛ւ է:

Ղարա-Իւտուֆ. (Համբուրելով Սիւլէյմանի ոտքերի առջևի գետինը) Թո՛ղ քո շուքը սքողէ համայն աշխարհը, ո՛վ Դեստոնի որդի (ղուրս է գնում: Ներս է գալիս Ջէյնաքը՝ իր հետ բերելով Ռուբայային: Նրանց ետեւից—Իսախարը):

VII

Ջէյնաք: Մօտեցիր, քո բախտաւորութեան գիշերն է հասել, Ռուբայա:

Ռուբայա. (Սնից դողողալով) Տիրապետն ահաւոր է և խստադէմ: Ես վախենում եմ...

Ջէյնաք. (Մօտեցնելով նրան կիսամեր նստած Սիւլէյմանին) Խոնարհուի՛ր արքայի ոտքերի առաջ, ո՛վ գեղեցկուհի, և պատմիր նրան հէքիաթներ: (Սիւլէյմանին) Դարձրու քո լուսաշող աչքը նրա վրայ, ո՛վ յաղթողը արքաների: Թարմ վարդ է սպասում քո հայեացքին, որ բանայ իւր անուշաբոյր թերթիկները (նուսնում է դէպի սրտազամբ, նստում է սիւնի մօտ, սրտերում: Իսախարը տալիս է նրան թաղը եւ կողքին նստում, ծնկներն առած ձեռքերի մէջ: Սիւլէյմանն յետ է քաշում Ռուբայայի երեսի քօղը եւ շոյում է նրա մազերը: Ռուբայան նստած է նրա ոտքերի մօտ, ձայնը դողում է. սիրուն երեսը գունատ է անից: Աչքերը պէծին են տալիս):

Սիւլէյման-խան. Ո՞րտեղ ես ծնուել:

Ռուբայա. Չգիտեմ, ո՛վ տէր: Յիշում եմ, փոքրիկ աղջիկ էի, երբ ինձ բերին Մհնգրեկիա: Ճանապարհը ծովով էր: Յետոյ մեծացել եմ այնտեղ, լեռներում, ծովի մօտերը:

Սիւլէյման-խան. Ո՞ւմնից ես սովորել քո այդ հէքիաթները:

Ռուբայա. Պառաւ կանանցից: Նրանք ինձ սովորեցրին

1002  
6035

\*) Մերկուրիոս—մոլորակ:



և՛ երգել, և՛ պարել: Ես ամեն բան գիտեմ քո սիրտը շահելու համար, ով տէր: Հրամայիր—պատմեմ քեզ այն հէքիաթը, թէ ինչպէս ծովարքայ Հողմը և Գուրիայի արքայադուստրը սիրեցին իրար:

Միւլէյման-խան. Պատմիր:

(Զէյնաբն սկսում է նուագել մի քնքոյշ եւ բուն կիրք արտայայտող արիւնկան մեղեդի):

Ռուքայա. Գուրիայի թագաւորը մի աղջիկ ունէր անքան սիրուն, անքան սիրուն, որ սարերի ձիւնը կապոյտ էր երեւում նրա լոյս ու ձերմակ պատկերի առաջ. երկար ու ճոխ ծամերը սև սաթից էլ ս՛և էին. նրան ծաղիկը դեղնում էր նըրա կարմրավառ շրթունքների փայլից: Երբ նա խոնարհուում էր փշեայ թփի վրայ, թուփն ալ վարդերով էր ծածկուում: Երբ նա ամբան շոգին ծով էր մտնում լողանալու, ալիքներից յամպարի ու նարդոսի անուշահոտութիւն էր բուրում: Դեռ տղամարդի երես չէր դիպած նրա երեսին: Նրա անարկու հայրը հարիւրերեք-աչքանի և երկուհարիւրմէկ-աչքանի հակմներ էր պահապան կարգել նրա չորս բոլորը: Բայց թեթև հովիկներն իրանց շնչով զովացնում էին նրա այտերը: Եւ անա նրանք թանն, սլացան Ղաֆ-գաղի \*) գագաթը և պատմեցին այդ աննըման գեղեցկութիւնն հէնց իրան Քարիին, որը թագաւոր էր բոլոր հողմերի ու զօրաւոր կործանիչ առագաստանաւերի: Եւ բորբոքուեց սէրը Հողմ-թագաւորի հօր կրծքում. նա փռեց իր սեւաթոյր թևերը և սլացան դէպի ծով: Եւ այդ գիշեր ծովափ չհասաւ ո՛չ մի առագաստանաւ: Հողմը դարաւոր կաղնիներով և մայրիներով դուրս հանեց պահապան դեերի աչքերը, քար ու աւազով կուրացրեց նրանց, նա պոկեց թագաւորի աղջկայ պալատի ծածքը, լուսաւորեց գեղեցկուհուն իր թևերի փայլատակուններով և ի՛նչ տեսնի—հիացքից ու բուն խանգից նրա ուշքը թռաւ—թագաւորի աղջիկը քնքոյշ թաղուած էր հրաշալի և չնաշխարհիկ թռչունների փետուրներից պատրաստած անկողնում (բուն կրքով, աւելի եւ աւելի համարձակ սկսում է փաղաքշանք ցոյց տալ Միւլէյմանին): Մաղերի փափուկ, սեւաթոյր ալիքները ծածկել էին նրա մարգարտափայլ մարմինը: Լեռնային դալարի անուշահոտութիւն էր բուրում նրա շունչը: Եւ բուն տարփանքով հառաչեց գեղանի Հողմ-թագաւորը, նրա հառանչանքից ծածանուեցին գեղեցկուհու ծամերը, և Հողմ-թագաւորը տեսաւ... (Յանկարձ լսում է զանգի մի հատ որոշակի, բայց անհամարձակ ու դողոջուն զարկ: Միւ-

\*) Ղաֆ-գաղ—էլբրուս լեռը:

լէյմանը խոռվուած բարձրանում է թախտի վրայից՝ յենուելով մի ձեռքին: Ռուքայան երկչոտութեամբ կայում է Միւլէյմանին: Միւլէյմանի դէմքն արտայայտում է կատաղի զայրոյթ):

Միւլէյման խան. (Ահեղ ձայնով) Ղարա-Իւսուֆ (Ղարա-Իւսուֆը ներս է վազում՝ սարսափից մեռելի գոյն ստացած): Այս ի՛նչ է:

VIII

Ղարա-Իւսուֆ. Մեծագօր տէր. մի զարկ էր միայն: Կաթողիկոսն անյապաղ սուրհանդակներ ուղարկեց ամեն տեղ: Նրանցից մէկն ուշացել է... էգուց նրանց Ձատիկն է:

Միւլէյման խան. (Սառն ու հանդիստ ձայնով) Առաւօտեան նամազին կաթողիկոսի գլուխը կը բերես ինձ: Եւ թող այդ գլխի գոյնն էլ այնպէս լինի, ինչպէս որ նրանց զատկական ձուրի գոյնն է: Ալ-Ղորանում ասուած է—վարուիր նրանց հետ այնպէս, որ նրանք օրինակ լինեն իրանց յետնորդներին: Գնան (զարձեալ թեք է ընկնում գահոյքի վրայ՝ դէպի իրան դրաւելով Ռուքայային): Շարունակիր, Ռուքայա:

Իսախար. (Ամացուկ Զէյնաբին) Այս քսաներորդ Ձատիկն է այսպէս անցնում:

Զէյնաբ. (Սկսում է նուագել) Վերջին Ձատիկն է այսպէս անցնում:

Ռուքայա. (Շարունակելով հէքիաթը) Եւ գեղանի Հողմ-թագաւորը տեսաւ...

ՎԱՐԱԳՈՅՐ

### ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Օթար-բէկի այգին, Գորու մօտերքում, Կուր գետի ձախ եզերքին: Բեմի խորքի մի մասը բռնում է աշտարակ, որի լայն պատշգամբը՝ գետնից մի չորս աստիճան բարձր՝ նայում է դէպի այգին: Աշտարակը յենած է կամարակազ սիւներին: Պատերի մէջ երկաթէ դռներ. լուսամուտները վանդակապատ:—Խորքում՝ վարդի և յասմիկի ծաղկավառ թփեր:—Բեմի խորքը ներկայացնում է գետի միւս կողմում գտնուող Ախալքալայի լեռները՝ ծածկուած անտառներով:—Գէպի աջ՝ խաղողապատ ծառուղի, որը հեռանում է խորքը և ծուում դէպի աջ: Ծառուղու համարեան հէնց մուտքի մօտ մի ահագին խոռոչաւոր ընկուզենի: Ընկուզենու տակ՝ գորգերով ու բարձերով ծածկուած լայն թախտ: Վառվառն, արև երեկոյ է. ժամի մօտ վեցն է:

### I

Օթար-բէկը մտահոգութեան մէջ ընկած՝ դուրս է գալիս տնից: Նրան հետևում է Բեսօն, նրա ծառան՝ անվեհեր եւ փոքր ինչ խորամանկ երեսույ:

Օթար-բէկ. (Անցնում է զայրացած եւ մտահոգ: Բեսօն կանգնած է՝ անփոթ դիրք բռնած): Ի՞նչ ես, շան աղայ, զգալով կանգընել առաջիս: Գլխիցդ բեզարե՛լ ես, հա՛:

Բեսօ. (Գլխարկը հանելով) Մոլորուել եմ, տէր իմ: Թէ որ դու պարսիկ ես, Աստուած չանի, որ գրակս հանեմ, թէ որ դու վրացի ես, Աստուած չանի, որ ծածկեմ:

Օթար-բէկ. Գինի բեր (նստում է թախտի վրայ, ծառի տակ): Մոլորուել եմ... Ես ինքս էլ եմ մոլորուել (Բեսօն բերում է զինի արծաթէ կուլայով՝ արծաթէ մատուցարանի վրայ: Օթար-բէկը կուլան քաշում է գլուխը. երկար կլկլացնելով՝ խմում է եւ ապա ակործանքից փրճուելով՝ կուլան յետ է տալիս):

Բեսօ. Ասում են, լուսաբացին, առաւօտուայ ժամը հէնց նոր սկսած՝ կաթողիկոսին սպանել են թիֆլիսում:

Օթար-բէկ. (Մտայ) Սպանել են: Թագաւորը հրամայել էր, որ քաղաքում էլ զանգեր չտան: Կաթողիկոսն էլ իսկոյն հրաման է ուղարկում ամեն տեղ, իսկ իր ժամկոչին մոռանում է հրաման տալու: Ժամկոչն էլ բանից անտեղեակ՝ զարկում է հէնց առաջին զարկի վրայ կաթողիկոսն ինքն է վեր վազում

զանգակատուն ու ժամկոչին ցած բերում: Բայց չափարները վրայ են հասնում և...

Բեսօ. Ասել է՝ մէկ անգամ է միայն զարկել:

Օթար-բէկ. Մէկ անգամ:

Բեսօ. Եւ էդ բանի համար կաթողիկոսին սպանել են:

Օթար-բէկ. (Աշխատելով զայրացած երեւոյ): Բա ի՞նչ:

Բեսօ (Գլուխը կախելով) Չէ, էնպէս, ուզում եմ ասել, դէ որ սպանուելը՝ սպանուել էր—թող կաթողիկոսն էլ մեռնելուց առաջ առնէր ու բոլոր զանգերը մէկ անգամից է՛նչպէս զընդացնէր, որ ձէնը երկինք հասնէր:

Օթար-բէկ. (Յանկարծ սկսում է դողալ, միայն առանց բարկութեան) Ես քեզ շամփուր կը քաշեմ ու խոզի պէս սաղ-սաղ կը խորովեմ: Ես քեզ շան ու կատուի հետ մի մեշոկում՝ ջուրը կը գցեմ:

Բեսօ. Երկուսից մէկը, տէր իմ: Կամ կրակը գցիր, կամ—ջուրը: Համա քո կամքն է:

Օթար-բէկ. Գինի (երկար խմում է):

Բեսօ. Ասում են, դժուար թէ քո հարկահանները, տէր իմ, էս անգամ կարողանան մի բեռը ոսկի ու երեք բեռը արծաթ հաւաքել: Բոլոր ժամերը թալանուած են:

Օթար բէկ. Հապա Սուրամի հրէաները: Բի՛շ ոսկի ու արծաթ ունեն:

Բեսօ. Բայց էլի երեք հաւատի հերիք չի անի:

Օթար-բէկ. (Պոժոռուած դէմքով) Ի՞նչ ես սուտ-սուտ դուրս տալի, խելան:

Բեսօ. Սուտ չեմ ասում, տէր իմ: Մատներովս եմ համբուում (Մատները մէկ-մէկ ծալելով): Մենք նրանց կողոպտում էինք, քանի Իսլամը չէինք ընդունել—էդ մէկ: Թուրքերը կողոպտում էին—էդ երկու: Պարսիկները կողոպտում էին—էդ էլ երեք: Ոսկին հօ խիար չէ, որ ամեն գարունքին բանի:

Օթար-բէկ. Հանաքի ժամանակն իմացիր: Մտրակի՛ ես կարօտել:

Բեսօ. Կորչի՛ նրան կարօտողը: Իմ յիմար խելքն է էդպէս կարում, տէր: Առաջ մենք նրանց պլոկում էինք, որովհետև նրանք մեր Քրիստոսին չարչարեցին: Իսկ հիմի էլ մենք ենք նրանցից վատ վարում Քրիստոսի հետ, հիմի ի՞նչ է պաճառը:

Օթար-բէկ. Բեսօ!

Բեսօ. Էն էլ սե՛մ համար—պարսիկներէ համար: Նրանք հօ իսկի ոչ մի իրաւունք չունեն: Ա՛յ երբ որ ջնուգները նրանցից մէկն ու մէկին կը չարչարեն, էն ժամանակ ուզում ես, կաշիները հանիր:

Օթար-բէկ. Ո՛ւմ պիտի չարչարեն, այ շուն:

Բեսօ. Թէկուզ հէնց գեղնած Սիւլէյմանին:

Օթար-բէկ. (Զարհուրած՝ վրայ ընկնելով) Պապանձուլիք, ա-  
նիծնած (փակում է նրա բերանը եւ չորս կողմն է նայում): Չէ, ես  
քեզ կախ եմ տալու:

Բեսօ. (Ազատուելով) Հիմի էլ վեց աղջիկ են ուզում, էն էլ  
սիրուն, կոյս-աղջկերք: Աորդ է, սիրուններ կային մեր մէջ էլ,  
համա շատ չքաշեց նրանց կոյս-աղջիկ մնալը: Իսկ էն օրուա-  
նից, որ դու ու ես Իսլամի լոյս ընդունեցինք, Քարթալիսիան  
զղլբաշ բարեկամներով լցրինք ու Վրաստանն էլ Գիւրջստան  
ենք անուանում,—էն օրուանից մի անգամ միայն մի կոյս-աղ-  
ջիկ տեսայ, էն էլ մի աչքը շիւ էր ու երկու հատ էլ երեխայ  
ունէր:

Օթար-բէկ. (Առշուկուշտ ծիծաղելով) Օ՛ճիս, Բեսօ, վերջը  
լաւ չի լինի:

Բեսօ. Արդար ապրողի վերջը միշտ վատ է լինում, տէր  
իմ: (Ճշտով եւ քահ-քահ ծիծաղելով՝ ձեռնդուրս դուրս է վազում Գայիա-  
նէն: Նա շատ գեղեցիկ է եւ վայելչակազմ. հագած է արեւելեան տարազի  
սպիտակ շոր. երեսը բաց է: Յետեւից ծածանում է երեսի ծածկոցը):

II

Գայիանէ. Չես գանի, Մայկօ, չէս գանի (երկար քորում  
է): Հայրիկ (միանգամից, լայն բացած թեւերով փամառում է Օթար-  
բէկի վրով եւ համբուրում է նրան հէնց այն միջոցի՝, երբ նա նոր պատ-  
րաստում է գինի խմել):

Օթար-բէկ. Այդ ի՞նչ տեղից դուրս պրծար: (Բեսօին)  
Կորիք: (Բեսօն հեռանում է):

Գայիանէ. Հայրիկ, Մայկօն գժուել է: Չեոք չի քաշում  
ինձանից. կպել է, ասում է՝ երեսդ ծածկի՛ր. ասես, Ախալցը-  
խայի թուրքի աղջիկ լինեմ: Դրանս էլ մի հաստիկ հրէշ են  
կանգնեցրել՝ ձվձվան ձայնով. ուզում էի այգին դուրս գամ,  
նա ձեռքերը փռած՝ առաջ կտրեց. ինչ որ բլբլում էր... երեւի  
պարսկերէն էր... ծիծաղելի էր: Ուզեցի մի կողմը հրեմ նրան,  
բայց այնպիսի ծիծաղաշարժ երես ունէր... Գժուածի պէս ըս-  
կեցի ծիծաղել. թուրացած՝ ընկայ գետին: Օ՛խ, հիմայ էլ ա-  
սանց ծիծաղի չեմ կարողանում յիշել (քորում է):

Օթար-բէկ. (Աշխատելով խիստ լինել) Ի՞նչպէս չես ամաչում,  
Գայիանէ: Իու արդէն մեծ աղջիկ ես... բայց երեխայի բաներ  
ես անում...  
Գայիանէ. Մի ինքդ պիտի տեսնէիր նրան, հայրիկ...

(Ճաղրելով՝ մեւացնում է ներքինու շարժումներն ու խօսելը): Հւ-բւ-  
լւ-բւ-լւ-բւ-լւ... Թշերը կախ ընկած՝ գողգողում էին, աչքերը  
ճպճպացնում էր... (աչքերը կիպում է): Հւ-բւ-լւ-բւ-լւ-բւ-լւ:  
Օ՛, Տէր Յիսուս-Քրիստոս... (Ճարունակում է կուշու-կուշտ ծիծաղի:  
Յանկարծ լրջուժեամբ եւ դայրոյթով): Մինչև որ ծիծաղեցս ուշքի կը  
գայի, նա առաւ ու դուռը վրաս փակեց: Երևակայի՛ր, հայրիկ:  
Սկսեցի ծեծել, աղաղակել, բարկանալ... Թէ մի ներս կը  
մտնէր, ես նրան ցոյց կը տայի, թէ ինչ է նշանակում Գայիա-  
նէի, իշխանի աղջիկ Գայիանէի երեսին դուռը փակել: (Հպար-  
տօրէն ձակասը կնձռելով՝ խտտահայեաց նայում է շուրջը: Օթար-բէկը նա-  
յում է աղջկանն անասելի վշտով եւ հիացքով): Ես այնպէս բարկացայ,  
որ քունս տարաւ: Երկւոր քնած էի... և տեսայ երազում—ձի  
էի նստել ու եղջերուի ետեւից ընկած՝ թռչում էի այնտեղ, մեր  
Շինդի սարերում... և եղջերուն, ասես թէ մօտ, շատ մօտ էր,  
ես էլ հէնց այն է հասնելու վրայ էի,—մէկ էլ տեսնեմ ձիուս  
առաջ ցցուեց այդ հաստիկ հւ-բւ-լւ-բւ-լւ-բւ-լւ-բւ-լւ-բւ-լւ-բւ-լւ-բւ-լւ-  
խրանեց. ես ցնցուեցի... ու յանկարծ զարթնելով՝ սկսեցի կան-  
չել—Հեւրշ, բռնիր... Դա իմ սիրած սև բարակն է, յիշում ես:  
Դու դեռ նոր այնպէս գովում էիր նրան... Նայեցի—ո՛չ Հելաշ  
կար, ո՛չ եղջերու. կողքիս նստած էր միայն պառաւ Մայկօն...  
Սկսեցի աչքերս տրորել. բան չէի հասկանում: Իսկ Մայկօն  
սկսեց էլի իր քարոզները: (Հեղնելով մեւացնում է) Սիրական  
աղջիկս, դու հիմի թագուհի պիտի լինես: Դու հիմի ծածկած  
երեսով պիտի մարդկանց երևաս: Հայրդ հրամայել է, որ էլ  
չվազվզես: Դու հիմի ծանր քայլերով պիտի ման գաս. դու պի-  
տի տանը նստես. դու պիտի... Լսում էի, լսում—ու մէկ էլ՝  
մի ոստիւնով թռայ պատուհան: Յած նայեցի՝ բարձր էր. իսկ  
պատուհանի առաջ, տեսնեմ, մի հին ընկուզենի: Մայկօի անի  
անին ու ընկուզենու վրայ թռչելու—մէկ եղաւ: Շուռ եկայ ու  
ձայն տուր—դէ, հիմայ բռնիր, Մայկօ: Ծառից վայր իջայ,  
հետքերը կորցնող նապաստակի պէս ծառուղուց ծառուղի մը-  
տայ, թփից թուփ անցալ—և անս քեզ մօտ եմ (զրկում է նրան):  
Դ՞ն էս հրամայել, որ ինձ չթողնեն սենեակից դուրս գալ: Դ՞ն:  
Չեմ հաւատում: Իսկ ինչո՞ւ Մայկօն ասում է, որ ես թագուհի  
եմ դառնալու: Ի՞նչ պէտք է անեմ թագուհի դառնալու համար:  
Շ՞ուտ կը լինի այդ: Ճշմարիտ է, որ դու այստեղ թագաւորիցն  
էլ մեծ ես: Ի՞նչ ես լուր, հայրիկ. ինչի՞ ոչինչ չես ասում,  
հայրիկ:

Օթար-բէկ. Այն, դու թագուհի կը լինես, Գայիանէ, ա-  
բար-աշխարհի հզօր թագուհի:

Գայիանէ. Ա՛խ, ի՞նչ լաւ կը լինի:

Օթար-բէկ. Միայն պէտք է ահանջ դնես իմ խօսքին, Գայիանէ: Դու տղայ չես, դու հասակ առած աղջիկ ես, պէտք է մոռանաս քո այդ տղայական սովորութիւնները—ձի նստելը չէրքէզի նման, գլխապատառ ձի չափ գցելը, որսի գնալը:

Գայիանէ. Ի՞նչ եմ անում ես թագուհի դառնալը, քանի որսի գնալ չպիտի կարողանամ:

Օթար-բէկ. Դու դեռ անխելք ես, Գայիանէ: Ի՞նչ եմ անում: (Յանկարծ սկսում է բղաւել) Հանրդ եմ, թէ՛ ոչ: Այդ սով էքեզ սովորեցրել—մէկ խօսքիս հարիւր պատասխան ես տալիս: Հանրդ եմ, թէ՛ ոչ: (Գայիանէն վախեցած՝ յետ է քաշում եւ լայն բացած աչքերով նայում է հօր վրայ: Օթար-բէկն ամբողջ հետապայ խօսակցութիւնըն առաջ է տանում խօսքի եղանակը հետզհետէ մեղմացնելով, համարեա զսպած հեկեկանքների հասցնելով) Մայկօն քեզ ասել է, որ ես հրաժայել եմ տանը նստես, երեսդ ծածկես, իսկ դու... դու պատահանից դուրս ես թռչում: Թռչուն ես, ի՞նչ է, որ ծառից-ծառ ես թռչկոտում:

Գայիանէ. (Արջատոն) Ոչ, ես թռչուն չեմ, բայց տանն էլ վազում չեմ նստի: Իսկ այս ծածկոցը... այս... Ի՞նչ է, ուզում ես, որ շունչ քաշել չկարողանամ... այ քեզ ծածկոց (պատուտորում է):

Օթար-բէկ. (Ապշած, ձեռները ծնկներին խփելով) Ա՛խ, դու... Ի՞նչպէս ես համարձակում:

Գայիանէ. Ես մեռել չեմ: Միայն մեռելների երեսն են ծածկում:

Օթար-բէկ. (Աշխատում է անաւոր լինել, բայց ակամայից զիսցած նայում է աղջկայ վրայ) Ես քո ձեռք ու ոտքը կը կապեմ: Ես քեզ նկուղը կը գցեմ, որ մկներ չկերակուր դառնաս:

Գայիանէ. Էլ ինչո՞ւ նկուղը: Ա՛ն սպանիւր (իրար են նայում):

Օթար-բէկ. (Նրկար պատուկայից յետոյ) Դէ, լաւ, լաւ. թող քո այդ կամակորութիւնը: Մօտ արի... Ահանջ դիր, ինչ որ ասելու եմ:

Գայիանէ. (Առանց մօտենալու) Ասա՛:

Օթար-բէկ. Քիչ առաջ, Գայիանէ, դու ինձ հարցնում էիր—ճշմարիտ է, որ ես այստեղ թագաւորից էլ մեծ եմ: Թագաւորից մեծ չեմ, զաւակս, բայց էլի ես մեր իշխաններից ամենամեծն ու ամենազօրեղն եմ: Իսկ ինչո՞ւ: Որովհետեւ ես միշտ խելքով եմ բան բռնել: Ես միշտ աշխատել եմ, որ իմ վիճակը լաւ լինի և... և... անս տեսնում ես, ի՞նչպէս լաւ է: Յիշում ես դու պապիդ, Մուխրանի բատոնին: Ի՞նչտեղ է այժմ

այդ ձերունին: Նա ապրում է Իմերէթում,—և վայ այն ապրելուն: Իսկ ի՞նչտեղ է Գուլբաթ Յիցան: Գլխատուած է: Ի՞նչտեղ է Օրբելեանը: Ի՞նչտեղ է Սմբատը: Նրանք անտուն-անտէր թափառում են սարերում ու աւազակութիւններ են անում: Իսկ միւսները: Ոմանց տուն ու տեղն է աւերուած. ոմանք էլ կեանքները ան ու դողի մէջ՝ ծառայում են... Ասենք, ես էլ երբեմն... Բայց դա քո գիտնալու բան չէ... Այն ինչ՝ եթէ ես բարկանամ, ես կարող եմ, սեւ էլ ուզում եմ, խեղդել, կախել, գլուխը կտրել: Դու կարծում ես, դա քիչ բան է: Իսկ ինչո՞ւ եմ ես այդ իրաւունքը վայելում: Որովհետեւ ինձ սիրում են թագաւորն ու թագուհին: Ա՛յ, թագուհին՝ որ թագուհի է—ես քեզ աննկու եմ նրա մօտ—նս էլ ուրիշների առաջ միշտ երեսը ծածկած է դուրս գալիս: Որովհետեւ կնկայ համար ամօթ է երեսը բաց ման գալ:

Գայիանէ. Ինչի՞ է ամօթ: Մենք ձեզանից սիրուն ենք: Դուք հօ չէք ամաչում: Իսկ թէ տեսնէիք շատ անգամ ի՞նչ կրեաներ էք ունենում—օ՛ Տէր Յիսուս-Քրիստոս:

Օթար-բէկ. Ի՞նչ ես հէնց Քրիստոս հա Քրիստոս... Աստուած մէկ է ամենքի համար... մեզ համար էլ... քեզ համար էլ... ամենքիս համար էլ... Ասա՛ Ալլահ, Ալլահ ասա՛:

Գայիանէ. (Վիրաւորում) Ի՞նչ է, ես թուրքի աղջիկ եմ:

Օթար-բէկ. (Սկսում է բղաւել) Վարդապետ ես գլխիս, ի՞նչ է, որ այդպիսի բաների մասին դեռ դատողութիւններ էլ ես տալիս: Ի՞նչպէս հրամայում եմ, այնպէս էլ աղօթք արա՛:

Գայիանէ. Չէ, հայրիկ, մեղայ կ'ասես: Ես այդ անել չեմ կարող: Աստուած ամենքից մեծ է, Նա հօրից էլ մեծ է: Չես հաւատում, հարցրու Մայկօին: Ես շատ եմ սիրում քեզ, հայրիկ: Դու ինձ շատ բաներ ես ընծայել,—և՛ ձի, և՛ որսկան շներ, և՛ անա այս գեղեցիկ շորը, և՛ այս մանեակը, և՛ էլի շատ բաներ... Բայց Աստուծոյ մասին, հայրիկ, Մայկօն քեզանից լաւ գիտէ:

Օթար-բէկ. (Պոռում է) Ո՞նց թէ ինձանից լաւ... Ո՞վ է ինձանից լաւ:

Գայիանէ. (Վստահ) Մայկօն: Նա ինձ միշտ ասում է—տղամարդկանց գործը պատերազմն է: Ա՛յ, քո հայրն, ասում է, նշանաւոր զօրավար է: Տղամարդիկ ժամանակ չունեն աղօթելու, ասում է: Իսկ մենք՝ կանայքս՝ համ մեզ համար ենք աղօթում, համ նրանց համար: Ա՛յ, հայր-Սաբան էլ, նա սուրբ մարդ է, թէև էլի որսորդ է, մի հասարակ էլ շուն ունի, բոլորովին հասարակ, բայց զարմանալի արագավազ, ասես կայծակ լինի:

Օթար-բէկ. Ի՞նչտեղ ես տեսել դու այդ Սարային: Ի՞նչտեղից ես դու նրան ճանաչում:

Գայիանէ. Նա թափառում է: Սեփական եկեղեցի է ունեցել, Աստուած վկայ. այրել են: Այժմ անտուն-անտեղ է և թափառում է: Նա ասում է, ուր էլ Տէր մեր Յիսուս-Քրիստոսը աչք է գցում, այնտեղ իսկոյն եկեղեցի է բանում. միայն մենք այդ եկեղեցին տեսնել չենք կարողանում, որովհետև մեղաւորներ ենք: Նա ասում է, այժմ այնպիսի ժամանակներ են, երբ պէտք է աղաչել Տէր Յիսուս-Քրիստոսին, որ նա շուտ-շուտ իր աչքը գցի Վրաստանի վրայ, որովհետև մերոնք էլ մոռացել են իրանց Աստծուն և փողի համար կամ երկիրդից ծախել են նրան պարսիկներին: Ի՞նչպէս ես դու այդ թոյլ տալիս, հայրիկ: Սարան հէնց որ մի տեղ կանգ է առնում, իսկոյն հանում է գիրքը, քար լինի թէ կոճղ՝ ծածկում է թաշկի-նակով և աղօթք է անում: Բայց նա շատ քաջն է: Մի անգամ ես ճանապարհս կորցրել էի, հեռացել որսկան շներիցս: Մէկ էլ տեսնեմ մի վարազ, մի ահագին, զարհուրելի վարազ, դուռնչե ամբողջապէս փրփուր կոխած՝ յարձակուեց վրաս: Ձիս ծառս ելաւ և ինձ գետին գլորեց: Մտքումս ասացի—կորսր, Գայիանէ: Այդ բոպէին՝ որտեղից որտեղ էր, տեսնեմ, Սարան, ասես երկնքից ընկաւ կամ գետնից բսաւ: Դանակն հանելն ու վարազի այստեղին (ցոյց է տալիս սիրտը) կպցնելը մէկ եղաւ. վարազին տակը դրեց, ես էլ վեր թռայ տեղիցս և օգնեցի նրան: Սարան շուտ-շուտ է գալիս մեզ մօտ՝ Շինդ: Իսկ քեզանից նա վախենում է, թէպէտ ես նրան միշտ ասում եմ, որ դու միայն աստիկ բղաւել ես սիրում, բայց ոչ ոքին ձեռք չես տալիս:

Օթար-բէկ. Լո՛ւր (անցուղարձ է անում աստիկ շփոթեամբ) Լսիր, Գայիանէ: Ձի նստել է, որսի գնալ է, Սարային ճանաչել է—այդ բոլորը պիտի մոռանաս, այդ բոլորին պիտի վերջ տաս: Վազը չէ, միւս օրը քեզ տանելու եմ թիֆլիս: Եւ եթէ դուր գաս թագաւորին ու թագուհուն, նրանք քեզ կ'ուզարկեն Իրան, շահն-շահի ապրած երկիրը: Փաթիշահը կ'սուրբեան կ'առնի քեզ, և այն ժամանակ ինքզ կը լինես Իրանի ու Վրաստանի թագուհին և հօրդ տիրուհին:

Գայիանէ. (Ուշ ու միտքը լարելով) Իրանի թագուհի: Փաթիշահի կի՞ն: Ի՞նչտեղ է Իրանը: Ո՞վ է փաթիշահը: Ես չեմ ուզում... ես չեմ ուզում...

Օթար-բէկ. (Շտապով) Դու կ'ապրես ոմկեշէն պալատում. դու կը պառկես մետաքսէ ու թաւշէ անկողնում: Հարիւրաւոր ստրկուհիներ կը խոնարհուեն քո ոտքերի առաջ և կը սպասեն քո հրամանին. մարգալ տաշիթ շատրուաններ դովութիւն ու

Թարմութիւն կը ծաւալեն քո պարտիզում, իմ հոգիս, իմ ճերմակ վարդս:

Մայկօ. (Բեմի ետեւից, ծառուղուց) Գայիանէ, հոգիս... Գայիանէ, ի՞նչտեղ ես:

Գայիանէ. (Ցնցուելով) Վայ, Մայկօն է: Հայրիկ, չասես, որ ինձ տեսել ես (Փախում է՝ ապշած Օթար-բէկին ընդհատելով «սպասիր» խօսքի վրայ):

Օթար-բէկ. Ամենքն էլ վախում են ինձանից... միայն նա է, որ չի վախենում: Ա՛խ, աւելի հեշտ կը լինէր... (Հեւալով՝ ձեմուղուց դուրս է վազում Մայկօն—մի փոքրիկ եւ բաւականին հաստիկ պտուաւ. հազած ունի սեւ շոր եւ վրան գցած սպիտակ չադրա):

III

Մայկօ. Գայիանէ, Գայիանէ... Ա՛խ, ողորմած պարոն:

Օթար-բէկ. (Յուզմունքը ծածկելու համար՝ դէպքից օգտուած է եւ սկսում է պոռալ) Այդպէս ես նայում աղջկանս, քաւթնու: Ի՞նչպէս համարձակուեցիր դուրս թողնել նրան սենեակից:

Մայկօ. Ի՞նչ անեմ, որ շուրն ընկնեմ. թեք հօ չունիմ, որ նրա ետեւից հասնեմ: Ի՞նչտեղ է նա, իմ աղաւնիկս: Շատ թոթոացիր, վանդակում են ուզում փակել քեզ, այ իմ տատրակըս, այ իմ ալ-վարդս (լաց է լինում):

Օթար-բէկ. Հասիր յետեւից. նա այս կողմը փախաւ: Թէ որ էլի թողել ես նրան տնից դուրս գալ, ես քեզ...

Մայկօ. (Ձենը պոկելը գցած) Իմ լա՛լ ու զմրո՛ւթս: Ի՞նչտեղ ես, Գայիանէ, Գայիանէ. (հեռանում է, եւ դու երկար լսում է հեռուից նրա կանչը) Գայիանէ ջա՛ն...

Օթար-բէկ. Ձէ, պէտք է վերջ տալ այս բոլորին: Բեսօ (նիրս է մոռում Բեսօն):

IV

Օթար-բէկ. Սուբամից եկող չկա՛յ դեռ:

Բեսօ. Հէնց նոր չափարն եկաւ: Բեռները ճանապարհին են: Չարմանք բան է, ես իմ Աստուածը: Սուտ չի ասած—լաւ որ հուպ տաս, քարից էլ գինի կը կաթի: Անանուրից երեք ձի են բերել: Մարդ ասի՝ ի՞նչտեղից են ճարել: Իսկ կոյս աղջկերը դեռ չեն գտել, տէր իմ: Ախր ասում էի, կոյս-աղջկերն հատել են մեզանում:

Օթար-բէկ. Միկնո՛յն է: Հրամայիր, որ սայլերը գորգերով ծածկեն, պահապաններն ու ձիաները պատրաստ լինեն: Լու-

սարացին ճանապարհ ենք ընկնելու թիֆլիս: Ի՞նչտեղ են ձիաները: Լաւերն են:

Բեսօ. (Հիացմունքից աչքերը խփելով) Գին չունեն:

Օթար-բէկ. (Աշխոյժ ստացած): Չափարներն են ձարել:

Բեսօ, Չէ, բերողները մերոնցից են. վեց հոգի են: Մէկը՝ մի աչքը քո ձերունի է. մնացածները՝ ջահիլներ են: Ծերունին ուզում է քեզ տեսնել, տէր իմ, և խնդրում է, որ ձիաներին յետոյ մտիկ տաս, երբ որ կը հանգատանան: Ես նրանց ջուկ ախոտ տարայ: Բերողները շատ են վախենում, որ աչքով տուող չլինի: Նրանցից երեք հոգի մնացին ձիաների մօտ, իսկ ձերունին և երկու ջահիլ աղերքը քո հրամանին են սպասում, որ քեզ տեսնեն:

Օթար-բէկ. Կանչիր, գան (Բեսօն դուրս է գնում):

Օթար-բէկ. (Մենակ, ծանր հառաչում է և խորին մտախոնձեան մէջ ընկած՝ դանդաղ դիմում է դէպի տիրասը) Ա՛խ, ա՛խ, ա՛խ: Բեմի խորքից ներս են մտնում Բեսօն, Գլխա Անանիան, որին հետեւում են Էրեկէն և Դաթօն):

V

(Գլխա Անանիա—մի աչքը կոյր է, միրուքը կարճ ու սպիտակաւուն, բեղերը խոշոր, հարթ խուզած, բունքերի վրայ փոքրիկ գլիֆներ (մազէ փնջիկներ): Էրեկէ—երիտասարդ, քսանեւերկու տարեկան: Դաթօ—քսանեւերու տարեկան: Էրեկէն՝ շիկաներ, կապոյտ ու մտորուն աչքերով. միրուքն ու բեղերը նորարոյս և շիկաւուն: Դաթօն՝ թուխ մազերով ու միրուքով):

Անանիա. (Գլխին առնելով ու գլուխ տալով) Փանք ու աջողում մե՛ծ պարոնիս:

Բեսօ. (Անանիային) Գդակդ ծածկիր, քո շուն: Մի չկարողացան էդ բո՛ւ գեղացիներիդ շնորհք ու քաղաքավարութիւն սովորցնել:

Անանիա. Թէ որ մեր պարոնի ողորմածհոգի հայրը կենդանի կը լինէր, նա քեզ կը սովորցնէր, թէ ո՞նց են գդակը գլխին խօսում:

Օթար-բէկ. Ի՞նչտեղից ես, այ մարդ. ո՞վ ես:

Անանիա. Անանուրի կողմերիցն եմ, պարոնս: Գեղի տանուէր եմ. անունս՝ Անանիա է, աղգանունս—Գլխա: Չափարներդ վրազ-վրազ եկան գեղը, հրաման բերին, որ երեք օրուայ մէջ երեք ձի ու երեք աղջիկ ձարենք: Չիեր ձարեցի ու բերի. ամենալաւերն են: Համա սիրուն աղջիկը ձարել չըկարողացայ, ողորմած պարոնս: Սիրուններին, ի՞նչ կար ու չը-

կար, դեռ անցած տարին եկան ու թիֆլիս տարան. իսկ գէշերին հէնց էդ տարին քո չափարները բաժան-բաժան արին իրար մէջ:

Օթար-բէկ. (Ստուռեամբ յօճքերը կիտելով) Ի՞նչէր ես դուրս տալիս, ձերուկ:

Անանիա. հարցրու ծառաներիդ, պարոնս: Սուտ ասելու ի՞նչ ունեմ: Ամբողջ Անանուրը ման գաս, մի շէնք ու շնորհքին աղջիկ չես ձարի: Որդկերանցս պսակել էի ուզում—հարսնացու չգտայ: Էնպէս էլ մնացին անպսակ, անխիկ: Հիմի բերել եմ նրանց քո կամքին ծառայեցնելու: Մի ժամանակ էլ ես էի քո հօր ծառայում, հիմի էլ որդկերանցս եմ մեծացրել քեզ համար: Թող նրանք էլ քեզ ծառայեն իրանց ուժով ու քաջութիւնով (գլուխ է տալիս):

Օթար-բէկ. (Գոհունակութեամբ ոտից-գլուխ դիտում է երիտասարդներին: Գիմելով Դաթօին) Անունդ ի՞նչ է. դու մե՞ծն ես:

Դաթօ. (Գլխը հանելով) Դաթօ, տէր իմ:

Օթար-բէկ. Իսկ քո անձ... Սպասիր: Սա քո որդի՞ն է, ձերուկ:

Անանիա. (Մէկ աչքը յառած Օթար-բէկին) Որդիս է, ողորմանք պարոնս:

Օթար-բէկ. (Չի կարողանում աչք պոկել Էրեկէի երեսից) Հարազատ:

Անանիա. Հարազատ, պարոնս:

Օթար-բէկ. Անկարելի բան է:

Անանիա. (Գիմելով) Հարցրու պառաւիս, ողորմանք պարոնս: Ո՞վ գիտի, կարելի է, նա քեզ մի ուրիշ բան խոստովանի: Իսկ ինձ հաւատացնում էր, որ իմն է:

Օթար-բէկ. Անունդ ի՞նչ է, տղա...

Էրեկէ. Էրեկէ, տէր իմ:

Օթար-բէկ. Բանի տարեկան ես:

Էրեկէ. Բասնուերկուսի մէջ եմ, տէր իմ:

Օթար-բէկ. (Անանիային) Դու քրիստոնեայ ես, ձերուկ:

Անանիա. Ինձ մկրտել են, պարոնս, դեռ քո ողորմածհոգի հօր օրով:

Օթար-բէկ. Գիտեմ, գիտեմ, ի՞նչ պտուղներ էք անանուրցիներդ: Դուք ծածուկ տէրտէրներ էք պահում, ապաստան էք տալիս ճշմարիտ հաւատի թշնամիներին: Տղերքդ էլ քրիստոնեայ ես:

Դաթօ և Էրեկէ. Քրիստոնեայ ենք, տէր:

Օթար-բէկ. Ի՞նչ հաւատի որ տէրն է, այն հաւատի էլ ծառաները պիտի լինեն: Քո քաւթառած հոգուն, մէկ է, չես

օգնի: Ասենք, մեծ մարգարէն պէտք էլ չունի, որ դրախաղ լցնի քեզ պէս ազրութէքով: Իսկ դուք, կտրիճներ, էգուց և եթ կ'ընդունէք Իսլամը:

Էրեկլէ. Ո՛չ, տէր:

Դաթօ. Անկարելի է, տէր: Մենք երգուել ենք մեր մօրը՝ հաւատներս չփոխենք: Անկարելի է:

Օթար-բէկ. Հարիւր լաւ մտրակ ուտելուց յետոյ կ'իմանաս, որ կարելի է:

Էրեկլէ եւ Դաթօ. (Միասին) Քո կամքն է, տէր. մենք չէնք կարող:

Անանիա. (Որդիներին) Ձէններդ, փնջ-կենդանիներ: Ո՛նց էք համարձակուում մեր մեծ պարոնի կամքին հակառակել: Նա ձեզանից լաւ գիտի, թէ որ հաւատն է լաւ, որ հաւատը— վատ: Նա ինքը որ երես է շուռ տուել իր հօր, պապի, հօր պապի, իր հայրենիքի հաւատից, ասել է, թէ խղճմտանքն է այդ ուզել. (կրծքին խփելով) խղճմտանք. հասկանում էք, ծալը-պա-կաններ, թէ ի՞նչ ասել է խղճմտանք: Ես ինքս էլ, ողորմած պարոն, թէկուզ հէնց այս բոպէիս կը փոխէի հաւատս... Բացի վա-սից ի՞նչ օգուտ ունիմ էդ հաւատից: Համ կաշիդ են հանում, էն էլ մէկի տեղ երկուսը, համ շան պէս թակում են քեզ, համ էլ ոչ անուն ունես, ոչ պատիւ... հասկանում էք, յիմարներ... Հաւատ փոխելը հեշտ է, ողորմած պարոն, միայն այ ինչից եմ քաշում. միտք եմ անում—էլ ի՞նչ երեսով պիտի ես էն աշ-խարհում երևամ քո ողորմածհոգի հօրը: Ախար նա շիտակ աշ-քիս մէջը կը թքի ու կ'ասի՝ ափսոս, Անանիա, որ պարսիկնե-րը մէկէլ աչքդ հանեցին, երբ որ դու կողքիս կանգնած կուում էիր, թէ չէ՛ ես էն միւս աչքիդ մէջ էլ կը թքէի: Այ թէ ինչ կ'ասի նա: Չե՞ս ամաչում, կ'ասի, դրախտ ես գնացել զըզբաշ-ների հետ, երբ որ ես էրում ու տանջում եմ դժոխքում: Թէ որ էդպիսի բան պիտի լսեմ իմ հին, իմ սիրական իշխանից, լաւն էն է, իսկի դրախտի երես չտեսնեմ: Ի՞նչ եմ անում ես դրախտը, երբ որ քո ողորմածհոգի հայրը...

Օթար-բէկ. (Ամօթից ու զայրոյթից կասկարմիր) Ի՞նչ ես կպել իմ հօրը, քոն ու խելան:

Անանիա. Մաղ կեանքս կպած էի նրան, իմ մեծ պարոն: Եւ ո՞նց չկպչէի: Էն ժամանակ մեր վզին նստել էին ուրիշ ուղ-ղահաւատներ՝ Ախալցխայի կողմից եկած: Նրանք էլ Ալլահ ու Մահմէդ ունէին, համա էդ Ալլահն ու Մահմէդը երեւի էն չէին, ինչ որ պարսիկներինը: Եւ գիտես ինչ արաւ հայրդ: Նա թողեց իր ունեցած-չունեցածը, թողեց տուն ու տեղ, բաղ ու բաղ-չայ, ոչխար ու տաւար, հաւաքեց մեզ բոլորիս ու ընկաւ ան-

տանները... տեսնում ես սարերում կապուտին տուող էն ան-տանները... Եւ հէնց որ ականջն էր ընկնում, թէ թուրքի գորքն այս ինչ գեղն է թալանել, իսկոյն վրայ էր պրծնում, ինչպէս բազէն ագռաների երամի վրայ, ճամբէն կտրում էր, գերինե-րին ես էր խլում, թուրքերին կոտորում էր, ողջ կողոպուտը ձեռներից առնում ու ետ էր տալիս կողոպտուածներին:

Օթար-բէկ. Բա ի՞նչպէս է, որ ես քեզ չեմ յիշում:

Անանիա. Ի՞նչտեղից յիշես, ողորմած պարոն: Հոգսերդ շատացել են: Ես էլ ձերացել եմ: Չեմ մոռանայ, քեզանից հե-ռու չէի, երբ որ Սիւլէյմանը ջարդեց մեզ Թիֆլիսի մօտե-րում:

Օթար բէկ. (Սորը դիտելով) Սպասիր... սպասիր... կարծես քո երեսը ճանաչս է գալիս... Ի՞նչտեղ էիր դու յետոյ, երբ որ ես...

Անանիա. (Ընդհատելով արագօրէն) Երբ որ դու դեռ մեր կողմն էին և կուում էիր այն անիծ... մեր հիմիկուան տէրերի հետ: Ասենք, դա շատ չբաշեց: Երկու տարի միայն... Ես վէրք էի ստացել ու պառկած էի. ոտքս չէր առողջանում: Մի ուրիշ բան էլ պատահեց... (աչքը շեղակի գցում է Էրեկլէի վրայ): Շատ մեծ բան... Երբ որ դու գնացիր Իմերէթ, իսկ քո ողորմածհո-գի կինը փակուեց քո բերդում, ես մի կերպ քաշէ-քաշ գալով՝ եկայ նրա մօտ... հէնց աչքիս առաջ մեր ողորմած Սիւլէյման թագաւորը կտոր-կտոր արաւ կնկանդ՝ բերդն առնելուց յետոյ: Տեսայ, որ էլ օգնել չեմ կարող... մի կերպ ազատեցի ինձ էդ շների ձեռից... Վայ, ինչ եմ ասում, մեր տէրերի ձեռից, ու գնացի, կորայ... իմ բանը տեսնելու:

Օթար-բէկ. Բաւական է, ծերո՛ւկ: Շատ ես սիրում տա-կից-գլխից դուրս տալ:

Անանիա. Ի՞նչ անեմ, պարոնս: Կեանքս անցել-գնացել է, մահն էլ մոռացել է ինձ: Բան անել չեմ կարողանում, լեզուիս եմ զոռ տալիս: Իսկ դուք, անպիտաններ, ականջ արէք մեր մեծ պարոնի խրատներին: Նա երկու հաւատ է փոխել: Նա ձեզա-նից լաւ գիտի, որ հաւատն է լաւ:

Օթար-բէկ. Կոխի: Էգուց կը տեսնենք: Ես ձեզ առնում եմ ծառայութեան, միայն պէտք է քաջ լինէք և քաջ կուռէք:

Դաթօ. Ես քաջ եմ կուում, տէր: Հօրս հրամանը որ չի-նէր, դու մեր ձիւներն երեսը չէիր տեսնի, թէկուզ տասներ-կու չափարի տեղ՝ հարիւր տասներկուսն ուղղարկէիր: (Հայրը Օ-թար-բէկի ետեւից գլխով ու աչքով է անում որդուն: Դաթօն իսկոյն փո-խում է խօսքի եզանակը) Ես չէի իմանում, տէր, որ դրանք քո մարդիկն են: Ես կարծում էի, դրանք էլ պարսիկներ են՝ Թիֆ-

լիսից ուղարկած: Իսկ քեզ, քեզ ես ու եղբայրս պատրաստ ենք քաջութեամբ ու հաւատարմութեամբ ծառայելու: Քեզ մեր սեփական կրօնքերով կը պաշտպանենք թշնամիներէից: Այդպէս է հրամայել մեզ մեր հայրը (զիւլիս է տալիս):

Օթար-բէկ. (Հիանալով պատանիների վրայ) Ես էլ ձեզ կը սիրեմ, որդիքս:

Էրեկլէ. Միայն, տէր... (շփոթուում է եւ լուում):

Օթար-բէկ. (Նրա ձայնը լսելով ցնցուում է. ինքն իրան) Ասես թէյմուրազ թագաւորն է աչքիս առաջ... (Բարձրաձայն) Ի՞նչ է, էրեկլէ:

Էրեկլէ. (Քնքոյշ, հնչուն ձայնով) Մեզ մի ուղարկիր մերօնց կողոպտելու: Մենք քեզ ենք ուզում պահպանել:

Անանիա. (Երեկլէին) Սո՛ւս կաց, լակո՛տ: Ա՛յ քեզ հիմիկուան ջահիրները, պարօնս: Դո՛ւ նրանց խելքի բեր, թէ Աստուած... ախ, ինչ եմ ասում, թէ Ալլահը կը սիրես: Ինձանում էլ հալ չի մնացել: Հարիւր անգամ ասել եմ նրանց—այ յիմարներ, մեր մեծ Օթար-բէկից օրինակ առէք, թէ ոնց պիտի ազբել էս աշխարհում հիմիկուան ժամանակը: Նա մեր տէրերի, Սիւլէյման թագաւորի ու փաթիշահի համար իր հալալ քեռուն Նիկողոզին՝ չինայեց, սպանեց կոռւի մէջ. նա իր երկուքեռորդիներին մինչև հիմի էլ փթացնում է բերդում. աներոջը քշել է Իմերէթ:

Օթար-բէկ. (Ամաչելով ու դարոյթով) Դէ, բաւական է, բաւական է:

Անանիա. (Շարունակելով) Էդ դեռ ոչինչ, ասում եմ նրանց... Սող Գարթալինիայում երեխէքը ձէնները կարում են, երբ որ մայրը նրանց ասում է. — Օթար-բէկը գալիս է: Ա՛յ թէ քաջը ու կ'ասեն: Նրա միայն անունը լսելուց՝ մարդիկ սրտաճաք են լինում: Եւ դրա համար է, ասում եմ ես նրանց, որ թէ փաթիշահը, թէ Սիւլէյմանը միշտ քաղցր աչքով են մտիկ տալիս նրան և տէր ու հրամայող են կարգել մեր գլխին: Ի՞նչտեղ են մեր մնացած իշխանները: Ամենքն էլ գնացել, կորել են—կամ անտաններումն են ապրում, գաղանների պէս, կամ փախտականներ են, կամ ստրուկներ... Մեղքը իրանցն է, խելք չունեն, ժամանակին ասէին—Լա՛-Իլլահ-իլ-Ալլահ ու սկսէին կոտորել, երբ որ թագաւորը կը հրամայէր: Խելքի բեր նրանց, ողորմած պարօն: Մենք ամենքս էլ քո ստրուկներն ենք:

Օթար-բէկ. (Լսում է՝ ասես ապտակների դարկուտ լինի վրան տեղալիս. ապա յանկարծ սկսում է պոռայ) Դու ինձ չէս խաբի քո այդ հէքիաթներով ու շողքորթութիւններով, ծեր ազուէս:

Գնա՛ ձիաներդ դուրս բեր, տեսնեմ: Վա՛յ քեզ, թէ որ մէջերը գոնէ մէկը վատ է եղել: Ես քո այդ մաշուած կաշուիցդ չափրախներ կը ձեւեմ նրանց համար (տուն է մտնում):

VI

Անանիա. (Արագ եւ կիսաձայն) Դէ, տղերք, դէս ու դէն ընկէք, մտիկ արէք, ամեն ծակուծակները իմացէք: Ո՛վ է իմանում, կարելի է, մեզ էդ բանը հարկաւոր գայ: Դաթօ, դու դէսը գնա, մի ուշանայ, թէ չէ նա կարող է տեսնել քեզ: Էրեկլէ, դու էլ տան չորս կողմը աչքի անցկացրու (դուրս է դնում):

VII

Էրեկլէ. Դաթօ, սիրտս հանգիստ չէ ասես, մի փորձանք պիտի գայ գլխներին:

Դաթօ. (Անհոյ) Ա՛յ քեզ իմ ձեռքն ու իմ թուրը: Մի վախենար, եղբայր: Մեզ երկուսիս յաղթող չի լինի:

Էրեկլէ. Ես չեմ վախենում. միայն անցեալ գիշեր երազ տեսայ—շատ ծանր երազ: Երազումս սուրբ Գէորգը իր տէգով խոցեց կուրծքս...

Դաթօ. (Նրա խօսքն ընդմիջելով) Ո՞նց չէ, սուրբ Գէորգի բան ու գործը հէնց դու ես: Շո՛ւտ արա, տան չորս կողմը պտորտիր, քանի մարդ չի երևում: Իսկ երազներդ պատանիներին պատմիր: Ես երազներ մեկնող չեմ: Գնա՛:

Էրեկլէ. Շո՛ւտով արի (հետեւում է Անանիային: Դաթօն դիմում է դէպի աջ: Նրա առաջ դուրս է վազում Գայիանէն):

VIII

Գայիանէ. (Յանկարծ կանգ է առնում եւ երկու նայում է Դաթօին) Ո՛վ ես:

Դաթօ. (Շշմած, ազոթօրէն, զարմացած եւ տրփանքով մտիկ է տալիս նրա երեսին եւ մի համր հիացքի մ'ջ՝ ձայն չի հանում):

Գայիանէ. (Դաթօն շատ է դուր գալիս նրան) Դու մո՛ռնջ ես: Դաթօ. Ես Օթար-բէկի զինուորն եմ: Իսկ դու ո՞վ ես:

Գայիանէ. Ես էլ նրա ազդիկն եմ: Անձե՛ղ:

Դաթօ. Դաթօ: Իսկ քո՞նք:

Գայիանէ. Գայիանէ: (Լոռուիւն: Երկար իրար երես են նայում): Ի՞նչի դու այստեղ ես: Հօրս զինուորները Գորումն են:

Դաթօ. Հօրդ հրամանով ձիեր եմ բերել փաթիշահի համար: Դայիանէ. (Յնցուելով) Փաթիշահի համար: Ո՞վ է այդ փաթիշահը:

Դաթօ. Չեմ իմանում:

Դայիանէ. Նրան ոչ ոք չի իմանում: Նա թագաւոր է:

Դաթօ. (Նայում է նրա երեսին) Չեմ իմանում:

Դայիանէ. Իսկ դու գիտե՞ս, ինչտեղ է Իրանը:

Դաթօ. Ո՛չ: Գիտեմ միայն, որ այնտեղից են եկել պարսիկները ու տիրել մեր երկրին, և որ այժմ քո հայրը ծառայում է Սիւլէյման թագաւորին: Նրան ենք ծառայում մենք ամենքս էլ:

Դայիանէ. Իսկ Սիւլէյման թագաւորը նոյնպէս պարսիկ է. Իրանից է:

Դաթօ. Երևի: Այնտեղ ուղարկում են ոսկի, արծաթ, գեղեցիկ ձիեր ու կոյս-աղջիկերք: Մեզանից խլում ու այնտեղ են ուղարկում:

Դայիանէ. Ո՞վ է խլում:

Դաթօ. Քո հայրը:

Դայիանէ. Սո՛ւտ է... (յանկարծ կանգ է առնում՝ ասես շան-ծուած մի անորոշ մտքից: Դաժօն նայում է նրան: Լուռօրէն) Ինքդ ինչտեղից ես:

Դաթօ. Անանուրից:

Դայիանէ. Ի՞նչտեղ է այդ Անանուրը:

Դաթօ. Այ այնտեղ, սարերո՞ւմ:

Դայիանէ. Ի՞նչ ուրտրդ ես:

Դաթօ. Ես տանումէկ յովազ եմ սպանած:

Դայիանէ. (Պատկառանքով) Ա՛-ւ: Սովորեցրո՛ւ ինձ, ինչպէս պիտի կուռել նրանց հետ:

Դաթօ. Ի՞նչ աղջիկ ես. դու յովազին յաղթել չես կարող:

Դայիանէ. Նա շատ է ուժեղ:

Դաթօ. Մի ամբողջ հորթ է տանում: Օ՛, ինչպէս վառվառում են քո աչքերը: Թէ որ դու ինձ հրամայէիր, ես մէկ անգամից երկու յովազի առաջ կ'եմնէի: Ես պատրաստ եմ քո մէկ հայեացքի համար մինչև վերջին կաթ արիւնս ծառայել քո հօրը:

Դայիանէ. (Թախծանքով) Ես շուտով գնալու եմ: Հայրս ինձ տանում է թագուհու մօտ: Յետոյ... (լուռ է):

Դաթօ. (Գունատուելով, շնչասպառ) Գնալու ես:

Դայիանէ. Իրան. (վշտով) հայրս ուզում է, որ ես Իրանի թագուհի լինեմ: Միայն դրա համար պիտի թողնեմ որսորդութիւնը, պիտի երեսս ծածկեմ և փաթիշահի կինը դառնամ:

Դաթօ. (ձի է արձակում եւ դուրս մտնելու մէջ սեղմում) Քեզ էլ բեզ էլ Իրան. թագուհի՞. երեսը ծածկել: Եւ այն էլ ո՞վ, քո հայրը, ի՞նչ կամբով: Ես իմ կատաղի թշնամուս աղջկանն էլ չէի ցանկանալ այդպիսի վիճակ:

Դայիանէ. Ի՞նչ ասացիր:

Դաթօ. Գայիանէ, Գայիանէ: Այնտեղ տանում են ստըրկացներու և ոչ թագուհի դարձնելու համար: Ուժով խլում են աղջկանը մօրից, կնկանը՝ մարդից, հարսին՝ փեսայից: Քեզ խաբում են, Գայիանէ: Քեզ ծախում են, ինչպէս ծախեցին Վըրաստանը, ծախեցին Քրիստոսին:

Դայիանէ. (Սարսափած) Ո՞վ, ո՞վ:

Դաթօ. Առաջինը հէնց քո հայրը:

Դայիանէ. (Սարսափի մէջ, գունատուելով, սրտմտած) Վըրաստանը, Քրիստոսին... իմ հայրը... ծախեց... իմ հայրը...

Դաթօ. Այո, քո հայրը: Ամբողջ ժողովուրդը խօսում է այդ մասին: Հարցրու հայր Սաբային: Նա ամեն տեղ է լինում: Քո հայրը ա՛ն ու դող է գցել ժողովրդի սիրտը իր պատիժներով: Բաւական է, որ նա մի խօսք ասէր, և մենք պարսպի պէս կը բոլորէինք նրա չորս կողմը: Քաջեր և ուժեղներ դեռ անպակաս են մեզանում: Մեզ բոլորիս իբրև սարուկներ դեռ չեն ծախել Իրանին, ինչպէս որ քո հայրն է ուզում ծախել քեզ, ո՛, իմ սիրուն, երկնային հրեշտակ, աչքիս լոյս:

Դայիանէ. (Շփոթուած) Կաց: Ի՞նչ ես ասում... Ես...

Դաթօ. (Աւելի ուժգին ու կրքոտ) Որպէս կայծակն է կրակում վառողը, այնպէս էլ դու կրակեցիր իմ սիրտը: Եթէ ես մինչև այժմ չէի շտապում—այժմ կը շտապեմ: Այժմ ես քո մէջն եմ տեսնում այն ամենը, ինչ որ պաշտպանել ու փրկել էի փափագում—և՛ հայրենիք, և՛ Աստուած, և՛ ազատութիւն: Սարսափելի չեն ինձ համար ո՛չ քո հօր, ո՛չ էլ նրա տիրոջ՝ Վըրաստանի կրակ ու պատուհաս Սիւլէյմանի բոլոր զօրախմբերը: Ես դուրս կը կորգեմ քեզ քո պահապանների ճանկերից... և եթէ քեզ տանելու լինեն, ես՝ որպէս յովազ՝ գաղտագողի կը հետեւեմ քո քարվանսին... Ընկերներ ու բարեկամներ շատ ունեմ: Նրանք առաջնորդ են ուզում—ես կը դառնամ նրանց առաջնորդը: Երբ սառցէ փոքրիկ կտորը պոկուում է սարի զբլից ու ցած գլորում, նա մեծանում, մի անհզ փլուածք է դառնում, նա սրբում, իր հետ տանում է, ինչ որ պատահում է ճանապարհին—և՛ յաւիտենական ժայռեր, և՛ անտառներ, և՛ գիւղեր... Այսպէս էլ մենք ամեն ինչ կը ջնջենք, կը խորտա-

կենք քո ազատութեան համար, իմ կեանք ու արև՝ (երկար համբուրում է նրան: Կուռն է Մայկօի ձայնը—«Գայիանէ՛, Գայիանէ՛»):

Գայիանէ. (Ազատուելով Դաթօի գրկից) Հեռացիր շուտով...

Դաթօ. Մի վախենար (դուրս է վազում: Ատրիբը հազիւ-հազ քաշ տալով՝ ներս է մտնում յողնած Մայկօն):

IX

Մայկօ. Ա՛յ թէ ինչտեղ ես եղել. վերջապէս գտայ քեզ... Ա՛յ, Գայիանէ, դու իմ հոգին կը հանես (Պուկացած, ծանր շունչ քաշելով ընկնում է՝ պինդ բռնելով ու բաց չթողնելով նրա ձեռքը) Մէկ ժամ է, քեզ եմ որոնում, դէսուդէն եմ ընկել, կանչում եմ, չկան ու չկան... Օ՛հ, սուրբ Աստուածածին, շունչ քաշել չեմ կարողանում...

Գայիանէ. (Արթն ուշքի է եկած: Նայում է չորս կոմը: Կարծես ամբողջապէս վերածնունդ վնի: Նրա մէջ յանկարծ զարթնում է խելօք, ծածկամիտ կինը) Ներքիք, դայեանկա... Վեր կաց. գնանք, ուր որ ուզում ես: Ես... (մտախոհ): Է՛լ չեմ վազվզիլ: Ես էլ յոգնել եմ:

Մայկօ. (Տնքտնքալով) Իսկոյն, միայն կամաց, չեմ կարող: Օ՛հ...

Գայիանէ. Ասա՛ ինձ, (մտախոհ նայում է դէպի տարածութիւնը) իմ հայրը... քրիստոնեայ է:

Մայկօ. (Վախից իրան կորցրած) Քեզ ի՞նչ, իմ ձերմակ ես-սաման:

Գայիանէ. (Պինդ սեղմելով նրա ձեռքը) Պատասխանիր:

Մայկօ. (Միանգամայն ապշած նրա այդ-նոր եղանակով խօսելուց) Քրիստոնեայ էր առաջ...

Գայիանէ. Իսկ հիմայ:

Մայկօ. Հիմայ ո՛չ:

Գայիանէ. (Շշուկով) Ուրեմն ճշմարիտ է... բոլորը ճշմարիտ է... Իսկ իմ մօրը... սպանել են... Ո՞վ է սպանողը:

Մայկօ. Հանդարտ, զաւակս, հանդարտ, թէ Աստուած կը սիրես...

Գայիանէ. (Աւելի խիստ) Ո՞վ է սպանողը:

Մայկօ. (Հազիւ լսելի ձայնով) Սիւլէյման թագաւորը:

Գայիանէ. Եւ իմ հայրն այժմ ծառայում է նրան:

Մայկօ. Ի՞նչ է պատահել քեզ, թոչնիկս (Գայիանէի շարժմունքի վրայ): Այո, մենք ամենքս էլ նրա ստրուկներն ենք:

Գայիանէ. Մենք ստրուկներ ենք, իսկ հայրս ծառայում է նրան:

Մայկօ. (Աղիքաւորով ու դողողալով) Մո՛ւս կաց, զաւակս, սո՛ւս կաց...

Գայիանէ. (Աւելի ու աւելի լսրուած) Ի՞նչու ես հօրս հետ չէի ապրում:

Մայկօ. Ձե՛մ իմանում, ես ոչինչ չեմ իմանում: Դու ինձ կրակի մէջ կը գցես:

Գայիանէ. Ասա՛, ի՞նչու:

Մայկօ. Նա վախենում էր քեզ իր հարեմում պահել:

Գայիանէ. Ի՞նչտեղ:

Մայկօ. Հարեմում: Նա շատ կանայք, աղջկերք ու տղերք ունի այնտեղ... Նրանց հաւատով այդպէս է... Կարելի է շատ կին ունենալ. մի քանիսներն ասում են—միայն չորս. միւսներն ասում են—թէկուզ հարիւր: Ձե՛մ իմանում, քո հայրն էլ հարիւր կին ունի թէ չէ, բայց ասողներ կան, որ մի-մի անգամ աւելի է լինում, մի-մի անգամ—պակաս: Եւ ամենքն էլ միատեղ են ապրում: Իսկ երբ որ նրանցից մէկնումէկը էլ դուր չի գալիս քո հօրը, նա իսկոյն ասում է—արձակում եմ քեզ: Ու դուրս է անում: Բայց մեր տէրը բարի է, նա զուր տեղը իսկի դուրս չի անի. որ կնկանից որ բեղարում է, իսկոյն նըրան կամ իր գորականներից մէկին է տալիս, կամ իբրև պարգև՝ բարեկամին է ուղարկում: Իսկ էսպէս, զուր տեղը երբէք դուրս չի գցում հարեմից:

Գայիանէ. Եւ նա բացի ինձանից ուրիշ զաւակներ էլ ունի:

Մայկօ. Ունի: Բայց նա միայն քեզ է սիրում: Իսկ նըրանք էնքան շատ են, որ ամենին սիրել չի էլ կարելի:

Գայիանէ. Ի՞նչտեղ է Իրանը:

Մայկօ. Հեռու է:

Գայիանէ. Ո՞վ է այնտեղ թագաւորը:

Մայկօ. Փաթիշահը: Նա մեր թագաւորի թագաւորն է:

Գայիանէ. Նա էլ այնքան կին ունի, ինչքան որ հայրս:

Մայկօ. Է՛-է. աւելի շատ: Սաղ աշխարհքի ամենասիրուն աղջիկներին նրան են պարգև ուղարկում:

Գայիանէ. (Գլուխը ձեռքերի մէջ սեղմելով՝ երկար լուռ է ու լաւում մտածում. երեսն անպատմելի տանջանք է արտայայտում) Գնանք (Մայկօի հետ հեռանում է: Մայկօն շշնջում է. «Միայն մէն-մպտուն չը-հանես, զաւակս, չստես, որ ես»... Ներս է գալիս Օթար-բէկը, նրա ետեւից—Գլախան՝ ձախ կողմից):

X

Օթար-բէկ. (Ըստ երեւոյթ, ն գոհ) Բերած ձիաներդ լաւ են, շատ լաւ են: Իմ կողմից յայտնիր քո համագիւղացիներին, որ ես նրանց ազատում եմ Անանուրի բերդի շինութեան վրայ բանելուց:

Անանիա. Մեծ է քո շնորհը, ողորմած տէր: Միայն գտնուի մերոնք սիրով են բանում: Նրանք ասում են—պարսիկները բերդն իրանց հետ չեն տանելու, մեզ կը մնայ:

Օթար-բէկ. (Յանկարծ շուռ է գալիս այդ անակնկալ պատասխանից եւ սուր աչքով նայում է նրան) Քեզ հետ եմ, Գլխիս: Այդ ինչտեղից ես գու աչքս համարձակ լեզու առել: Կարծում ես, թէ ես չհասկացայ, որ գու հօրս յիշելով՝ երեսիս ծիծաղում էիր: (Նրա դէմքը կասկարմիր է կրտրում զսպած զայրոյթից) Բայց ես սիրում եմ հանաքներ լսել իմ հանաքչի Բեսօից. իսկ ուրիշ հանաքչիներ երեսներն են ծամածուում իմ առաջ, միայն ոչ ծիծաղից, այլ կրակից ու մտրակից: Ես սիրում եմ համարձակութիւնը, երբ թշնամիներին են ջարդում: Իսկ իմ առաջ համարձակութիւն բանեցրնողներ ես զեռ չեմ ճանաչում: Իմ առաջ այդպիսիների երեսները մեռելի գոյն են ստանում:

Անանիա. (Հասարակ, գոհակական եղանակով) Էլ ո՞ւր ես ուշացնում, մեծ տէր: Մահն ու կեանքը քո ձեռին է: Միայն մահն ու ես հին բարեկամներ ենք և շատ անգամ ենք իրար աչքի մէջ մտիկ տուել: Ղորդ է, նա չէր կարմրում, համա ես էլ չէի զեղնում: Ամեն մէկը մեզանից իր օրհնութիւն էր մնում:

Օթար-բէկ. (Բռնկում նրա ուսերից) Ծերուկ, ես կարդում եմ քո միտքը: Դու ինձ խնդրեցիր, որ ծառայութեան առնեմ որդիներդ իմ մօտ, որպէսզի նրանք ինձ սպանեն՝ մէջքիս զարկելով իրանց սուրբ:

Անանիա. Դու խառնում ես, տէր իմ: Մէջքին պարսիկներն են զարկում: Մենք կրծքին ենք զարկում (Օթար-բէկը ցած է պոստ ձեռքերը). քաջ ու քաջորդի, երանի թէ իմ որդիների պէս շատ պաշտպաններ տար քեզ թէ քո առաջուայ և թէ հիմիկուայ նոր Աստուածդ: Երբ որ պարսիկները կ'ուզենան ազատուել քո ծառայութիւնից, ինչպէս որ այդ սովոր են նրանք անելու, ձէն տուր էրեկլէին ու Դաթօին: Դու կը անես, թէ ինչ գնով նրանք իրանց բնածին իշխանին կը տան պարսիկների ձեռքը:

Օթար-բէկ. Լսիր, ծերուկ: Ես քեզ արձակում եմ անվը-

նաս. միայն լեզուիդ կապ դիր և գլխիցդ հանիր այդ մտքերը (մեղմացնելով խօսելու եղանակը): Հիմայ էլ այն ժամանակները չեն, որ այդ լեզուով խօսես: Մեր ոյժը ջարդուած, ճիւղած է: Ի՞նչ ենք մենք: Ի՞նչ կարող է անել մեզ պէս հարբան, հաղ ու տող կանչող, պար ու ծիծաղ սիրող մի ժողովուրդ երկաթի Միւլէյմանի դէմ: Երբէք ժպիտը չէ խաղացել նրա երեսին: Նրա հայեացքը սուր է և սառն, որպէս նրա հոգին: Երբէք գիտու կաթիլը չէ զովացրել նրա շրթուները: Նա փաղիչահի ոտքի տակ դրաւ նուաճած Սինդն ու Ջիրալը, նա անցաւ լայնատարած Աղի անապատը և խմեց Հինդի ջուրը: Նա միշտ աչքը երկինք է յառած, ասես այնտեղ տեսնում է մարգարէին, որն առաջնորդում ու ճանապարհ է ցոյց տալիս նրան: Հանիւր զըլխիցդ այդ խենթ ու խելառ մտքերդ, ծերուկ, և հանգիստ ու խաղաղ անցկացրու կեանքիդ մնացորդը:

Անանիա. Փառք մեծ, Աստուած: Դու դեռ մեղքանում ես քրիստոնէի հոգին, ողորմած պարոն: Ձուր չէ, որ ժողովուրդը չի հաւատում քո չար գործերին: Նա գիտի, որ քո սրտից չեն ծնւում նրանք, և նա խոնարհ վիզ է ծուում քո անունի առաջ: Իրաւունք տուր, բանամ բերանս ու պատմեմ քեզ քո հայրենի երկրի ողջ կեանքն ու վիճակը, պատմեմ, թէ ի՞նչ սև օրեր է քաշում նա, մնաց է տանջւում ու չարչարում: Թող վառեմ, բորբոքեմ քո սրտում խղճահարութեան կրակը, քանի նա դեռ չի հանգել մոխրի տակ...:

Օթար-բէկ. Խղճահարութեան մասին մի խօսիր: Դու վերջինըն ես, որ տեսնում ես այն: (Զայրոյթով) Հեռացիր, քանի խղճահարութեան տեղ կատաղութեան կրակը չես վառել: Հէնց նոր, քո գալուց առաջ այստեղ ինձ վրայ նայում ու իմ խղճահարութիւնն էին աղերսում քո այդ մի հատ անգոյն աչի փոխարէն՝ երկու անյապիտի աչքեր... Հեռացիր շուտով... (Ներս է վազում Բեսօի, ամբողջ մարմնով զողում է երկիւղից):

XI

Բեսօ. Տէր իմ, թագուհին գալիս է իր շքախմբով իմ ետևից:

Օթար-բէկ. Գժուէ՛ր ես, ի՞նչ է (Խորքում երևում են Գաթօն եւ Էրեկլէն):

Բեսօ. Չէ, տէր իմ: Ահա նա (Մուկ է չորում: Ներս են մտնում Ձէյնաբը, Ռուբայան, նրանց յետեւից Ալ-Ռազալը, մի քանի ստրկուհիներ եւ զրահաւոր զօրականներ՝ չալմա փաթաթած, սաղաւարտներով եւ մերկացրած սրերով: Կանանց երեսները ծածկուած են, միայն աչքերն են երևում: Օթար-բէկը ծուկ է չորում, Անանիան նոյնպէս):

**Չէյնար.** (Երեսը ծածկած) Լաւ պահապաններ ես ունեցել, Օթար-բէկ: Նրանք նոյնիսկ չնախազգուշացրին քեզ իմ դալու մասին: Բայց երբ դաւաճանի մօտ ես գնում, պէտք է աշխատես նրան անպատրաստ գտնել: Ես հրամայեցի, որ ճանապարհին ինձ պատահած բոլոր զինուորներիդ բռնեն: Ի՞նչ ես անում այստեղ, քաղաքից դուրս գտնուող այս տանդ: Ինչպէս ես սիրտ արել թողնել քո հարեմը:

**Օթար-բէկ.** Մեծափառ թագուհի, քո հրամանովն եմ ես այստեղ, պարզներ եմ ժողովում շահն-շահի համար: Պատրաստուում էի էգուց լուսարացին ճանապարհ ընկնել Թիֆլիզ, շտապում էի արժանանալ ոտք դնելու քո տան բարձր շէմին և քեզ բերելու աղջիկս, ոսկի, արծաթ ու նժոյգներ: Ես արդէն հրամայել եմ, որ պատրաստութիւններ տեսնեն—հարցրու ծառաներիս:

**Չէյնար.** Ճանապարհն ինձ յոգնեցրել է, այս գիշեր ես կ'անցնեմ քո տանը:

**Օթար-բէկ.** Պատերը կը լայնանան, կտուրը մինչ երկինք կը բարձրանայ, ո՞վ մեծ տիրուհիս: Հէյ, ծառաներ, ինչոյք սարքեցէք, ստրուկուհիներ կանչեցէք, Վրաստանի լուսնեակն է օթեանում իր ծառայի տանը (ուզում է դուրս գնալ):

**Չէյնար.** Սպասիր: Ինձ ինչոյքներ պէտք չեն: Ստրուկուհիներ կան ինձ հետ: Ալ-Ռազաք, պահապաններ զիր բոլոր դռների մօտ (ցոյց տալով բնակարանի դուրս ցցուած կողմը): Ես կը բռնեմ տան այս մասը (Ալ-Ռազաքը խոնարհուելով նեղանում է: Չէյնարն աչքը գցում է Անանիայի վրայ և ճանաչելով նրան՝ մի խուլ միջ է արձակում՝ ձեռքը սեղմելով սրտին):

**Ռուքայա.** Ի՞նչ պատահեց, տիրուհի:

**Չէյնար.** Ոչինչ, զաւակս: Ճանապարհը յոգնեցրել է ինձ: Սիրտս ծակեց: (Օթար-բէկին) Ո՞վ է այս մարդը:

**Օթար-բէկ.** Գիւղի տանուտէր է, Անանուրի կողմերից է եկել: Երեք ձի է պարզե բերել քո մեծութեանը:

**Անանիա.** Երեքն էլ երեւելի ձիաներ են, ողորմած թագուհի: Բայց մէկը—անգի՛ն ու աննման է:

**Չէյնար.** (Տնչուած ձայնով) Նա զօրեղ... ուղղմակա՞ն ձի է:

**Անանիա.** Նրա երակներում տանուեօթ սերնդի ազնիւ արիւն է հոսում:

**Չէյնար.** Դու լաւ ես ճանաչում նրան:

**Անանիա.** Ես նրան մեծացրել ու սիրել եմ որդուցս աւելի:

**Օթար-բէկ.** Ես կարծում եմ, թագուհի, որ նա իսկ արաբական արիւնից է: Փաղիշահը կը հաւանի նրան:

**Անանիա.** Փաղիշահի հաւանելն ու չհաւանելը չեմ իմանում, համա գիտեմ, որ նրա մէջ ոչ մի կաթիլ արիւն չկայ ոչ արաբական, ոչ էլ պարսկական: Նրա երակներում մեր արիւնն է հոսում (շուտով դուրս է գալիս և նշան է անում որդիներին, որ մօտենան): Որդիքս ինձանից լաւ են ճանաչում այդ ձին (Երեկէն և Գաթօն մօտենում են: Ռուքայան աչքը Երեկէի աչքին գցելով՝ արագ, ասես անզգուշաբար երեսից վայր է ձգում ծածկոցը: Երեկէն ցնցում է և ուշատար զմայլում: Չէյնարը գունատուելով, յուզմունքից իրան կորցրած՝ աչք չի պոկում Երեկէից):

**Անանիա.** Չին վարժեցրել է նրանցից մէկը:

**Չէյնար.** (Մարտող ձայնով) Ո՞րը:

**Անանիա.** Նա, որին դու մտի՛կ ես անում:

ՎԱՐԱԳՈՅՐ

### ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Նոյն տեսարանը: Գիշեր է: Լուսինը նուազելու վրայ է: Երկինքը ամպա-  
մած է: Ներս է մտնում էրեկլէն. նրա ետեկից—Դաթօն՝ գաղտագողի: Ամբողջ  
լուսակցութիւնը տեղի է ունենում կիսաձայն, բայց շատ արագ և յուզուած ե-  
ղանակով:

#### I

Դաթօ. (Չեռքը դնելով նրա ուսին): Ի՞նչ ես անում այստեղ:  
Էրեկլէ. (Շուռ գալով ցնցուում է այդ անսպասելիութիւնից) Ա՛հ,  
դ՞ու ես, Դաթօ:

Դաթօ. Հա՛, ես եմ: Ո՞ւմ ես սպասում:

Էրեկլէ. Հեռացիր այստեղից. բո գործը չէ:

Դաթօ. (Յամառուձեամբ) Ասա՛, ո՞ւմ ես սպասում:

Էրեկլէ. (Բռնկելով) Ի՞նչ իրաւունք ունես՝ ինձ հետևում  
ես:

Դաթօ. Միթէ ինձանից թագցնելու բան ունես: Առաջ  
այդպէս չէր:

Էրեկլէ. Մի աղջկայ եմ սպասում:

Դաթօ. (Բռնկելով) Գայիանէ՛ի՛ն:

Էրեկլէ. Անունը չգիտեմ: Հեռացիր:

Դաթօ. (Աւելի տարանալով) Գիտես, եղբայր, լաւ է՝  
դ՞ու հեռանաս: Առաջինը ես եմ նրան տեսել, ես եմ նրան  
համբուրել: Կեանքս կը զոհեմ ու նրան ձեռքիցս չեմ տայ,  
հասկանո՞ւմ ես:

Էրեկլէ. (Նոյնպէս տարացած) Սո՛ւտ ես ասում: Ե՞րբ կա-  
րող էիր դու նրան համբուրել: Նա թագուհու կազբից չի հե-  
ռացել: Նրա ամեն քայլին հետևում եմ: Երբ թագուհին ուղջից  
գնաց, նա մօտեցաւ ինձ և հազիւ միայն կարողացաւ շնջալ  
ականջիս. «Արի այստեղ, երբ ամենքը քնած կը լինեն»: Եւ նը-  
րան տարան: (Չեռքը տանելով դաշոյնին) Ե՞րբ ես դու համբուրել  
ներան, ասա՛:

Դաթօ. (Հասկանալով իր սխալը) Դաշոյնդ տեղը դիր: Ի՞նչ  
համբուրածն ուրիշ է (ծիծաղում է): Հիմայ ծիծաղս է գալիս,  
էրեկլէ, իսկ այս բոպէին քիչ էր մնում իրար կտոր-կտոր ա-

նէինք: Օ՛ր, եթէ դա Գայիանէն լինէր, մեզանից մէկը եղբայ-  
րասպան կայէն պիտի դառնար:

Էրեկլէ. (Սչրոյծօճքը կիտած, չհաւատալով) Ո՞վ է այդ ու-  
րիշը: Այստեղ ոչոք չկար բացի նրանից, թագուհուց և երես-  
ները ծածկած պառաւաններից:

Դաթօ. (Լիազգաց եւ կենսուրախ) Սուտ չեն երգում. «Աչքիս  
լոյսը դ՞ու ես»: Ամեն մարդ իր աչքի լոյսն ունի և աշխարհիս  
երեսին միայն նրան է տեսնում: Դէ, թէ որ քեզ հարկաւոր  
չեմ, ես կ'երթամ: Միայն, տես, էրեկլէ, գլխիդ փորձանք չգայ:  
Պարսիկները հանաք չեն անում. իսկ այդ սև-սատանայ արար-  
ները հօ—աւելի վատ: Սոխի նման կտոր կտոր կ'անեն քեզ:  
Եթէ յարձակուեն վրադ, շվիացրո՛ւ—ես՝ այստեղ, մօտիկ կը  
լինեմ:

Էրեկլէ. Չէ, սպասիր: Ասա՛, ո՞ւմ ես համբուրել դու: Բա-  
ցի նրանից՝ ես այստեղ ոչոքի չտեսայ:

Դաթօ. (Ծիծաղելով) Նոյնիսկ թագուհուն:

Էրեկլէ. Ինչի՛ս է պէտք թագուհին: Ասա՛, Դաթօ:

Դաթօ. Մի տաքանար: Ախար, վերջապէս, մենք եղբայր  
ենք, թէ՞ ոչ:

Էրեկլէ. Եղբայր էինք, քանի դու ինձ չէիր խաբած:

Դաթօ. Դէ, լսիր: Օթար-բէկը Գայիանէն անունով մի աղ-  
ջիկ ունի: Հէնց նրա համար է այստեղ եկել թագուհին: Նրան  
ուզում են տանել Պարսկաստան՝ փաղիշահին պարգև: Բայց ո՛չ,  
չեն կարող տանել, էրեկլէ: Օ՛ր, մի պիտի տեսնես նրան: Չեն  
կարող տանել: Ես նրան պատահեցի այստեղ: Ասես սարի այ-  
ծեամ նա դուրս թռաւ թփերի ետեկից և տեղնուտեղը ար-  
ձան կտրեց առաջիս... իսկ ես... Օ՛ր, եղբայր, այսուհետև  
կեանքս էլ, մահս էլ—ո՞ղջը նրա ձեռքին է, ո՞ղջը նրա համար է:

Էրեկլէ. (Գեռ շարունակում է կասկածել) Դա նա՞ չէր, որ թա-  
գուհու կողքին էր կանգնած:

Դաթօ. Եւ երեսի ծածկոցը յանկարծ յետ քաշեց, որ քեզ  
կուրացնի՛ր, խելքդ տանի՛ր (ծիծաղելով՝ գրկում է նրան): Երգում եմ  
սուրբ Գէորգի անունով—ո՛չ: Դրան էլ, ամբողջ աշխարհիս միւս  
բոլոր կանանցն էլ, ով ուզում է, թող անի, իրանը լինի.  
Իսկ ամենալաւին՝ քեզ եմ տալիս: Գայիանէն փախաւ այս կող-  
մը, և հէնց այս կողմերում, թաւուտի մէջ, գետի ափին, ես  
տեսայ հեռուից մի նեղ ու բարձր աշտարակ: Նա երևի այն-  
տեղ է: Չկարողացայ լաւ հետեւել, աչքիցս կորցրի նրան: Հէնց  
այդ աշտարակի կողմն էի գաղտագողի գնում, երբ պատահեցի  
քեզ և ինձ թուաց թէ... (խիստ լուրջ): Գիտես, եղբայր, Աս-

տուած փրկեց թող էլ, ինձ էլ: Օրհնեալ լինի թագուհու և նրա ուղեկցուհու գալուստը:

Էրեկէ. Լսիր, Դաթօ. դու հիմայ լաւ պիտի հասկանաս իմ դրութիւնը: Բաւական է, որ նա ինձ ասի—մոռացիր հայր, մայր, պատիւ, հաւատ, հայրենիք—ես ողջը կը մոռանամ:

Դաթօ. (Անփոթ) Չէ, իմն ինձ այդպիսի բան չի ասիլ: Իսկ եթէ ասէր էլ, ես կ'ասէի, որ ինքը մոռանայ ինձ համար իր հաւատն էլ, իր հայրենիքն էլ: Չէ, չէ, եղբայր, լաւ բան չես ասում (հետզհետէ յուզուելով): Յիշում ես՝ ինչ ասաց մեզ մեր հայրը ճանապարհին, այստեղ գալիս:—Որդիք, քէֆի համար չի մեր այս գնալը: մե՞ծ գործի համար ենք գնում: Ի՞նչ էին նշանակում այդ խօսքերն, էրեկէ:

Էրեկէ. (Աչքը գցելով պատուհանին) Ա՛խ, ի՞նչ անտանելի է սպասելը: Նա այս երեկոյ մի անգամ արդէն երևաց ինձ պատուհանից և նշան արաւ: Փոքրիկ քար կը նետեմ:

Դաթօ. Լաւ է՝ աւազ նետիր (շարունակում է իր մտածմունքները): Ես գիտեմ՝ ինչ էր ուզում ասել հայրս: Ժամանակ է վերջ տալ մեր այս խայտառակ վիճակին: Մենք մարդիկ չենք մենք մուսիլմաններն անասուններն ենք: Աղօթում ենք ծածուկ՝ խուլ ու մութ կրճերում: Մեր եկեղեցիները բարութանը են արել: Մեզինից խլում են մեր ձին ու ոչխարը, մեր հացը, մեր բոյսն ու տունկը: Խլում են մեր քոյրերին, մեր հարսնացուներին և ծախում են նրանց շուկաներում, անպատիւ են անում մեր աչքի առաջ: Զղումնքս է գալիս, երբ մտածում եմ, որ ամեն օր պիտի ուտես, խմես, քնես՝ այդ ճնշող լուծը վզիդ... էլ ինչի՞ ենք սպասում, էլ ինչի՞ ենք սպասում, էրեկէ:

Էրեկէ. (Չէր լսում նրան) Այո՛, սպասելը մահից էլ վատ է: Ես աւազ կը նետեմ:

Դաթօ. Պահապաններին կը զարթեցնես (շարունակում է իր տանջալի մտածումները): Երբ ես նայեցի Դայիանէի աչքերին, նայեցի խորը, մի նոր և բուռն ոյժ զգաց կուրծքս. աճեց ու բարձրացաւ այդ ոյժը սրտիս խորքերից որպէս սարի հեղեղ և հեղեղեց ինձ: Օ՛, ինչպէս ուժեղ եմ ես այժմ, էրեկէ, ինչպէս ուժեղացել եմ: Նրա ձայնը հնչեց իմ ականջին որպէս պատերազմական փող: Այդ ձայնն ինձ ասաց. «Հասել է ժամը: Կռուիր Աստուծու և հայրենիքիդ համար, կռուիր ազատութեան և ինձ համար»:

Էրեկէ. Մ՛ս՛ս... Նա գալիս է (աջ կողմից լսում են խօսակցութեան եւ քայլերի ձայներ: Սրկուսն էլ ականջ են դնում):

Դաթօ. (Շշուկով) Տղամարդկանց ձայներ են... Թագնուէնք թագնուում են թաւուտ տեղում:

II

Բեմի խորքից ներս են մտնում Բեսօն, Անանիան և Սարան: Սարան բարձրահասակ է, չոր-չոր, առոյգ ու խնդուն աչքերով: Հագուստը Գլխայի հագուստի նման է, միայն աւելի ազնիւ ու մուգ գոյնի, թէպէտեւ պատառոտուն: Գլխարաց է. ձեռքին հասարակ, կեղեկապատ փայտ: Գօտիից կախած է դաշոյն:

Բեսօ. (Շշուկով) Կամաց, հայր Սարա: Սպասիր էստեղ, գնամ, տեսնեմ որ ճամբով կարող ենք անփորձանք հասնել գեանափորը: Այնտեղ մերոնք հաւաքուել՝ քեզ են սպասում: Սաղ շաբաթ է՝ սեղան չօրհնած՝ բերան բանալ չեն ուզում (կամացուկ, ոտքերի ծայրերի վրայ նեղանում է եւ ծածկուում տան հտեւը):

Անանիա. (Սարային տանելով դէպի ծառուղու ստուերոտ կողմը) Ի՞նչ կայ, ի՞նչ չկայ, հայր Սարա:

Սարա. (Զուարթ ու թանձր ծայնով) Աղօթում ու կուում ենք, որդիս: Մարդկանց ենք արթնացնում:

Անանիա. Անանուրից յետոյ ո՛ւր գնացիր, ի՞նչ տեղեր ման եկար:

Սարա. Անցայ Կախէթ: Օ՛հ, ծանր է այնտեղի վիճակը: Երեք անգամ միայն կարողացայ ժամ-պատարագ անել, այն էլ գեանափորերում, իսկ ութ անգամ—կուի ու ջարդով հազիւ գլուխս ազատեցի: Պատարագ չեղաւ, որ առանց կռուի անց կենար:

Անանիա. Խնտուրների մօտ եղամ:

Սարա. Օ՛, քաջ ժողովուրդ է: Այնտեղ մի քիչ հանգըստացայ: Նրանցից, փաւերից ու թուշերից շուկեցի ամենակատաղիներին և արշաւեցի դէպի Կազբէկ: Յետ խլեցինք թէ ամրոցը, թէ Գերգէթի սուրբ տաճարը: Մի-երեք օր կարողացանք պաս ու աղօթքով անցկացնել, սուրբ հաղորդութեան պատրաստուել: Բայց հէնց Աւետման օրը, երբ մարդիկ պատրաստում էին ճաշակուելու, պատարագի հէնց կիսին, մեզ շրջապատեցին Գուդաուրի զօրքերը: Սուրբ հաղորդութիւնն ըմպեցի ամբողջապէս, որ նզովեալների ձեռքը չընկնի, ու չսրբապղծեն: Մի ձեռքս առայ խաչը, միւս ձեռքս—հին տապալը, բայց մերոնցից արդէն քիչ մարդ էր մնացել: Ընդհանրով զօրաշարքը՝ մի կերպ ազատուեցինք ու ցրուեցինք Օսէթի կողմերը: Անցանք Բորժոմի սարերը—ախար ամեն տեղ էլ բրիստոնէի շունչ կայ, ամեն տեղ էլ բրիստոնէի հոգին կամ մարմինն է մըտնում, կամ մարմնից դուրս գալիս: Պիտի համ ընդունես, համ ճանապարհ գնես: Այնտեղից էլ բարի մարդիկ լատով հասցրին

այստեղ: Թաթախուճն ու սուրբ Զատիկը շրի վրայ անցկացրինք: Իսկ երեկ ժամ ու աղօթք արինք Ուփլիս Յիսէի \*) ստորոտում, գետնափորում: Օ՛հ, քիչ ենք մնացել, Անանիա, շատ քիչ ենք մնացել, որդիս: Քանի-քանիսը զո՞հ գնացին, մեռան մարտիրոսական մահով: Իսկ ինձ Աստուած դեռ չի արժանացնում այդ երանելի վիճակին:

Անանիա. Լսել ես, կաթողիկոսին սպանել են, հայր Սաբա:

Սաբա. Ա՛խ, լսել եմ, լսել եմ, որդիս: Նահատակ, նահատակ: Նրան սպանում էին, իսկ ես այդ գիշեր լաստի վրայ ուրախ ժամանակ էի անցկացնում մարդկանց հետ: Ասենք, որդիս, այս էլ կայ—ամենքս էլ որ նահատակուելու լինենք, էլ ո՞վ պիտի իր կեանքով պաշտպան կանգնի սուրբ խաչին: Օ՛հ, մեղաւոր եմ, մեղաւոր եմ—հեղութիւն չունիմ: Ի՛նչ անեմ, երբ արիւնս ինձանից զօրեղ է... Միրտս որ կրակուում է, էլ զսպելու հնար չի լինում: Օ՛խ, օխ, օխ:

Անանիա (Սրտաբեկ) Աստուած մեզ մոռացել է, հայր Սաբա:

Սաբա. (Ստուռութեամբ) Աստուած չի մոռացել իր Մօր վիճակը: Աստուած հաւատում է իր ծառաների ոյժին: Ես աջ ու ձախ ման եմ եկել մեր երկիրը, հինգ մատիս պէս գիտեմ նըրան: Ծովից՝ ծով, Ստամբուլից՝ Հինդ, Զինաստանից՝ Արաստան—ամեն տեղ մոլեգնած ծփում է իսլամը: Որպէս մանանիսի հատիկ՝ փոքրիկ է ու կորած մեր երկիրն իսլամի անսահման ալիքներում, նա մենմենակ է, բայց Տէրը նրա հետ է: Ասում եմ, Տէրը նրա հետ է: Եւ մեր տատապեալ երկիրը կը պահպանէ Տիրոջ սուրբ Խաչը: Մենք մեզ վրայ կը կրենք այդ խաչը, ասում եմ քեզ, յաւիտեանս յաւիտենից:

Անանիա. (Ծանր հառաչանքով) Օ՛հ, Տէր Աստուած, շուտ կը գայ, շուտ կը գայ այդ օրը:

Սաբա. Շուտով: Արդէն մեծացել են քսան տարի առաջ մեր երկրի հետ ընկած քաջերի զաւակները: Մեծացել են և՛ հայրենիքը վաճառողների որդիքը: Բայց մայրերն օրօր ասելիս հայրենիքի երգեր են երգել նրանց ականջին և հանապազ խաչով կնքել երեսները: Ասում եմ քեզ, մեծացել են շատ քաջեր, կռուի ծարան քաջեր, ո՞վ վաղեմի քաջ զինուոր: Ես նրանց հազարներով եմ տեսել, ես նրանց խօսքուզրոյցն եմ լսել: Աստուած օրհնէ նրանց մայրերին: Միայն առաջնորդ չկայ:

Անանիա. (Թիքուելով գէպի Սարան) Կայ: Լսիր խոստովանքըս, հայր Սաբա: Աշխարհիս երեսին միայն երեք հոգի էին

\*) Ուփլիս Յիսէ—Տիրոջ Ամրոց:

իմանում այդ գաղտնիքը: Քսան տարի ես մոռնջ էի գերեզմանի պէս: Բայց հիմի իմ սիրտն էլ է ասում, որ հասել է ժամը: Գնա՛ ու այսօրուանից պատմիր այդ գաղտնիքը վրաստանի զաւակներին, մեր քաջ զինուորներին: Թող այդ գաղտնիքը վառի նրանց սրտերը սուրբ գործի համար: Լսիր: Թագաժառանգ Գէօրգիին կենդանի է:

Սաբա. Անանիա, խաբելու պէտք չկայ: Առանց խաբէութեան, առանց սուտուժուտ անունների կը կատարուի մեր փրկութեան գործը:

Անանիա. (Ստուռութեամբ) Աղօթիր Աստուծոն, հայր Սաբա: Ես չեմ խաբում:

Սաբա. Թէյմուրազ թագաւորի որդուն Միւլէյմանի ձին ոտքի տակ տուաւ ու սպանեց, Անանիա: Եւ նա կենդանի է: Ես իմ աջքով տեսայ այդ: Եւ նա կենդանի է:

Անանիա. (Գլուխը կախելով կրծքին) Չէ, հայր Սաբա: Ո՛ւմ որ ձիու ոտքի տակ գցեցին, նա էլ չկայ: Նա իմ որդին էր: Աղօթք արա՛ նրա համար (Կռուժիւն: Սարան վեր է ուղղում աչքերը, որոնք լի են արտասուքով. շրթուները շարժում են: Անանիան ծանր մտածմունքի մէջ է): Ի՛նձ համար էլ աղօթք արա, հայր Սաբա: Ի՛մ մեղքն է: Ես ինքս այդպէս ուզեցի:

(Սարան հանդիսարութեամբ ձեռքերը դնում է ծունկ իջած Անանիայի գլխին: Ապա Անանիան ոտքի է կանգնում):

Սաբա. Ի՞նչտեղ է պատանին:

Անանիա. Թագուհին ցոյց կը տայ:

Սաբա. Մեր հալածիչը:

Անանիա. Մեր ազատիչը:

Սաբա. Եւ ապացոյցներ, նշաններ կան:

Անանիա. Կան, հայր Սաբա:

Սաբա. Իսկ ի՛նչտեղ էր մեծանում թագաժառանգը:

Անանիա. Ի՛մ տանը:

(Ներս է մտնում Բեսօն):

III

Բեսօ. Հայր Սաբա, մերոնք ամենքն էլ աղօթք անելու են հաւաքուել ու քեզ են սպասում այնտեղ, մի յետ ընկած գետնափորում. էդ տեղն առաջ գոմէշներ պահելու տեղ էր:

Սաբա. Քրիստոսն էլ մտուրի մէջ ծնաւ: Յոյց տուր, ո՞ր կողմը պիտի գնանք:

Բեսօ. Այս կողմը: Արի իմ ետեկց... Համա կամաց... Անիծած ներքինին, կարծեմ, քնած չի... Գնանք, ես քեզ էսպէս

տեղով տանեմ, որ ոչ տէրս հոտ առնի, ոչ էլ ինքը՝ Սիւլէյմանը (Սրեքն էլ զուրս են գնում):

Դաթօ. (Դուրս է գալիս թագստեան տեղից: Երեսը գունատ է եւ յուզմունք է արտայայտում) Լսեցի՞ր, ինչ ասաց մեր հայրը:

Էրեկլէ. Հն, բայց բան չհասկացայ: Այդ ի՞նչ թագաժառանգ է, որ կենդանի է:

Դաթօ. Ես էլ չեմ հասկանում: Ո՞վ է մեծացել մեր հօր տանը: Դու և... և ես:

Էրեկլէ. (Միծաղելով) Ո՞րն է ուրեմն մեզանից թագաժառանգը:

Դաթօ. Դու ծիծաղում ես: (Ռուբայան ճերմակ ծածկոցը երեսին՝ զգոյշ յայտնւում է ծառերի միջում):

Էրեկլէ. (Ցնցուելով եւ ամեն ինչ մոռանալով) Կնկայ շոր երեւաց թփերում (Նետում է Ռուբայայի կողմը):

Դաթօ. (Մտախոհ, զուխը կախ, աչքից ծածկւում է ծառուղում):

IV

Ռուբայա. (Արագ փարում է նրա վրին: Տեսողական համբոյր) Ինձ կը սպանեն, թէ որ տե՛սննն այստեղ, քեզ հետ միասին: Անունդ ի՞նչ է:

Էրեկլէ. Էրեկլէ:

Ռուբայա. Ո՞վ ես, որտեղացի ես:

Էրեկլէ. Լեռնցի գինուոր եմ:

Ռուբայա. Իսկ իմ եղբայրները ծովի զինուորներ են: Նրանցից ամենքն էլ վախենում են: Նրանք ինձ ծախեցին:

Էրեկլէ. (Սիրային կրքով) Քեզ. ծախեցին. ո՞ւմ: Դու ի՞մն ես յաւիտեան: Քեզ ոչոք չի կարող սիրել ինձ նման: Ես կ'այրեմ, ես կը բորբոքեմ քեզ իմ համբոյրներով, իմ փայփայանքներով: Ես... (չերմաջերմ համբուրում է):

Ռուբայա. (Յանկարծ աղատուելով գրկից) Կամաց (ականջ է դնում):

Էրեկլէ. (Սիրոյ կրքից բորբոքուած՝ պինդ բռնում է նրան) Ի՞նչից ես վախենում, քանի որ դու ինձ հետ ես: Ո՞վ սիրտ կ'անի իւրի քեզ իմ ձեռքից: Դու ի՞մն ես յաւիտեան:

Ռուբայա. (Տխուր եւ սիրայոյզ) Ես քոնն եմ միայն այս վայրկեանին, Օ, իմ սրտի արև: Համբուրի՛ր ինձ, քանի քո գրկումն եմ: Քեզ որ տեսայ—ամեն ինչ մոռացայ: Թող նորից գերութիւն քաշեմ, թող հէնց սպանուեմ, միայն թէ սեղմուեմ քո կրծքին, միայն թէ արբենամ քո շնչով գէթ մի անգամ, գէթ

մի վայրկեան, այո՛, գէթ մի վայրկեան, իսկ յետոյ՝ թէկուզ մահ (զուխը խոնարհում է նրա կրծքին):

Էրեկլէ. (Անվերջ համբուրելով նրան) Ի՞նչու մահի անուն տալ: Ո՞վ կը համարձակուի քո մի հատ մազին դիպչել, երբ դու հանգչում ես իմ կրծքին:

Ռուբայա. (Բուռն տարփանքով փաթաթուելով նրան օտի նման) Օ՛, երանի՛ մենք հիմայ հեռու, հեռու լինէինք... այնտեղ, ինչտեղ ես ապրել ու մեծացել եմ—Մինգրելիայի ծովափին: Ա՛խ, ի՞նչպէս կ'ուզէի, որ այնտեղ երկուսս էլ թեթևաւաց մակոյկ նստած՝ օրօրուէինք ալիքների վրայ և ականջ դնէինք ջրի փաղաքշալի ծփանքին, և ես նայէի մերթ երկնքի աստղերին, մերթ քո աստղ-աչքերին և ներշնչէի ծովափնեայ ծաղիկների ու քո շնչի անոյշ բոյրը... և երգէի քեզ համար սիրոյ երգեր... և հալուէի քո մէջ, ինչպէս ամպերն են հալում արևի հրավառ շողերում:

Էրեկլէ. (Սիրոյ կրքից ասես խելքը կորցրած) Ուզում ես՝ փախչենք: Այստեղ բակումն են իմ ձիերը—թեթև ու սրարշաւ, քան հողմն ու կայծակը: Նրանց պահպանում են իմ ընկերները: Մենք կը սլանանք մրրկի պէս. մեր ետևից հասնել չեն կարող թագաւորի բոլոր զօրագնդերը (ուզում է գնալ):

Ռուբայա. (Բռնելով նրա թեւքից) Ո՛չ: Մեր չոր կողմը, ամեն տեղ էլ պահակներ կան... Եւ այստեղ ամեն մի վայրկեան... (ականջ է դնում): Ես քեզ կ'ասեմ, երբ կարող ենք փախչել: Լսի՛ր, դու գիտես—ո՞վ եմ ես:

Էրեկլէ. Գիտեմ, որ ես քո ստրուկն եմ, իսկ դու—իմ թագուհին:

Ռուբայա. (Պորամանկ ու իշխանական եղանակ տալով ձայնին) Ուրեմն գիտես—ո՞վ եմ ես: Այո՛, ես Ռուբայան եմ, Սիւլէյման թագաւորի սիրած ստրկուհին: Թագուհիս պառաւել է. թագաւորը ձանձրացել է նրանից: Օ՛, ես այդ նկատել եմ... Եւ ըստեղ ես պիտի բռնեմ. ես պիտի թագուհի լինեմ: Այդ նինձ գուշակեց մի պառաւ կին, երբ ինձ ծախում էին: Առաջ Լաց էի լինում, բայց երբ իմացայ, որ թագուհի եմ դառնալու, դադարեցի լալուց: Ո՛ւր պիտի դու տանես ինձ, որ մենք վըրաստանի թագաւորի երկաթէ ձեռքից ազատուել կարողանանք: Մեր ետևից կ'ընկնեն, մեզ կը սկսեն որսալ, ինչպէս վայրի գազաններին են որսում, և երբ բռնեն... Օ՛, դու չես ձանաչում Սիւլէյման թագաւորին:

Էրեկլէ. Դու Սուլէյման թագաւորի ստրկուհին ես:

Ռուբայա. (Հպարտութեամբ) Այո՛: Ես նրա կինը պիտի դառնամ, երբ նրա հրամանով կը սպանուի թագուհին: (Պորհրդաւոր

Այդ շուտով կը լինի: Նա ինձ ասել է, որ հետեւեմ թագուհու ամեն-մի քայլին... Նա հաւատ չի ընծայում նրան,—օ, չկարծես թէ Սիւլէյմանը նրա անհաւատարմութիւնիցն է վախենում: Եթէ Սիւլէյմանից առաջ նա ձեր թագուհին չլինէր եղած, վաղուց թագաւորը նրան բաշխած կը լինէր իր ծառաներից մէկին: Ահա թէ ինչչափ գնահատում է նա թագուհու գեղեցկութիւնը: Եւ այժմ, երբ վերադառնանք, բաւական է մի խօսք ասեմ թագաւորին—ե թագուհու գլուխը ուսերին չի մնալ: Դու չես ճանաչում Սիւլէյմանին: Նա արիւն է սիրում: Մի անգամ նա հէնց լուսամուտիս առաջ տասներկու մարդ զլխատել տուաւ: Եւ ամեն անգամ, երբ կտրած գլուխը գետին էր գլորւում ու արիւնը ցայտում, ես տեսնում էի, նա այսպէս էր անում (աչքերը կկոցում է):

Էրեկլէ. (Դուռն խանդոտութեամբ) Էլ ինչն ես ինձ այստեղ կանչել, քանի որ դու նրա ստրկուհին ու հարձն ես եղած: Ինչի՞ քո անյաղթ գեղեցկութեամբ շողացիր իմ աչքին: Ես քո մի հատ մազն անգամ չեմ տալ ոչոքին: Հասկանո՞ւմ ես: Դու պիտի միայն իմը լինես, միայն իմը:

Ռուքայա. Դու անմիտ երեխայ ես: Կամ գուցէ ամենեին չես ուզում ինձ: Մի՞թէ ես սիրում եմ թագաւորին: Ես քեզ եմ սիրում, ես քեզ համար եմ կեանքս մահուան վտանգի ենթարկել՝ գալով այստեղ...

Էրեկլէ. (Արքից եւ վշտից դողացող ձայնով) Ռուքայա...

Ռուքայա. Լո՞իր (նամբուրում է շրժունքները) Խանդոտ մի լինիր: Նա ձեր է, իսկ դու ջահիլ ես: Մի՞թէ քեզ ճանաչողը կարող է նրան սիրել: Բայց նա թագաւոր է... Նա անեղ է ինչպէս սուր. նա սոսկալի է ինչպէս մահ: Եւ գիտես, նա միշտ մի նայուածք ու մի ձայն ունի՝ և՛ սիրոյ, և՛ զայրոյթի համար, և՛ փաղաքշելիս, և՛ սպանելիս: Երբ նա նայում է, նրա հայեացքը շանթի նման քարն է ձեղքում ու անցնում: Ինձ հիմայ էլ թւում է, թէ նա Թիֆլիսից, սարերի ու անտառների, պատերի ու ժայռերի միջով տեսնում է ինձ այստեղ՝ քեզ հետ միասին... (դողալով կայում է Էրեկլէին: Սա ականայից ցնցում է եւ անով չորս կողմն է նայում: Ռուքայան ծիծաղում է մեզմ ու կլկան ծիծաղով): Ա՛յ, տեսնո՞ւմ ես, դու էլ ես դողդողում... Ռ՛ւր պիտի փախչենք մենք նրա ձեռքից:

Էրեկլէ. (Վրուխն առնելով փերի մէջ) Դու իմ խելքը տաբար, և չեմ հասկանում, ինչ է կատարւում ինձ հետ: Ես միայն մի բան եմ փափագում—քեզ տեսնել, քեզանով շնչել...

Ռուքայա. (Նոյն տարփանքով) Ե՛ս էլ... Ես էլ միայն քեզ

եմ փափագում... (Ալ-Ռազաքը երեւում է ծառերի շուարում եւ ականջ է դնում): Օ՛, սրպիտի գիշերներ կ'անցկացնենք մենք, իմ անգին: Ես օձի պէս սողալ գիտեմ գիշերային խաւարում: Փետուրից էլ թեթե են իմ քայլերը: Ես քնած շան վրայով այնպէս անցուդարձ կ'անեմ, որ նա չի արթնանալ... Հնազանդիր իմ կամքին, և ես այնպիսի երջանկութիւն պարգևեմ քեզ, որպիսին չէ ճաշակել ո՛չ մի մարդ... (Թեթե օիջ արծակիով՝ արագ վեր է թռչում եւ երեսը դարձնում է դէպի թփերը, որոնց ետեւը պահուած է Ալ-Ռազաքը) Այստեղ մարդ կայ (Էրեկլէն նետում է դէպի թփերը եւ բռնում է Ալ-Ռազաքին):

V

Ալ-Ռազաք. (Ուզում է աղաղակել) Այստ... (Էրեկլէն մի շարժումով փակում է նրա բերանը եւ բռնում է կոկորդից):

Ռուքայա. (Սօտ վազելով եւ ծանաչելով Ալ-Ռազաքին) Սպանիր դրան, սպանիր...

Էրեկլէ. Կեանքդ կը բաշխեմ քեզ, եթէ երդուես...

Ռուքայա. Սպանիր դրան: Դա ներքինի է. դա շուն է: Կ'երգուի, բայց կորստի կը մատնէ ինձ էլ, քեզ էլ: Սպանիր, ասում եմ քեզ:

Էրեկլէ. (Դաշոյնը մերկայցնելով՝ ուզում է վրայ բերել, բայց յանկարծ կանգ է առնում) Ռուքայա, նա նայում է...

Ռուքայա. Վախկոտ: Չարկիր:

Էրեկլէ. (Դաշոյնը խրում է նրա կուրծքը: Ներքինին անշնչացած ընկնում է գետին: Չարհուրանքով) Ես սպանեցի:

Ռուքայա. (Թեքւում եւ նայում է սպանուածի աչքերի մէջ) Հիմայ նա էլ ոչինչ չի ասել: (Սիրաջերմ եւ երկար համբուրում է Էրեկլէին: Արագօտէն) Ես քեզ լուր կը տամ: Միշտ մօտիկ եղիր: Փախիր (Անադմուկ չքանում է ստուերի մէջ: Միւս կողմից ներս է վազում Դաթօն):

VI

Դաթօ. Օթար-բէկը պահակներին առած՝ շրջում է տան չորս բոլորքը... Այս ինչ բան է:

Էրեկլէ. (Համարեա ինքնամոռացութեան մէջ) Ներքինին է: Ես սպանեցի: Նա հրամայեց:

Դաթօ. Դու ամենքիս էլ կորստի կը մատնես: Փախչենք: Քնած ձեռնանք (բաշխով տանում է Էրեկլէին: Ներս է մտնում Օթար-բէկը սպառազէն: Նրա ետեւից պահակախումբը):

VII

Օթար-բէկ. (Պահակներից մէկին) Պահակներին փոխիր: Ես  
ամբողջ գիշերը չեմ քնելու:

Պահակներից մէկը. Նայիր, տէր... Այստեղ մարդ է ըն-  
կած... նա սպանուած է... (Օթար-բէկը եւ պահակախումբը մտնում  
են: Սարսափած) Ալ-Ռազաք:

Օթար-բէկ. Այո... Ալ-Ռազաքն է: Շուտ արէք, շուր բե-  
րէք...

Պահակներից մէկը. Շունչ չի քաշում:

Ընդհանուր խօսակցութիւն. Դաշոյնով է սպանուած...  
սրտին է խփած... դաւաճանութիւն... Այգին պիտի խուզար-  
կել: Օգնութիւն (երկրորդ յարկի վանդակապատ պատուհանում երևում  
է Զէյնար Թազուհին):

VIII

Զէյնար. (Հրամայական ձայնով) Ո՞վ է համարձակում իմ  
հանգիստը խանգարել. (երեսը դարձնելով դէպի սենեակի ներսը՝ կանչում  
է) Ալ-Ռազաք... վայր իջիր, Օթար-բէկին ու պահապաններին  
խսկոյն կանչիր այստեղ...

Օթար-բէկ. (Ներքեւից) Օթար-բէկն այստեղ է, թագուհի:  
Նա հսկում էր, որ քո նինջը խանգարող չլինի: Աչքս անխուփ  
ամբողջ գիշեր է պահակախումբովս ման եմ գալիս քո օթեանի  
շուրջը:

Զէյնար. (Զայրոյթով) Ալ-Ռազաք:

Օթար-բէկ. (Գոհոյ ձայնով) Ալ-Ռազաքը սպանուած է,  
թագուհի: Մենք հէնց այս բոպէիս գտանք նրա դիակը: Ահա  
նա: Քեզ զարթեցրեց պահակների աղաղակը:

Զէյնար. (Սաստիկ ապշած) Սպանուած է: Ո՞վ է սպանողը:

Օթար-բէկ. Զգիտեմ, թագուհի:

(Ներս վազելով հաւարում են պահակներն ու Օթար-բէկի մարդիկը:  
Նրանց մէջ են Բասօն, Անանիան, Կաթօն եւ Էրեկէն: Ընդհանուր յուզ-  
մունք ու իրարանցում):

IX

Զէյնար. (Հեռանում է պատուհանի մօտից) Ալ-Ռազաքը սպա-  
նուած է (ծածկուած է):

Օթար-բէկ. (Ահեղ ու սպառնալից ձայնով՝ շրջապատողներին)

Հէյ, ծառաներ, իմ տանը սպանուած է մեր տիրոջ մերձաւոր  
ծառան ու բարձրադիր անձը, որին ինքը թագաւորն էր ու-  
ղարկել ինձ մօտ: Ո՞ւմ ձեռքն է յանդգնել արատաւորելու իմ  
տունը: (Լուռ թիւն):

Պահակներից միջանիսը. Այդ քրիստոնեաների բանն է:  
Նրանք մեզ դարան են լարել: Դէպի գէնք: Պիտի կոտորել ա-  
նիծած շներին (ձեռքերը տանում են սրերին. երեսները կրակ կորած):

Բեսօ եւ Օթար-բէկի ծառաններից միջանիսը. Սպա-  
նուածին մենք իսկի չէինք ճանաչում... Մենք մեր մեծագոր  
տիրոջ հաւատարիմ ծառաներն ենք: Կարելի է դուք ինքներդ  
ատում էիք նրան... Այստեղ էք սպանել, որ մեզը մեզ վրայ  
զցէք... Դաւաճանութիւն (մերկացնում են սրերն ու դաշոյնները:  
Պատուհաններում երևում են անաբեկ կանայք: Վէճն աւելի ու աւելի  
սաստկանում է. կանանց ծիչեր):

Պահակախումբը. Պիտի ոչնչացնել այս անհաւատարիմ-  
ների բունը... նրանց արմատը պիտի կտրել... Լա-Իլլահ-իլ-  
Ալլահ: Վրայ տուէք, շարդեցէք:

Օթար-բէկի ծառաները. Օգնութեան հասէք, այ քրիս-  
տոնեաներ: Օթար-բէկի մարդկանց կոտորում են:

Միջանիսը. Անիծած շներ:

Միանները. Արիւն խմող գայլեր... (այդ բոլորը տեղի է ու-  
նենում արտասովոր արագութեամբ: Օղում շողողում են սրեր ու դաշոյն-  
ներ: Զանազան կողմերից վազէվազ ներս են Թափուած Թէ մէկ եւ Թէ միւս  
բանակի մարդիկ):

Օթար-բէկ. (Որոտալից ձայնով) Մերեդ տեղը դրէք, շներ:  
Միթէ մոռացել էք, որ ձեր առաջ կանգնած է Սիւլէյման թա-  
գաւորի զօրքի հրամանատարը Քարթալինում: Միթէ իմ մի  
խօսքը բաւական չէ, որ անմեղների ու մեղաւորների գլուխնե-  
րը գետին գլորուեն: Մերեդ պատեան դրէք, ասում եմ ձեզ  
(Ամենքը սրերը պատեաններն են դնում եւ միայն սպանանքով ու չա-  
րանայեաց նայում են իրար): Զօրականներ և մարդիկ. ալեւոր գլու-  
խըս արատով ծածկուեց: Դրսից ոչոք չէր կարող մուտք գոր-  
ծել այստեղ: Մարդասպանը կամ իմ ծառաներիցն է, կամ պա-  
հակներից մէկը: (Տրտունջ): Լսեցէք ինձ (ցոյց է տալիս աւագ պա-  
հակի վրայ, որը արտ է): Իբն-Սաադն ամբողջ գիշեր մօտիցս չէ  
հեռացել: Իբն-Սաադ, առ քեզ իմ մատանին, թե առած թռիչ  
Գորի և իսկոյն հինգ հարիւր հոգուց բաղկացած մի զօրախումբ  
հասցրու այստեղ (Իբն-Սաադը արագ եւ Թեթեւաբալլ հեռանում է):  
Դէ, այժմ մարդասպանին որոնեցէք: Եթէ մինչև զօրախմբի գալլը  
չէք գտնիլ նրան, իմացած եղէք, որ թէ ձեզ բոլորիդ, որ կանգ-  
նել էք այստեղ, թէ այս տան մէջ սպրոդներին, թէ թագուհու

հետ եկածներին,—ամենքին էլ, ամենքին էլ սրի բերան քաշած՝ կտոր-կտոր կ'անեմ, արևը հէնց նոր ծագելիս: (Ընդհանուր աղմուկ եւ յուզմունք: Լսում են այսպիսի ֆրազներ. «Ես տիրոջս հետ էի... Ես ձիերն էի պահպանում... Ես պահպան էի կանգնած... Աստուած անիծի՛ մարդասպանին... Խոստովանեցէք... Մենք ի՞նչ մեղք ունենք, ի՞նչի ամենքս կորչենք...» Խօսակցութիւնն աւելի ու աւելի աստկանում է):

Դաթօ. (Վերջին աղմուկի ժամանակ հեռանում է խորքը, կանգնում է բարձր ցանկապատի վրայ ու սեպից բռնած) Հէյ մարդիկ: (Ամենքն էլ շուռ են գալիս): Ներքինին առաջուց գնաց Մահմէդին իմաց տալու, որ շուտով իր ետեկից գալու է և՛ գայլ-գազան Միւլէյմանը: Նրան ուղարկեցի ես՝ Դաթօ Գլխաս... Բռնեցէք ինձ (արագ ոտիւնով ջրանում է ցանկապատի ետեւը: Ամենքը սաստիկ գոռում-գոչումով ընկնում են նրա ետեկից):

Չայնեք. Թռու ձիու մէջքը... Հասէք ետեկից (լսում է հրացանների կրակոց):

Դաթօի ձայնը. (Հեռանալով) Հրացաններդ ձեռ ու ոտը կապածների վրայ պարպեցէք, այ շներ (սարսափելի աղաղակ):

Չայնեք. Չիաներ, ձիաներ հասցրէք: Երեք հոգի են ընկել ետեկից... Համենէլ են աշխատում... Նա շատ առաջ է... (Հեռուոր պայծրին): Քեարիմն ընկաւ ձիուց... Փախստականը ըսպանեց նրան... Ե՛տ են մնում... Է՛լի երեքն ընկան... Չէնք հասնի...

Օթար-բէկ. (Վատադարձ) Հարիւր ոսկի նրա գլխի համար, տաս մարդ թող ձի նստի նրա ետեկից ընկնի... (Տաս հոգի դուրս են վազում: Նա նկատում է Անանիային եւ Էրեկէին) Բռնեցէք այս երկուսին... (Ձիւնորները եւ ծառաները յարձակում եւ բռնում են Անանիային եւ Էրեկէին: Սրանք հաշիւ պիտի տան ինձ բոլոր կատարուածի համար: Շիկացրէք երկաթը: Տարէք մարմինը: Սրանց բերէք իմ ետեկից: (Աշտարակի դրան առաջ պառաւ աղախնի ձեռքին յենուած՝ յայտնում են Չէյնաբը եւ նրան սեղմուած Բուքայան):

X

Չէյնաբ. Օթար-բէկ, այս ի՞նչ է նշանակում: (Բոլորը խաղաղում են):

Օթար-բէկ. (Գլուխ տալով) Դաւաճանութիւնը ներս է մըտել իմ տունը, թագուհի. երեք օձեր ներս են սողացել, հանդարտութեամբ տեղաօրոշել իմ յարկի տակ և խայթել իմ հիւրին ու բարեկամին: Մէկը փախաւ, իսկ երկուսը իմ ձեռքումն են: Ես իսկոյն կը վերադառնամ, թագուհի: Տարէք սրանց

Չէյնաբ. Սպասեցէք: Ես ինքս հարցուփորձ կ'անեմ յանցաւորներին: (ձանաչելով Էրեկէին եւ Անանիային, զուստուում է): Սրանք են մարդասպանները:

Օթար-բէկ. Սրա որդին է, թագուհի. իսկ այս լակոտի եղբայրը:

Չէյնաբ. (Լուռ իջնում է սանդուխի աստիճաններով: Նրա եւ ձերբակալուածների մէջտեղը կանգնած է կատարութիւնից զոզացող Օթար-բէկը: Չորս հոգի բռնած են Անանիային եւ Էրեկէին: Տար-տասներկու հոգուց բաղկացած զինուորների մի խումբ կանգնած է նրանց ետեւը: Չէյնաբի ետեւը—Ռուքայան: Մի վեց մտրդ Ալ-Ռազարի մարմինը ձեռների վրայ առած՝ կանգնած են առանձին խմբով: Պատուհաններում՝ կանանց դէմքեր): Ի՞նչ էր պատճառը, որ սպանեցիք սրան:

Անանիա (Վկանջ դնելով). Մենք ոչ մի մեղք չունենք, ոչորման թագուհի: Ո՛չ ես էի իմանում, ոչ էլ որդիս, որ էն չարագործն էգպէս բան էր դրել մտքումը: Որդի չէ, կրակ ու պատուհաս մեծացրի նրան իմ գլխին: (Վկանջ է դնում):

Չէյնաբ. (Խորին սիրով նայում է Էրեկէին. բաց խիստ եղանակով) Ի՞նչպէս սիրտ արիւր, այդպիսի բան անել, այ պատանի:

Էրեկէ. (Նայելով Ռուքայային, որն անմկատելի բացասական շարժումն է անում զխով) Ես ոչինչ չգիտէի, թագուհի:

Անանիա. Ես ու նա քնած էինք ձիաների մօտ, թագուհի: Հարցրու ախոռատանն եղած մարդկանց... Մէկ էլ լսում ենք՝ գոռում-գոչումի ձէն է գալիս... Մարդիկ դէս ու դէն են վազում... Մենք էլ վեր թռանք... Դեռ հարցրի էլ ամենքին, թէ Դաթօին ո՞տեանող չի եղել...

Օթար-բէկ. (Վատադուժեամբ) Մ՛տ ես ասում, բաւթան շուն... Ես քեզ լաւ եմ ճանաչում...

Չէյնաբ. (Օթար-բէկին) Ո՞վ է համարձակուում թագուհու հետ միասին հարցուփորձ անել յանցաւորներին:

Օթար-բէկ. Ներքին, սով տիրուհիս:

Չէյնաբ. Սպանուածի մարմինը ներս տարէք: (Մարմինը ներս են տանում: Պահակախմբին եւ հաւարուած մարդկանց) Տրուեցէք ձեք տեղերը: (Ամենքն էլ ցրում են, բացի չորս հոգուց, որոնք բռնած են Անանիային եւ Էրեկէին): Դու էլ գնա, քնիր, գեցեցկուհի. էլ ոչեք չի վրդովիլ քո բունը:

Ռուքայա (Չուզեմալով հեռանալ). Առանց քեզ վախենում եմ, տիրուհիս:

Չէյնաբ (Ելանաբար). Գնա, գաւակա: Ինչերային ցօզն ու անքնութիւնը կը վրասեն քո գեղեցկութեան: Իսկ որպէսզի դու չվախենաս, զոտնդ պահակներ կը կանգնեն: Գնա:

Ռուքայա. (Չար ու խէժ հայեացք պցելով թագուհու երեսին) Հնա-

զանդ եւ հրամանիդ, տիրուհի: ( Երկկէի մօտից անցնելով՝ կանդ է տանում ու քնքոյշ, հնչուն ձայնով եւ մի առանձին խորհրդաւոր շեշտով հարց է տալիս թագուհուն) Ուզում ես հրամայել, որ հէնց հիմա՝ մահուան պատիժ տան սրանց, թագուհի:

Ձէյնար (Ռիտ զարմայած՝ շտկուելով). Բեզ ի՞նչ. ինչի՞դ է պէտք իմ վճիռը:

Ռուբայա. (Ռիտ խոնարհ) Գուցէ թագաւորն ինքը կ'ամենայ հարցուփորձ անել սրանց, թագուհի: Ներքի յիմար խօսքիս: (Համբուրում է նրա ձեռքը եւ հեռանում՝ աչքը գցելով Երկկէին):

Ձէյնար. (Օթար-բէկին, աչքը Երկկէի վրայ) Ռուբայան ուղիղ է ասում: (Վտուրուժեանք) Եղթայեցէք զրանց. միայն տեսէք— մի հատ մահ անգամ չպահասէ զրանց զլիւից: Տարէք: (Անանիային եւ Երկկէին տանում են: Ձէյնարն հայեացքով երկար հետեւում է նրանց եւ ապա ուժաւատ ընկնում է ծառի տակ գտնուող թախտի վրայ: Օթար-բէկն խոխոյն նետում է դէպի թագուհին):

XI

Օթար-բէկ. Ներքի ինձ, ողորմած թագուհի: Ես՝ քո վաղեմի ծառայ՝ չկարողացայ անվրդով պահպանել քո հանգիստը: (Վլսի զողոցով) Ես արժանի եմ մահուան—և զթուփիւն չեմ խնդրում:

Ձէյնար. Եւ մի էլ սպասիր, Օթար-բէկ:

Օթար-բէկ. Մեծափառ թագուհի, հզօր թագուհի: (Մունկ է չորում): Բո անեղ ցասումը, քո աչքից ընկնելն ինձ այս օրը հասցրեց: Բայց թող միայն, թող իմ արիւնն յազեցնէ քո գայրոյթը: Խնայիր աղջկանս, ո՛վ զթառատ թագուհի: Ինչի՞դ է պէտք նրա կեանքը:

Ձէյնար. Ուրեմն դու սիրում ես նրան:

Օթար-բէկ. (Անկապ, սողալով նրա ոտքերի առջ) Օ՛, թագուհի. եթէ դու լսէիր նրա ասածները... Ես ինքս էլ չզիտէի, թէ սրչափ սիրում եմ նրան... Ինքս վարձկանի մէկը, անառակ, Աստուա մոռացած... Նրան մէջ ժպտում է ինձ իմ երիտասարդութիւնը, մեծագոր թագուհի: Վաղուց էր ես նրան չէի տեսած, այսօր տեսայ... Օ՛, տիրուհի. մեծափառ, հզօր թագուհի: Ամեն ինչ ես զո՞ք բերի քեզ ու թագաւորին... Ամեն ինչ մոռացայ նրա և քո փառքի ու գօրութեան համար... Ես դաւաճան չեմ, ո՛վ մեծաշուք թագուհի... Ո՛չ, դաւաճան չեմ... Թող միայն ինձ կործանէ քո անեղ ցասումը—ազատութիւն տուր նրան, մի գոհիր նրա կեանքը... զոհիր միայն ինձ (հեկեկալով համբուրում է նրա հանդիւրը):

Ձէյնար. (Արտիացած, բայց զսպիլով ուրախութիւնը) Օթար-

բէկ. բայց ո՛վ կը լինի նրա տէրն ու պաշտպանը քո մահից յետոյ: Ի՞նչտեղ պիտի նա փրկութիւն գտնէ այն մարդկանց ձեռքից, որոնք վխտում են Վրաստանում, որպէս գայիքը ոչխարի հօտում:

Օթար բէկ. Ես մի հաւատարիմ ծառայ ունեմ: Նա կը տանէ նրան Իմերէթ:

Ձէյնար. Բայց նորերս դե՛ւ չէիր ասողը—թէ ինչո՞վ են թուրքերը պարսիկներից կամ արաբներից լաւ: Նրա համար ապաստան չկայ ոչ մի տեղ, Օթար-բէկ, ոչ մի տեղ: Սկսած Կասպեան ծովից մինչև լայնատարած Սև Ծովի ափերը՝ չկայ մի մարդ, չկայ մի թիզ հող, որ ազատ լինի: Ամեն տեղ արբիւն ու բռնութիւն: Ամեն տեղ Իսլամի ոտքը կոխկրտում է տապալուածների կրծքերը: Ամեն տեղ արասա՛ւր ու ստրկութիւն: Ամեն տեղ մահ, մուրացիկ վիճակ, գերութիւն, տանջանք, տառապանք... և ստրկութիւն, ստրկութիւն—միայն ստրկութիւն՝ ծաւալուած սև ու մութ գիշերուայ նման:

Օթար-բէկ (Աղշտ նրա աչ եղանակ խօսելուց). Մեծափառ թագուհի...

Ձէյնար. Ո՛ւր է նա, ո՛ւր է այդ թագուհին: Ո՛ւմ ես դու այդպէս կոչում, Օթար:

Օթար-բէկ. Բեզ, Ձէյնար թագուհի:

Ձէյնար. Ես ճանաչում էի թամար թագուհուն. իսկ ես—եւ ստրկուհի եմ և ոչ թագուհի: Ես յիշում եմ թամարին՝ ջանիլ, հպարտ, բաց երեսով, Թէյմուրազ թագաւորի լուսագեղ և բերկրալի գուգակցին, Աստու ազատ ժողովրդի բերկրանքին: Ազատ սիրով ինձ շրջապատում էին ձեր ազատ կանայքն ու աղջկերքը, Վրաստանի իշխաններն ու ազնուականները: Մեր օրհնեալ երկնքի տակ, սուրբ զանգերի զողանջիւնին ունկնդիր՝ անուշաբոյր ալիւններն ու պարարուն դաշտերն անցնելով մենք ուխտի էինք գնում մեր հայրենի սրբավայրերը մեծահանգէս տօներին: Ազատ միանում էր մեզ հետ ճանապարհին ամեն պատահող, և թագաւորն ու թագուհին ազատ ժողովրդի գլուխն անցած՝ ազատ գնում էին աղօթելու առատ եկեղեցիներում: Եւ ազատ ու զօրեղ հնչում էին մայրենի երգն ու տաղը մեր խընջոյքներում, հայրենական տաճարների ստորոտներում: Եւ թագաւորն ազատ ժողովրդի հետ սեղան բաղմած՝ ազատ երկրի վրայ, երկնքի հովանու տակ, ինքն էլ մասնակից էր այդ ժողովրդի քէֆին ու ուրախութեան: Եւ մե՛ծ էր, անչափ մեծ էր մեր փառահանգէս խնջոյքի ապարանքը: Երկնակամարն էր նրա առաստաղը, անտառախիտ լեռները—նրա պատերը, զբմբուխտի բլուրները—նրա յատակը, իսկ հայրենական տաճարները—նրա սրբութիւնը: Ազատ վրացին անվախ որոնում

էր ազատ վրացունու սէրը: Առանց ան ու դողի՝ մայրը կըրծ-  
քին էր սեղմում իր դաւակին: Առանց երկիւղի հողա-  
գործն իր վարուցանքն էր անում, հովիւն իր հօան էր  
պահպանում: Եւ ամենմէկն ազատ քաղում ու վայելում էր իր  
այգիների բարիքները: Եւ Աստուած՝ շրջապատուած իր սրբ-  
բերով՝ ժպտում էր Վրաստանին և երկնքից՝ օրհնութիւն ա-  
ռաքում իր հաւատարիմ, իր ուրախ ու ազատ ժողովրդին, որը Տի-  
րոջ Խաչի միակ նեցուկն էր բովանդակ արևելքում... Իսկ հիմա:

Օթար-բէկ. Թագուհի:

Զէյնաբ. Ահա մենք երկուսս էլ դէմառդէմ կանգնած՝  
իրար ենք նայում, Օթար: Իմ աչքերն արդէն մոռացել են լա-  
լու սովորութիւնը. բայց նրանք սովորել են ստել, շողորթիւ  
և ամբողջ գիշերներ չքնել յուզումներից ու մտածումներից:  
Իսկ դո՛ւ, դո՛ւ, քաջոյժ ռազմիկ և Թէյմուրազի բարեկամ, սի՛  
ես դու այժմ քո ամբողջ ոյժով ու իշխանութեամբ: Դու—ըս-  
տըռուկ ես: Դու լոկ շուն ես Սիւլէյմանի աչքում, մի շուն, որը  
պիտանի է միայն որս բռնելու համար, որին վիճակուած է  
միշտ դողդողալ նրա մարակի տակ և միշտ վազվզել նրա  
ձիու ետևից: Եւ ի՞նչ է քո բոլոր ծառայութիւններիդ վարձը:  
Քեզնից խլում են քո սիրասուն աղջկանդ, տանում են օտար  
աշխարհ ու նետում մեր հայրենիքի գլխին դժողը դարձած  
հրէշի ծոցը իբրև մի խաղալիք նրա մէկ-երկու գիշերուայ պիղծ  
գուարճութեան համար: Իսկ քեզ մահ է սպառնում, որ մի ուրիշը  
ոճիր է գործել սպանելով ներքինին—այդ վարչելի արարածին:  
Հապա Վրաստանը, Օթար, Վրաստանը: Մի նայիր, տես ի՞նչ  
է կատարում չորս կողմը: Ասում եմ քեզ—ամեն տեղ ստոր-  
կութիւն, միայն և միայն ստրկութիւն՝ ծաւալուած որպէս սև ու  
մութ գիշեր:

Օթար-բէկ (Գլուխն առնելով ձեռքերի մէջ). Թագուհի, թա-  
գուհի:

Զէյնաբ. Հապա ես: Գիտես—նմ շղթայել տուի հէնց  
այս ըոպէիս: Գիտես—նմ պիտի շղթայակապ տանեմ Սիւլէյ-  
մանի մօտ: Գիտես—նմ պիտի դժոխային տանջանքներ կրելով  
մեռնի աչքիս առաջ: Օթար, գիտես... սի՛: Իմ որդին:

Օթար-բէկ. (Չարհուրած) Ի՞նչպէս... Թագուհի... քո որ-  
դին:

Զէյնաբ. Քսան տարի է, ես նրան չէի տեսել: Օտարի  
ձեռքին մեծացաւ նա: Օտարի աչքն էր տեսնում, թէ ինչպէս  
նա հասակ է առնում, տղամարդ է դառնում: Օտարի ականջն  
էր լսում նրա ձայնը, նրա խօսքուղորոյցը: Իսկ ես ամբողջ քը-  
սան տարի չէի համարձակում գէթ մի անգամ, գէթ հեռուից

նայել նրա երեսին: Եւ այսօր առաջին անգամն էր, որ ես  
տեսայ նրան, տեսայ—և չհամարձակուեցի փարել նրա վզով,  
սեղմել նրան իմ կրծքին, ողողել նրան իմ արտասուքներով:  
Եւ նրան ուղղած իմ առաջին խօսքը—դատապարտութեան  
խօսք էր, իսկ իմ առաջին փաղաքշանքը—շղթաներ:

Օթար-բէկ. Բայց ի՞նչպէս եղաւ, որ նա փրկուեց, Թա-  
մար: Ամբողջ ժողովուրդը գիտէ, որ սպանուել է:

Զէյնաբ. Յիշիր այն գիշերը զարհուրելի ճակատամար-  
տից յետոյ, որի միջոցին սպանուեց Թէյմուրազը և ջախջա-  
խուած ընկաւ Վրաստանը: Բոլորովին վիրաւորուած, մի փոք-  
րիկ խուճը գինուորների հետ դու սրարչաւ եկար ինձ մօտ,  
Օթար, Մետեխի ամբողջ՝ գուժելու ինձ ամուսնուս մահը և  
մեր թաղաւորութեան անկումը: Եւ դու ընկար իմ ոտքերի  
մօտ՝ արիւնաքամ լինելով անս այս վէրքից... (ցոյց է տալիս Օ-  
թար-բէկի երեսի սպին):

Օթար-բէկ. Օ՛, չարագէտ, սարսափելի օր:

Զէյնաբ. Ես կանգնել էի քո գլխավերեք, Օթար, և երե-  
խաս սեղմում էի կրծքիս: Իսկ մեր զօրքի վերջին մնացորդնե-  
րը՝ մէկը միւսի ետևից ընկնելով, ջարդուած, կոտորատուած էին  
պարսպների վրայ: Սիւլէյմանի զօրքերը գետի երկու կողմից  
մորեխի նման ծածկել էին շրջակայ լեռները և ծայրը չէր ե-  
րևում: Թիֆլիսը խարոյկի պէս բոցավառուած էր Մետեխի  
ստորոտում: Պատերն անգամ դողում էին լաց ու վայնասունից:  
Գիշերը կարծես վառ ցերեկի էր փոխուել հրդեհների ցոլքից:  
Գետի ալիքները կարմրել էին արիւնից: Եւ փլչում ընկնում էր  
մի ամբողջիւն միւսի յետևից: Եւ թշնամիների յաղթական ա-  
ղաղակներն աւելի ու աւելի էին սաստկանում և դղրդացնում  
օդը: Երեք հոգի էինք մնացել վերջին ամբողջիւնը պաշտպա-  
նողներս՝ ես, կրծքիս հանգչող մանուկ որդիս և դո՛ւ՝ ոտքերիս  
մօտ կիսամեռ ընկած զօրականդ (երկումս էլ լուս են): Ո՛հ, ես  
յիշում եմ այդ գիշերուայ ամեն մի վայրկեանը: Կարծես նա  
կրակով լինի դրոշմուած կրծքիս խորքում: Դու ուշքի եկար,  
նայեցիր աչքերիս—յիշում ես, Օթար:

Օթար-բէկ (խորին յուզմունքով). Յիշում եմ, Թամար: Ես  
վերկացայ և աչքերս մութ կոխած, պատերից բռնելով, լուռ  
ու մունջ գնացի մեռնելու քեզ համար: Ի՞նչ պատահեց յետոյ  
—չեմ յիշում: Ես ուշքի եկայ, երբ արդէն շատ օրեր էին ան-  
ցել, և, վկայ է Աստուած, որ ես կուում էի քեզ համար, մինչ-  
չև որ տարածուեց այն զարհուրելի լուրը, թէ դու... դու, Թա-  
մար...

Զէյնաբ. Դարձել եմ Զէյնաբ Թագուհի, Սիւլէյմանի սի-

բական կի՞նը, իմ Աստու և իմ հայրենիքի կրակ ու պատիժը...

Օթար-բէկ. Ե՛ս էլ գնացի քո ճանապարհով:

Զէյնաբ. Ուրեմն՝ այդ ճանապարհով էլ գնա՛ մինչև վերջը, Օթար: Գիտե՞ս ինչ անցաւ դիտովս քեզանից յետոյ: Լսի՛ր— և ապա դատի՛ր ինձ: Երբ զազանացած պարսիկները տապալելու վրայ էին մեր վերջին ամբողջիւնը, կատուի պէս մագլցելով քարափների վրայով, սրտեղից-սրտեղ էր, պատուհանիս հասաւ Անանիա Գլխան: Ձեռքին բռնած ունէր մի կրեխայ: Վսե՛մ գործ կատարուեց այդ վայրկեանին, Օթար: Վսե՛մ գործ: Այդ գործն սկսեց լուսաւորել իմ բովանդակ կեանքը. նա ինձ ուսուցեց, թէ ինչպէս պիտի ապրեմ:

Օթար-բէկ. Ի՞նչ գործ, ո՞վ թագուհի:

Զէյնաբ (Կլտովին պաշարուած յիշողութիւններով). Գլխան ինձ ասաց. «Պարսիկները որոնում են քո որդուն: Նա է ամենից վտանգաւորը նրանց համար: Տո՛ւր ենձ որդիդ: Ես նրան կը վերադարձնեմ քեզ, երբ հասնի ժամը: Թո՛ղ իմ որդին զո՛հ զընայ նրա փոխարէն»: Եւ որդուս առաւ ու անյայտացաւ: Իսկ երբ ներս խուժեց հրոսակների խումբը և շրջապատեց ինձ, իմ ձեռքին նրա որդին էր: Մեր դաւաճան իշխաններն արքայական զարդեր հագցրին ինձ և ձեռքս տուին մատուցարան, որի վրայ դրուած էին արդէն նուաճած ամբողջ բանալիները: Թեւեցս բռնած՝ հանեցին ինձ դարպասներից դուրս և ստիպեցին, որ ծունկ չոքեմ փոշու մէջ: Իսկ խեղճ երեխային կապկպած՝ դրին առջևս: Եւ նժոյզ հեծած՝ մտեցաւ մեզ Սիւլէյման թագաւորն՝ ինքնագո՛հ ու արբեցած իր յաղթանակով: Նա նայեց մանկանը— և ձին սմբակն իջեցրեց խղճուկի կրծքին... Օ՛հ, այն ձիւնը (երեսը ծածկում է):

Օթար-բէկ (Յնչուած). Աստուծոյ նահատակ: (Լուռ թիւն):

Զէյնաբ (Միանդամայն տարուած անցիակի յիշողութիւններով). Ինձ ծառայում էր Իսախարը: Միաժամանակ էին ծնուել մեր երեխաները: Եւ այդ սոսկալի գիշերը հայրն առաւ նրան մօր ձեռքից և բերաւ, տուաւ ինձ: Նրա անունն էր Էրեկլէ: Եւ այդ անունն է կրում այժմ իմ Գէօրգին: Որդուս հետքը թշնամիների աչքից ծածկելու համար Իսախարը մնաց ինձ մօտ: Թողեց և՛ տուն, և՛ ամուսին, և՛ իր վերջին կենդանի մնացած որդուն: Նրանց համար մօր տեղը բռնեց Անանիայի քոյրը: Մի ամբողջ տարի ինձ անյայտ էր որդուս վիճակը— չգիտէի փըրկուել է արդեօք, թէ՛ նա էլ սպանուել է: Մի տարուց յետոյ իմ հաւասարիմ ծառան ինձ՝ լուր տուաւ, որ Գէօրգին կենդանի է: Եւ այդ օրից, Օթար, սկսուեցին իմ ամօթանքի, մեղ-

սանքի և անպատուութեան տարիները: Ես ընդունեցի նրանց անիծեալ հաւատը Սիւլէյմանի վստահութիւնը գրաւելու համար, ես էլ սկսեցի նրան նմանուել, նրա ճանապարհը բռնել: Ես արիւն ու հալածանք էի պահանջում: Եւ իմ նոր անունն աւելի սոսկալի դարձաւ իմ հայրենիքում, քան նրա գահճի անունը: Ես գեղեցիկ էի և իմ գեղեցկութիւնը խաղալիք դարձրի նրա գարշ զուարճութիւնների համար: Իմ սէրն, իմ հարստութիւնը, արքայական փառքն ու պատիւս— բոլորն էլ ցեխն էր ընկած և տրորուած էր այդ արար եկեղերի ոտների տակ: Ես սկսեցի կեղծել, կեղծել երեսով, ձայնով, կրքով, իմ ամբողջ էութեամբ... Տարիներն անցնում էին: Եւ իմ անողորմութեան զո՛հ էին գնում հաւազատներ, բարեկամներ, իմ վաղեմի հաւատարիմ ծառաներ: Ես սովորեցի չխանայել ոչ ոքի. սէր, կարեկցանք, խղճի տանջանքեր— ողջը մեռաւ, քարացաւ սրտիս մէջ: Ես այլևս ոչոքի չեմ սիրում— ոչ հարազատներիս, ոչ բարեկամներիս, ոչ ինքս ինձ... նոյն իսկ որդուս: Ես սիրում եմ միայն իմ ժողովուրդը, իմ ցաւատանջ, աղքատ-անճար ժողովուրդը: Նրան զո՛հ բերի ես իմ արքայական ու կանացի պատիւը, իմ սրտի ճշմարտութիւնը, իմ անմահ հոգու փրկութիւնը: Ել ի՛նչ կարող էի տալ նրան:

Օթար-բէկ. Թամար, մի՞թէ այնպիսի պատե՛հ ժամ չգըտար, որ խոցես թշնամուդ սիրտը:

Զէյնաբ. Օթար, մի՞թէ արժէր լոկ վրէժ լուծելու համար զո՛հել այն բոլորն, ինչ որ ես զո՛հեցի: Սկզբում ես ինքս էլ միայն վրէժի մասին էի մտածում: Քանի՛քանի անգամ իմ զգուանքներից արբեցած՝ նա անզէն-անզօր նիրհել է կրծքիս: Բաւական էր, որ ձեռքս պարզեմ— և այդ անիծեալ շունն իր մահուան, գալարումներով կը յագեցնէր իմ վրէժխնդրութեան ծարաւը: Բայց մի՞թէ վրէժ, միայն վրէժ պիտի լուծէր Վրաստանի թագուհին, նրա հարազատ, օրինական թագաժառանգի մայրը, չարատանջ, յօշոտուած հայրենիքի դուստրը: Ի՞նչ օգուտ պիտի տար նրան այդ մահը: Մի՞թէ նրան կ'ազատէր ստրկութիւնից: Մի՞թէ քիչ կան Շահի ձեռքի տակ այդ տեսակ կամակատար ծառաներ— էլ աւելի կատաղի, էլ աւելի արիւնարբու: Ո՛չ, վրէժ չէր իմ սպասածը: Ես սպասում էի այն օրուան, երբ կը փոթորկուի ժողովրդի բուռն զայրոյթը. երբ նա յորձանք կը տայ, որպէս լեռնային հեղեղատ, երբ ամեն մի ստրկի մէջ կը զարթնէ վերջապէս ազատ ժարդը: Եւ այդ մարդկանց կ'առաջնորդէ իմ որդին: Եւ նրա շուրջը կը բոլորեն ազատ, քաջամարտիկ զինուորներ: Եւ ես իմ մեղքը, իմ անպատուութիւնը կը բերեմ, կը դնեմ նրա ոտքերի առջև,

որ նա դատէ ինձ: Եւ անեղ կը լինի որդու դատաստանը մօր համար: Բայց հէնց այդ անեղութիւնից կը տապալուի հզօր Իսլամը յաղթանակող Սուրբ Խաչի պատուանդանի տակ:

Օթար քէկ. Թագուհի, օ, սո՛ւրբ Թագուհի:

Ձէյնար. Ասում են՝ երջանկութիւն չկայ աշխարհումս: Ո՛չ, Օթար, կայ: Քո այդ արտասուքը, որ շողում է կրակուած երեսիդ,—դա է իմ երջանկութիւնը: Քո այդ հայեացքը՝ և՛ ահարկու, և՛ լուսավառ,—դա է իմ բախտաւորութիւնը: Դո՛ւ, որ փառք ու պատուով շրջապատուած՝ դեռ չես մոռացել քո հայրենիքը,—հապա ինչպէս կարող էին մոռանալ նրան այն թըշուառները, որոնք միայն ցաւ, միայն երկիւղ ու անարգանք են տեսել կեանքում: (Թփերի մէջ երևում է Սարան):

Օթար-քէկ. Թամար, Թամար:

Ձէյնար. Օթար, բարձրացրո՛ւ քո յաղթական սուրը: Քեզ կոչողը ո՛չ ես եմ, ո՛չ իմ որդին, ո՛չ էլ քո աղջիկը: Քեզ կոչում է քո ժողովուրդը երկրի վրայ և քո ծաղրուած, անարգուած Աստուածը երկնքում: Քեզ կոչում է այն սնապարտ մահուկը, որին տրորեց Սիւլէյմանի ձիու սմբակը: Դա Վրաստանի սիրտն է, Օթար, որից ծորեց մաքուր, անմեղ արիւնը:

Օթար-քէկ. Առաջ տար, ցոյց տո՛ւր ինձ իմ ուղին, ո՛վ իմ Թագուհի: Անէ՛ծք իմ ասորաքարը սրտին: Ամօթ իմ ալևոր դլին, որ փառքի ու անառակութեան համար ծախեցի իմ հայրենիքը, իմ Աստուծուն: Ներումն չեմ խնդրում ո՛չ քեզից, ո՛չ էլ Աստուծուց... չկայ ներումն ինձ համար... Չկայ ներումն ազգուրացիս և դաւաճանիս համար: Բայց վայ նրանց, որոնք ինձ այս օրն հասցրին: Հրամայիր, ի՛նչ ես ուզում—պատրաստ եմ:

Ձէյնար. Քո զօրքի վրացի զինուորները կը միանան քեզ հետ, կ'երթան քո կռիւից:

## XII

Սարա (Սուաչ գալով). Կ'երթան: Եւ ամբողջ Վրաստանը կը հետեւէ նրանց:

Օթար-քէկ (Չեռք սրին տանկով). Ո՛վ ես դու:

Սարա. Աստուծու ծառայ—Թափառական Սարան:

Ձէյնար. Հայր-սուրբ, քեզ Աստուած է ուղարկել:

Սարա. Աստուած: Քրիստոս յաբեալ: (Համբուրում է Ձէյնարին և Օթար-քէկին):

## ՎԱՐԱՐՈՒՄ

## ԱՐԱՐՈՒՄ ԶՈՐՐՈՐԴ

Մի հին դիմեան անբախտ Թիֆլիսի մօտերում: Բեմի ձախակողման մասը ներկայացնում է կողիս կերպով շարած գորշագոյն բարէ պատ՝ խարխուլ ու մացառապատ կտուրով: Աջակողման մասը—դէպի բեմախորքը տանող անտառապատ մի կիրճի գոտիվայր: Ծառերի միջից երևում են մայր մտնող արևի շողերից կարմրած ամպեր: Երբեմն-երբեմն լուում է հեռուոր որոտմունք և շող-շողում է փայլակը:

Անանիան և Երեկէն՝ շրթայակապ՝ ընկած են անբախտներում: Տաք պահակ՝ վրացական հագուստով, մէջքներից հրացաններ կախած և սրերը մերկացրած՝ հսկում են նրանց: Պահակների մէջ է Իիզան: Մուտքի մօտ, փլած քարերի վրայ նստած է Բեսուն: Ծնկներին դրած է զինու տկճոր, որից շարունակ կոնծում է: Առջևը, կանաչի վրայ փռած է կապոյտ, նախշուն թաշկինակ՝ վրան լուաշ, պանիր, տխ ու կարմիր ձուեր:

### I

Բեսո (Նրզում է).

Իինին առկից բըւբըւալիս,

Հարեալալէ,

Մութ գիշերին լոյս է տալիս,

Թարեալալէ:

Հէնց նոյն իջաւ Արարաւից,

Հարեալալէ,

Հարեց գինու համ ու հօտից,

Թարեալալէ:

Իիզա. (ձերմակ, մեծ միրուքով ծերունի) Ձէնդ կտրիր, խելան: Ի՞նչ ես ճզաւոցդ զցել հստեղ ու մուրտառ երգերովդ օդն ես ապականում:

Բեսո. (Մի քիչ քիչով) Հէնց որ մեր զօրքի մէջ հինա քըսած ռեխները քջացան, երգն էլ ինքնիրան սկսեց սրտից բըւբըւալ: Հէյ: (Նրզում է)

Քաջը գիտի գինու համը,

Հարեալալէ.

Չուր է խըմում միշտ անբանը,

Թարեալալէ:

Հն, և՛ անբանը, և՛ մեր իրանցի տէրերը, և՛ ամեն խենթու-

խելառ: Կրակ ու կայծակ դիպչի նրանց թրաշած կարկած-զըլ-  
խներին: (Խմում է):

Անանիա. (Յուզմունքով նայում է Էրեկլէին) Դու սրտով  
թուլացել ես, որդիս: Գերութիւնը քեզ հալումանշ է անում:

Էրեկլէ. (Գունատ, նիհարած երեսով, աչքերը տենդային կրակով  
վառուած): Նա իմ սրտի արիւնը ծծեց, հայր: Օ՛հ, ինչպէս կ'ու-  
զէի այժմ ազատ լինել: Դաթօն մեր տունը քանդեց:

Անանիա. Սուրբ Գէորգը լինի նրա պաշտպանը: Արիւնը  
գլուխն էր խփել: Քաջութիւնից աչքը մութ էր կոխել—և նա  
ամեն բան մոռացաւ (կամացուկ): Բայց նա մօտիկ է: Նրանից  
տեղեկութիւն կայ: Երեկ պահապաններից մէկը փսփսաց ա-  
կանջիս... Նա մեզ կ'ազատի, հաւատան ինձ—կ'ազատի:

Էրեկլէ. Էլ ե՞րբ, ե՞րբ: Մենք արդէն Թիֆլիսին ենք հասել:  
Սա մեր վերջին դադարքն է:

Անանիա. Մինչև սուր, մինչև կախաղան յոյսդ մի կորցը-  
նիր, Էրեկլէ: Պարան լինի վզիդ, թէ գլուխդ ծռած սրի տակ  
—էլի յոյս ունեցիր: Յոյսդ մի կտրիր, քանի շունչ կայ բերա-  
նումդ:

Էրեկլէ. Օ՛հ, ինչ տանջանք է: Շղթայուած լինել այժմ,  
այժմ: Չտեսնել... չիմանալ... Իսկ նա մօտիկ է... այստեղ է...  
միայն շղթաներն են արգելում:

Անանիա. Ի՞նչ ես ասում, Էրեկլէ:

Էրեկլէ. Ես այսօր կամ գլուխս կը ջարդեմ, կամ շղթա-  
ները: Ես չեմ կարող... ես չեմ կարող... Գոնէ մի նայեմ...  
գոնէ տեսնեմ մի անգամ—և այնուհետեւ... այնուհետև թէկուզ  
մահ... (երեսի վրայ ընկնում է քարն):

Բեսօ. (Բոլոր ժամանակ քնի տակ երգում է) Հէյ, պահապան-  
ներ ու գերիներ: Ես ուզում եմ, որ էստեղ, էս ազատ օդում  
ամենքդ էլ ուրախ լինէք: Մէկ է: Ամենքիս էլ կախ են տալու  
—որին՝ էգուց, որին՝ ուրբաթ: Ինչի՞ չէք խմում: Խմէք, քէֆ  
արէք (վեր է կենում եւ տկճորը ձեռին՝ քայլերն ուղղում է դէպի գինե-  
տունը: Գիգան անիսոս՝ հրացանն ուղղում է դէպի նա եւ նշան է դնում):  
Կամոց, կրակ չտաս, գիժ քաւթան (տաքացած՝ տկճորը տարուբե-  
րելով): Էդ սեմ ես նշան դնում, հը՛: Գիտե՛ս—ո՞վ եմ ես: Հարիւր  
անգամ ինքը, զօրաւոր տէրս, ուզեցել է ինձ կախ տալ, կրա-  
կը գցել կամ ջրում խեղդել—ու ո՞չ մի անգամ չի կարողացել.  
Իսկ դու ինձ նշան ես դնում: Ես քեզ համար գինի եմ բերում,  
իսկ դու վրէս հրացան ես քաշում:

Դիզա. Գերիներին չմտենանա:

Բեսօ. (Տարանալով, բայց տեղից չշարժուելով) Ա՛յ, սպասիր  
մինչև էգուց, ես քեզ էգուց ցոյց կը տամ, թէ ո՞նց կարելի է

իմ պէս մարդու վրայ հրացան քաշել: Իմ տէրն իրաւունք է  
ստացել գինի խմելու, ասել է թէ՛ ես էլ եմ իրաւունք ստացել  
գինի խմելու: Իմ տէրն հարիւր կնիկ է ստացել. ես ին-  
քըս էլ կարելի է հարիւրից աւելի ունեմ... Միայն ո՞չ մէկ  
անգամից, այլ զանազան ժամանակներ... ու զանազան տե-  
ղեր... Իսկ միասին... չէ, դա համ յարմար չի, համ էլ թանգ է  
նստում: Իսկ դու վրէս հրացան ես քաշում:

Անանիա. (Գիգային) Եղբայր, բուկս չորացել է, հրաման  
արան, մի կու՛մ գինի տայ ինձ:

Դիզա. (Վիտով Թեթեւ նշան անելով) Է՛յ, հարբան, սուր, մի-  
քանի կու՛մ անի ծերուկը ու կորի՛ր այստեղից:

Բեսօ. Ը՛հը՛, վախեցար: Տեսար, եղբայր. իսկ դու վրէս  
հրացան ես քաշում (մօտենում է եւ տկճորից գինին քամելով միջակ  
մեծուծեան մի կոտորի (եղջրաքաժակ) մէջ, միանգամից զգաստանում է  
եւ շարունակում է երգել):

Սարով, քոլով, գետով, ձորով

Հարեալալէ

Մերոնք գալիս են խմբերով.

Թարեալալէ: (Կոտորը տալով Անանիային):

Խմիր ու օրհնիր Բեսօին:

Անանիա. (Էրեկլէին) Չովացրու բերանդ, որդիս:

Էրեկլէ. (Առանց նայելու՝ լուծեամբ հեռացնում է կոտորը):

Բեսօ.

Օրբելանի զօրքն—հարաւից,

Հարեալալէ.

Մլմբատինն էլ—Սողանլուղից

Թարեալալէ.

Իսպէս աւելի լաւ չի՛, ի՞ծի միրուք: Իսկ դու վրէս հրա-  
ցան ես քաշում: (Նրդում է)

Օգնութիւն կայ մեզ հեռուից էլ,

Հարեալալէ.

Մոսկովի ծարն է խոստացել,

Թարեալալէ:

(Պահակախումբը եւ Անանիան, առանց իրար ցոյց տալու, խորին  
ուշադրութեամբ լսում են երգի խօսքերը):

Անանիա. (Գինին խմում է ու կոտորը յետ տալիս): Աստուած  
էլ քո հողին էսպէս զովացնի անեղ դատաստանի օրը, եղբայր:

Դիզա. (Նայելով ձախ կողմը) Շուտ արան, կորի՛ր: Թագու-  
նին ու Օթար-բէկն այս կողմն են գալիս:

Բեսօ. (Արագ վեր է ցատկում եւ ամեն ինչ հաւարում Թաշկինա-

կի մէջ): Մի վախենաք, բարեկամներ, մի վախենաք: Ես ամեն-  
քիզ էլ կ'արդարացնեմ: (Նրբում է)

Հէնց Նոյն իշաւ Արարատից,

Հարեալալէ,

Հարբեց զինու համ ու հոտից,

Թարեալալէ (հեռանում է զինետան ետեւը):

(Աջ կողմից ներս են մտնում Զէյնաբը, Օթար-բէկը եւ երկու վրա-  
ցի պահակ):

II

Օթար-բէկ. (Պահակին) Գիգն, աւերակները շրջապատե-  
ցէք և մարդ չթողնէք մօտենայ: Թագուհին հարցաքննում է յան-  
ցաւորներին (Գիգան եւ միւս պահակները մի քիչ հեռացած ու կիսա-  
շրջան կազմած՝ կանգնում են՝ մէջքները դարձնելով դէպի զինետան աւե-  
րակները: Զէյնաբն ու Օթար-բէկը ներս են մտնում զինետուն: Անանիան եւ  
Էրեկլէն վեր են կենում՝ շղթաները զրնգզրնդացնելով):

Զէյնաբ. (Խորին տանջանքով եւ սիրալից նայելով Էրեկլէին):  
Ի՞նչպէս փոխուել ես, խեղճ տղայ: Ի՞նչ է, շղթաներդ են  
ծանր:

Էրեկլէ. Ո՛չ, թագուհի, շղթաները չեն ծանր, այլ—ա-  
նարդարութիւնը: Ինչի՞ մեզ շղթայել տուիր և տանում ես տան-  
ջելու և սպանելու: Մենք անկեղծ սրտով քեզ ընծայ բերինք  
մեր ամենալաւ ձիերը, մեր միակ հարստութիւնը: Մենք ի՞նչ  
գիտենք—ինչ պատահեց գիշերը: Եղբայրս գնացել էր ձիերի  
համար խոտ բերելու: Յանկարծ լսում ենք աղմուկ, աղաղակ,  
եղբօրս ձայնը—և մեզ բռնում են:

Զէյնաբ. (Կամացուկ՝ Օթար-բէկին) Նայիր, սրպիսի արքա-  
յական բարկութեամբ վառում են նրա աչքերը (որդուն երեսանց  
խտուածին ցոյց տալով): Ի՞նչպէս ես համարձակում այդ լեզուով  
խօսել թագուհու հետ, շղթայակապ ստրուկ:

Էրեկլէ. (Զղային սաստիկ յուզմունքով) Ես ստրուկ չեմ: Ես  
ճշմարտութիւնն եմ ասում: Ինչի՞ ենք մենք շղթայուած: Ես  
պէտք է ազատ լինեմ: Միևնոյն է, դու ինձ կենդանի չես հաս-  
ցնիլ ո՛չ բանտ, ո՛չ կախաղան: Ես կը նետուեմ պահակախմբի  
վրայ, թող ինձ կտոր-կտոր անեն: Ես պէտք է ազատ լինեմ:

Զէյնաբ. Ի՞նչ վախենում ես մահից ու տանջանքից: Մի-  
թէ դու երբէք մահ կամ տանջանք չես տեսել կեանքիդ մէջ:

Էրեկլէ. (Անչափ յուզուած) Ես ոչնչից չեմ վախենում: Ես  
միայն ուզում եմ ազատ լինել:

Զէյնաբ. (Արտասուքն աչքերին, արտգ, անզսպելի թափով) Եւ

ազատ կը լինես, գաւազ: Օ՛, Աստուած օրհնէ քո անվեհեր  
հոգին: Եւ ո՛չ միայն դու, այլ և այն ամենքը, որոնք շղթայուել  
են քեզ հետ միասին:

Էրեկլէ. (Ուրախութիւնից եւ յուզմունքից զուճատուած) Եւ դու  
կատակ չես անում, թագուհի: Էլ երբ, երբ. հէնց իսկոյն:

Զէյնաբ. Իսկոյն, իմ քաջարի բազէ: Իսկոյն, իմ յոյս ու  
պարծանք, իմ երջանկութիւն (զրկում է նրան՝ հեկեկալով): Օթար,  
տեսնո՞ւմ ես սրան: Ո՞ւմ արիւնն է այսպէս վառում սրա այ-  
տերը: Ո՞ւմ կրակն է այսպէս շողում սրա աչքերում:

Օթար-բէկ. (Յուզուած) Տեսնում եմ, թագուհիս, և պաա-  
րաստ եմ մեռնելու դրա համար:

Էրեկլէ. Այս ի՞նչ է նշանակում, հայր:

Անանիա. Ե՛ս էլ կը մեռնեմ քեզ համար, իմ հոգու գա-  
ւակ:

Զէյնաբ. Էլ սիրտս չի համբերում, Օթար: Քսան տարի  
սպասել և ամեն ինչ կատարել մի գիշերուայ մէջ: Քսան տարի  
կեղծել և մի ակնթարթում պատասել բոլոր գաղտնիքների վա-  
րագոյրը: Քսան տարի տանջուել և յանկարծ այսպիսի երջան-  
կութիւն... Անանիա, Աստուած օրհնէ քեզ, ինչպէս ես եմ օրհ-  
նում (երբում ու նստում է քարի վրայ: Լռածիւն): Բաւական է:  
Մի գիշերուայ մէջ պիտի ամեն ինչ կատարուի—այլապէս ո-  
չինչ չի կատարուի: Երեքդ էլ լսեցէք—ի՞նչ եմ ուզում ես: Ահա  
ձեզ շղթաների բանալիները (բանալիները տալիս է):

Էրեկլէ. (Բռուն փափագով առնում է բանալին եւ ուրախութիւնից  
չնչասպառ, ուզում է շղթաները քակել) Օ՛, թագուհի:

Զէյնաբ. Թագցրո՞ւ նրանց ծոցումդ, անմիտ տղա, և լը-  
սիր ինձ... Ես և Օթարը պարսիկներին ուղարկել ենք զանա-  
զան կողմեր. բայց ոչ բոլորին. դեռ էլի մնացել են: Թէ որ  
մէկ նրանցից նկատէ ձեր փախուստը—ամենինչ կորած է:

Էրեկլէ. (Ապշած) Միթէ պէտք է փախչել:

Զէյնաբ. Եռտով ինքդ հրամայող կը լինես, ո՛վ պատա-  
նի. առայժմ սովորիր հնազանգել: Հէնց որ կը սկսենք շար-  
ժուել, պահակներն առաջուայ պէս կը շրջապատեն ձեզ: Այս  
երկուսը (ցոյց է տալիս իրանց հետ եկած պահակների վրայ) կը բռնեն  
ձեր տեղը: Ի՞նչ թագնուեցէք այստեղ, արձակեցէք ձեր շղ-  
թաները և սպասեցէք, մինչև որ ամբողջ զօրախումբն անցնի:  
Երբ զօրքն աչքից կ'անհետանայ, իջէք դէպի գետը: Այնտեղ,  
սպառաժի ետեւը, գետափին ձեզ մի լաստ է սպասում: Լաստի  
վրայ գտնուող մարդկանց կ'ասէք. «Թափառական Մարա»: Մի  
ժամուայ մէջ ջրի հոսանքը ձեզ կը հասցնէ Թիֆլիս:

Էրեկլէ. Թիֆլիս... եւ այնտեղ... այնտեղ կը լինեն ամենքը, որոնք հիմա այստեղ, քեզ հետ են:

Չէյնար. Որոնք են այդ ամենքը, էրեկլէ:

Էրեկլէ. (Նետրոյային յուզմունքով նայելով նրա աչքերի մէջ) Թէ բարեկամ, թէ թշնամի:

Չէյնար. Ամենքն էլ, զաւակս: Արեւ մայր է մտնում: Երկու ժամից յետոյ մենք կը մտնենք ամրոց: Օթար, վերջին անգամ հարցնում եմ քեզ—դու երաշխաւձր ես մեր զօրաբաժնի բոլոր մարդկանց համար:

Օթար-բէկ. Այո, ինչպէս ինքս ինձ համար, ո՞վ թագուհի:

Չէյնար. Դէհ, էրեկլէ, այժմ քո ձեռքն եմ տալիս մեր սուրբ հաւատի, մեր մայր-Վրաստանի և քո սեփական վիճակը: Արդեօք պատրաստ ես այդպիսի մի մեծագործութեան համար:

Էրեկլէ. (Չհասկանալով, յուզուած) Հրամայիր, թագուհի:

Չէյնար. Այո, ես քո թագուհին եմ. բայց վաղը, վաղը... (յուզմունքը զսպելով): Ուրեմն դուք էլ իմացէք այն բոլորը, ինչ որ գիտենք ես և մեր զօրավարը: Սիւլէյմանի բնի շուրջը, կիրճերում ու ապառաժների ձեղքերում, անտառների ու թփերի մէջ—եկել, հաւաքուել են Վրաստանի զաւակները հայրենիքի ամեն ծայրից: Վաղուց էի ես պատրաստում այդ ամենը—և ամեն բան արդէն պատրաստ է: Մեր մարդիկն, օղակի պէս, շրջապատած Թիֆլիսը՝ աչքները յառել են Սիւլէյմանի բնին—և անթիւ, անհամար են այդ աչքերը, անչափ, անսահման է նրանց բարկութեան հուրը, նրանց կատաղութիւնը: Իսկ Թիֆլիսում, ամրոցի ստորոտում և Մետեխի ժայռերի տակ աչք չի գոցելու այս գիշեր ոչ մի մարդ, որ ընդունակ է զէնք բռնելու ձեռքին: Երեք օր առաջ քո որդի Դաթօն երեք հազար ջահիլ կտրիչներ է հաւաքել Անանուրի, Դուշէթի և Ծիլկանի կողմերից. այժմ նրանց թիւը եռապատկուել է: Շատերը որպէս ծպտեալ հովիւներ ու սայլապաններ, շատերը գաղտուկ, շատերն էլ ակնյայտ՝ լեռնային շաւիղներով ու կիրճերով եկել, մօտեցել են քաղաքին հիւսիսից: Գիշերներն առաջանալով հարաւից հաւաքուել են Թիֆլիսի մօտերը Օրբելեանի ու Սմբատի զօրախմբերը և դարան են մտել լեռներում ու կիրճերում: Արևմուտքից մօտենում են Բորժոմի ու Ախալցխայի լեռների և սպանուած Յիցայի կալուածների բնակիչները: Ամեն օր Սիւլէյմանի ձիաւոր պահակախմբերը մարդիկ են կալանաւորում—բայց մարդիկ շարունակ գալիս են, գալիս, տեղում են զանազան կողմերից որպէս անձրևի կաթիլներ և անձայն ու աննկատ՝ աշնան տերևների պէս շրջապատում են Թիֆլիսը:

Անանիա. Բարկութիւնը ծով է կապել նրանց սրտում: Օթար-բէկ. Շարժուել է Մուխրանը: Գալիս են Թիօնէթից: Չայն կայ, որ կախէթցիներն էլ ոտքի են կանգնել:

Էրեկլէ. Էլ ի՞նչ ենք սպասում: Յարձակուենք իսկոյն և բարութանդ անենք ամրոցի պատերը:

Չէյնար. Օ՛, իմ արծուիկ, ինչպէս լայն ես փռում թևերդ: Անհնարին է: Չէյնքի պակասութիւն ունենք: Մերոնցից երեքին մի դաշոյն է գալիս, հարիւրին մի հրացան, տասին մի լիցք վառօդ—անա մեր ամբողջ զրահաւորութիւնը: Իսկ ամրոցում... Իու չես տեսել նրա պարիսպները, նրա թնդանօթները, ամրոցի հորերում և այրերում լեռների պէս կիտուած բրինձն ու ցորենը. դու չգիտես վառօդի և զէնքի ի՞նչ պահեստներ կան անմատչելի Մետեխում: Մենք պաշարել չգիտենք: Մենք զէնք չունենք, որ գրոհ տալով՝ ամրոցն առնենք: Ո՛չ էլ նուաճել կարող ենք՝ բաղցած կամ ծարաւ պահելով ամրոցում ապրողներին. ամրոցում գետ է վազում: Մի անգոյշ քայլ—և մենք կը կորչենք, և դարձեալ տասնհազ տարիներով ջարդուած, ջախջախուած կը տառապի մեր հայրենիքը: Ո՛չ, հէնց իր բնի մէջ պիտի սպանել օձին:

Անանիա. Հապա ի՞նչպէս պիտի գլուխ բերենք էդ բանը, թագուհի:

Չէյնար. Սիւլէյմանը չի վախենում ջարդուած ու անզէն ժողովրդից: Նա վախենում է փաղիշահի աչքից ընկնելուց, Երևանի սարդարի ամբաստանութիւններից. վախենում է, որ իր դէմ դաւեր ու որոգայթներ կը լարեն Իրանում: Ես նրա միտքը կը զրաղեցնեմ պատահած դէպքի պատմութիւնով. ես նրա ուշքը կը գրաւեմ փաղիշահին ուղարկուելիք ընծաներով: Իսկ այդ միջոցին Օթարն ամենամի պահակի կողքին, ամենամի դարպասի մօտ կը կանգնեցնէ մեր մարդկանցից: Այդպիսով մերոնք շրջապատած կը լինեն Սիւլէյմանի ապարանքը և բռնած բոլոր անցքերը: Ես ու Օթարը մեր ձեռքում կ'ունենանք օձի բունը, իսկ դու, էրեկլէ, դու, զաւակս, դուրս կը գլչես օձի թունաւոր խայթոցը: Անանիա, դու սրան փրկեցիր, դու էլ սրան կ'առաջնորդես այս մեծախորհուրդ գիշերին: Առայժմ ուրիշ ոչ մի բանով քեզ վարձատրել չեմ կարող, իմ հաւատարիմ ծառա:

Անանիա. (Արախութիւնից ցնցուելով) Հրամայիր, թագուհի:

Չէյնար. Հէնց այն ճանապարհով, որով դու մանկանը տարար,—այս գիշեր էլ հօր մարտնչողին կը բերես Մետեխ:

Անանիա. Պատրաստ եմ, թագուհի:

Չէյնար. Սրան ձեռքը պիտի պայթեցնէ ամրոցի պահեստ:

ները. սա պիտի հրեղէն սիւնով լուսաւորէ մեր գորքերի ուղին. սա պիտի վառէ աղատութեան ջահը մեր բազմաչարչար երկրի վրայ:

Օթար-բէկ և Անանիա. Սուրբ են քո խօսքերը, թագուհի, սուրբ են, մեծափառ թագուհի:

Զէյնաբ. (Խոր զղացուած) Օ', գաւազ, թող Աստուած ապաշխարանք համարէ այն, ինչ որ ես այս գիշեր պիտի քաշեմ քեզ համար: Ծնող-մայրն անողոր մահուան ճանկերիցն անգամ խլում, աղատում է իր հիւանդ, ուժասպառ դաւակին. մի՞թէ ես չպիտի կարողանամ իմ աղերսով ոյժ ու յաղթանակ հայցել Աքարչից քեզ համար: Քեզ համար զոհեց քո մայրն իր պատիւըն ու անմահ հոգին: Քեզ համար զոհ գնաց անպարտ մանուկը: Քեզ Աստուած կը պսակէ արքայական թագով և քո ձեռքը կը տայ սուր, որ պաշտպանես Նրա սուրբ Սաչը: Արժանի հանդիսացիր այդ թագին, որդիս, քաւիր անմեղ արիւնը, արգարացրու քո մօրն Աստուծու դատաստանի առաջ:

Էրեկլէ. (Ապշած եւ ծնուած) Սպասիր... թագուհի... հայր... Այդ սեմ ես ասում... Ո՞վ եմ ես:

Զէյնաբ. (ծունկ չօրելով) Դու իմ թագաւորն ես և իմ որդին: Այս շղթաներն այսօր—քո արքայական հանդերձն են, և կը կրեմ նրանց մարմնիս վրայ, որպէս մարտիրոսական կապանքներ, երբ քո ճակատին կը շողշողայ արքայական թագը. ես անխոնջ և անվերջ կ'աղօթեմ քեզ համար: (Վեր է կենում): Բայց վաղն ազատ մարդիկ չեն ասիլ, թէ ինչո՞ւ այս պատանին մեր թագաւորն է: Հայրենիքի հզօր փրկիչը, որպէս Աստուծու հրեշտակ, կը բազմէ հայրական գահը: Եւ քո գործերի փառքն ու փայլը կը լինին քո արքայական ծիրանին: Եւ ես վաղը քո գահ բազմելը կ'օրհնեմ այնպէս, ինչպէս որ այժմ եմ օրհնում քեզ դէպի մահուան ճակատամարտ: (Օրհնում է):

Էրեկլէ. (Բուռն հրճուանքով) Ես քո որդին եմ: Ես վրաստանի թագաւորն եմ: Թագուհի: Օ', մայր իմ: Ես կը կատարեմ քո բոլոր հրամանները: Շուտով արձակիր իմ այս կապանքները: Նրանք ինձ ճնշում են:

Օթար-բէկ. (Ծունկ չօրելով) Ներիր ինձ, արքա, քո գէմ գործած յանցանքներիս համար: Ես նրանց կը քաւեմ այս գիշեր՝ կեանքս չխնայելով քեզ համար:

Անանիա. (Ծունկ չօրելով) Տէր-թագաւոր, եղիր դու հայր ժողովրդին, ինչպէս որ ժողովուրդն եղաւ քո հայրը: Պահիր, պաշտպանիր նրան, ինչպէս որ իմ որդին պաշտպանեց քեզ փորձանքի ժամին:

Էրեկլէ. (Վողացող ձայնով) Օ', թող շուտով ընկնեն այս

շղթաները: Մայր իմ, հրամայիր, որ շուտով, շուտով ճանապարհուենք... Թագաւոր—և շղթայակապ: Օ՛հ, շուտով, շուտով:

Օթար-բէկ. (Վեր կենալով) Իսկոյն, արքայ: Էրեկլէ. Ես—արքայ: Ե՞ս: Ես կը խելագարուիմ:

Զէյնաբ. (Ակամայ ցնցուելով) Անանիա, պահպանիր սրան այսօր էլ, ինչպէս պահպանել ես այս քսան տարին:

Անանիա. Կը պահպանեմ, թագուհի: Հաւատն ինձ—կը պահպանեմ:

Զէյնաբ. (Աչքերը սրբելով) Գնանք, Օթար: Մնաս բարով, գաւազ: Մնաս բարով, իմ շունչ ու արիւնս: Աստուած կը պաշտպանէ իր ծառային: (Գնում է):

III

Օթար-բէկ. Պահակներ, շրջապատեցէք կալանաւորներին: Գիգա, (Գիգան եւ պահակները մօտ են գալիս) դու կառաջնորդես: (Խորհրդաւոր եղանակով): Տղերք, պահպանեցէք սրանց... և չմոռանաք իմ հրամանը: Մենք ճանապարհ ենք ընկնում: (Գուրս է զնում: Մինչեւ որ առնակախումբը նորից շրջատատում է էրեկլէին եւ Անանիային, բեմի ետեւից լսում է): Հեծէք ձիերդ: Վերջին տարածութիւնն ենք անցնում: (Երկինքը սաստիկ ամպում է: Մութ է կոխում: Որոտմունքն աւելի ու աւելի սաստկանում է: Բ'մի ետեւից լսում է ճանապարհուող գործի աղմուկն ու աղաղակը: Բ'մով անցնում են եպիսկոպոսներով ու չերքեզկաններով մարդիկ՝ ոմանք արագաքայլ, ոմանք վաղկվազ: Աջ կողմից, կիրճի խորքից դուրս գալով՝ նրանց հետ խառնում է Ռուբայան՝ վրան երկայն եպիսկոպոսի եւ զխին բաշլըր, որը ծածկում է նրա երեսի կէտը):

Չայներ բեմի ետեւից. Ձի նստէք: Պահակներ, բեռների մօտ անցէք: Թագուհու ձին բերէք: Կանանց սայլերը շրջապատեցէք:

Օթար-բէկի ձայնը. Իբն—Սասնդ, մարդկանցդ սն ու առանջ ընկիր ճանապարհը դիտելու: (Չայներն իրար խառնուելով՝ մի ընդհանուր աղմուկի են փոխում, որից բան չի հասկացում: Լսում են ձիերի տրոփիւն, սալապանների գոռում-գոչում, զենքերի շառաչում):

Բեմի վրայ—առաջին ձայնը խորքից. Օ՛, մի լաւ անձրև չկերած՝ տեղ չպիտի հասնենք:

Երկրորդ ձայն. Ի՞նչ տեղ է ձիուս սանձը:

Երրորդ ձայն. Սոսիկօ, ձիս բռնիր, ջուր առնեմ:

Չորրորդ ձայն. Շուտ արն, ձիու գլխից տապրակը հանիր, շան որդի: (Բեսօն բեմի աջ կողմից ձախ կողմն անցնելու ժամանակ՝

դիպում է Ռուբայային: Հէնց այդ միջոցին պահակախումբը դուրս է տանում գերիներին):

IV

Բեսօ. (Տկճորն ու կապոցը ձեռին՝ ընդհարուելով Ռուբայային) Հէյ, բարեկամ, չէս լսել, Օթար-բէկը հօ չէր կանչում Բեսօյին:

Ռուբայա. (Արագ վազելով դէպի գինետան աւերակները) Ո՛չ:

Օթար-բէկի ձայնը. Ի՞նչ տեղ է Բեսօն: Հէյ, Բեսօ: (Կանչում են՝ Բեսօ):

Բեսօ. Այստեղ է, տէր իմ, այստեղ է Բեսօն: Բոլոր ժամանակ քեզ էի ման գալիս: (Ռուբայան մի կողմն է քաշում, մինչև որ պահակախումբն անցնում է, ապա խառնւում է ամառիսին):

Գիգա. (Ահեղ ձայնով) Հէյ, աղերք, հեռու կացէք, այստեղ գերիներն են: (Սրով շրջան է քաշում): Դէն քաշուեցէք: (Որոտմունքի ուժգին հարուած. սաստիկ մթնում է):

Օթար-բէկի ձայնը. (Բեմի ետեւից) Գիգա:

Աղաղակներ բեմի ետեւից. Գիգա, տէրը քեզ կանչում է:

Գիգա. Այստեղ եմ, տէր իմ:

Օթար-բէկի ձայնը. Գերիներին պահպանիր: Գիշերը վրայ է հասնում: (Ձայնը հեռանում է: Լսւում է մտրակների շրթիկըրիկոց եւ ծիաւորների գոչումներ: Բեմի վրայ մնում են մի խումբ պահակներ եւ Ռուբայան):

Գիգա. Գլխովս պատասխանատու եմ սրանց համար, տէր իմ: (Ռուբայան ներս է պրծնում գինետան աւերակները եւ թագնըում է: Աղմուկը հետզհետէ հեռանում ու խլանում է հետեւեալ տեսարանի ժամանակ):

Գիգա. (Կիսածայն) Շղթաներդ արձակէ՛լ էք:

Անանիա (Շշնչալով) Արձակել ենք:

Գիգա. (Նոյնպէս շշուկով) Պառկեցէք թփերի մէջ: Վերջին շարքերն են անցկենում: Դէհ, շուտով: Սուրբ Գէորգը ձեզ փրկէ ու ազատէ: (Բարձրածայն) Մեղմ շրջապատեցէք գերիներին: Միացէք զօրախմբին: (Խմբի հետ հեռանում է: Բեմը դատարկ է երևում: Գինետան աւերակների ձայն կողմը պահուած է Ռուբայան: Աջ կողմը, կիրճի թփերի մէջ, թագուտ մտած՝ պտուկած են Գալտան եւ Էրեկէն: Կուլիսների ետեւից աւելի ու աւելի թոյլ է լսւում ընծացող զորքի աղմուկը: Մթնում է: Լսելի է հեռաւոր, բայց երկարատեւ եւ ուժգին որոտմունք):

V

Դաթօ. (Գուրս գալով թփերի ետեւից՝ մօտենում է թագնուած ծղբօրն ու հօրը) Հայր...:

Գլախա. (Արագ) Դաթօ:

Էրեկէ. (Նոյնպէս) Եղբայր:

(Ռուբայան ուզում է դուրս գալ, բայց մարդիկ նկատելով՝ մի խուլ ու թեթիւ ձիչ է արձակում եւ դարձեալ թագնւում):

Դաթօ. (Արագ) Մթնադէմին միացայ զօրախմբին. տեսնող չեղաւ: Մերոնք ամենքն էլ մէկ-մէկ մօտեցել ու բերդը շրջապատել են:

Գլախա. Շատ են:

Դաթօ. Թիւ ու համար չկայ: Ամենքն էլ գալիս են: Ամեն բան թողնում ու գալիս են: Մենակ մեր տեղերից հագարաւորներ են եկողները: Օթարն էլ մեր կողմն է: Համա, օյի՛ն ենք խաղալու գլխներին, հա՛: (Ուրախ ու կամացուկ ծիծաղում է):

Էրեկէ. Դու բերդը կը մտնես:

Դաթօ. Թագուհու զօրաբաժնի հետ: Սիրտս չի համբերում. կրակ կտրած՝ վառւում է. ուզում եմ աւելի մօտիկ լինել: Մերոնք ներս կը թափուեն, հէնց որ Մետեխը կը պայթի: Ո՞վ է բերդը պայթեցնելու, չգիտէք:

Էրեկէ. Ես ու հայրս:

Դաթօ. (Նախանձով) Ի՞նչ էլ առէք հետներդ:

Անանիա. (Բարկուծեամբ) Կորիք, քանի գլուխդ չեն թընցրել: Առանց էն էլ, քիչ մնաց տուններս քանդէիր, գիժ մողի: Ի՞նչ ես էտեղերը քաշ գալիս:

Դաթօ. Գործ կայ, հայր: Բերդունն էլ գործ կը լինի: Մնաք բարով: Պիտի շտապել, հետները խառնուել, քանի չեն հեռացել: Կը տեսուենք երբ խաղն սկսուի: (Գուրս է վազում):

VI

Անանիա. Արքայորդի, սա վառօդի պատրոյգը: Էգպէս մէկն էլ ես ունեմ: Գիգան տուաւ, իշխանից է ստացել: Արէթ ու կայծքար կայ մօտ:

Էրեկէ. Միշտ գօտիիցս եմ կախած:

Անանիա. Մ... Կամանց խօսիր: Աղմուկը դադարում է: Ես մնացած մարդիկ կը լինեն, կը լսեն:

Էրեկէ. Գնանք լաստի կողմը:

Անանիա. Վաղ է: Մենք լաստ կը նստենք, երբ բոլորովին մթնի, որ ափից տեսնող չլինի: Մի ժամ չի քաշի, Թիֆ-

լիս կը հասնենք: Իսկ զօրախմբի հասնելը՝ երկու ժամ կը քաշի: Էնպէս պիտի անել, որ զօրքը մեզանից առաջ տեղ հասնի: Լաստի վրայ մարդիկ կը լինեն: Լսիր ինձ, քանի մենակ ենք:

Էրեկլէ. Լսում եմ:

Անանիա. Լաստից մենք ցած կը դանք Մետեխի քարափի մօտերքում ու լող տալով կը հասնենք նրա ոտորոտը: Էդ տեղում գետը շատ վարար է, բայց ես ու դու շատ անգամ ենք լող տալով անցել Արագվան՝ ամենավարար ժամանակը: Պատրոյգը, արէթն ու կայծքարը գդակիդ մէջ պահիր, որ չթըրջուեն:

Էրեկլէ. Լնա:

Անանիա. Քարափով մենք սուս ու փուս կը բարձրանանք ու կը մօտիկանանք թփերով ծածկուած անցքին: Մեր ծերունիներից անգամ շատ քչերը գիտեն, որ էդպէս մի անցք կայ: Նա գետնի տակով դէպի Մետեխի տաճարն է տանում: Էդ ճամբով ես քեզ դուրս տարայ, երբ Միւլէյմանը մտնում էր Թիֆլիս ու քո մահն էր ուզում: Էդ ճամբով էլ մենք պիտի վերագառնանք հիմա՝ նրա կորստեան գիշերը:

Էրեկլէ. Եւ ես նրա ձեռքից դուրս կը կորզեմ նրան:

Անանիա. (Շուարած) Ո՞ւմ:

Էրեկլէ. (Ուշքի գալով) Ո՞ւմ: Մ՛օրս:

Անանիա. Էդպէս, էդպէս, արքայորդի: Թէ մօրդ, թէ ամբողջ ժողովուրդդ: Ժամանակ է, ժամանակ է, Հալ ու մաշ եղան խեղճ ժողովուրդը: Հնա, ահանջ դիր: Երբ որ պատրոյգը կպցնես, նոյն ճամբով էլ դուրս վազիր: Ես կը հասնեմ քո ետևից: Ասենք, իմ հոգսը մի արա: (Տնտղում է պատոյգը): Մրա վառուելը մի կէս ժամ կը քաշի. էդ ժամանակի կէսն էլ բաւական է, որ մենք վտանգից ազատուենք: Մենք գետը դեղած կտրելով՝ լող կը տանք. հոսանքը մեզ կը տանի ներքև, իսկ էնտեղ կը պատահենք մերոնց—Մմբատի կամ Օրբելեանի զօրքին: Եւ հէնց որ բերդի գլխաւոր պատը կընկնի, մենք էլ նըրանց հետ միասին ներս կը թափուենք:

Էրեկլէ. Դեռ արևը չծագած, նա ինձ հետ կը լինի, իմ գրկում: Հնայր, ես կը խելագարուեմ: Քիչ է մնում, երջանկութիւնից սիրմա տրաքի: Միայն ասա ինձ, թագաւորը... թագաւորը կարող է՝ ում հետ էլ ուզենայ՝ պահուել:

Անանիա. (Միծաղելով) Է՛հ, արքայորդի, ափսոս, որ դու էլ էն էրեկլէն չես: Ախար պահուելու մասին միտք անելու ժամանակ է հիմա: Համբերիր, մի լոյսը բացուի: Բայց, է՛հ, արիւնք է էդպէս: Ոգորմած հոգի հայրդ էլ... է՛հ, ի՛նչ ասեմ: Բայց տեղը որ եղաւ, նա մինչև վերջին շունչը կռուեց ու մեռաւ,

քաջ զինուորի պէս: Համա ի՛նչ թագցնեմ—թագուհին քեզ համար մի հարսնացու է պատրաստել, մի հարսնացու, որ նմանը չես ճարի:

Էրեկլէ. Ո՞վ է:

Անանիա. Գայեանէն, Օթար-բէկի աղջիկը: Հը, սոց է: Էսօր դեռ մեր ու ուրիշի արիւնով կը հարբենք, յետոյ էլ, Աստուծով, թագաւորի հարսանիքին գինով կը հարբենք: Միթէ մեզ էդ ոգորմութեան չպիտի արժանացնես: Միթէ էսքան տանջուելուց յետոյ, չպիտի մի ազատ շունչ քաշենք: Չէ, չեմ մեռնի, մինչև որ հարսանիքիդ մեր կրակոտ պարը չպարեմ:

Էրեկլէ. (Սաստիկ-զարմացած) Ասում ես... Գայեանէն: Օթար-բէկի աղջիկը:

Անանիա. (Խստութեամբ) Կը ներես, արքայորդի, հիմա էդ բաների մասին խօսելու ժամանակը չէ: Ես կ'երթամ, չորս կողմն աչքի կ'անցկացնեմ. ով է իմանում, լաստի ճամբին կարող է ետ մնացած մարդ լինել: Դու ինձ էստեղ սպասիր ու չորս կողմը մտիկ արա, աչքից բան չփխսցնես: Հէնց որ կամաց շուռցիս ձէնը լսես, իջիր դէպի գետը: Էդ նշան կը լինի, որ ժամանակ է և ճամբէն էլ ազատ է: (Գաղտաղդի եւ անսելի քայլերով հեռանում է դէպի ձախ):

VII

Էրեկլէ. (Կանգնած է ծառի ստուերում, զինեման մօտ եւ շշրնջում է) Ո՛չ, այդ չի լինի... Օթար-բէկի աղջիկը. Գայեանէն... Դաթօն ասում էր...

Ռուբայա. (Կամացուկ) Էրեկլէ:

Էրեկլէ. (Յնդուկով) Այս ի՛նչ է:

Ռուբայա. Էրեկլէ, ես եմ, Ռուբայան եմ:

Էրեկլէ. (Ուրախութեամբ խուլ ճիչ արձակելով, մի քանի ոտիւնով նետում է դէպի զինեման աւերակները, գրկում է նրան, նայում է երեսին եւ առանց ձայն հանելու, կտրուած հասկի նման, անզգայ ընկնում է նրա ոտքերի մօտ):

Ռուբայա. Ուշքի եկ, սթափուիր, Էրեկլէ: Ե՛ս եմ, Ռուբայան եմ: (Համբուրում է նրան: Նա ցնցում է եւ աչքերը բացում):

Էրեկլէ. Ո՛չ, սա զտանցանք չէ... սա կրակ չէ... Դու ես. դու—այստեղ, ինձ հետ: Օ՛, եթէ իմանայիր, թէ ի՛նչ քաշեցի ես այս հինգ օրը: Իսկ այժմ... այս դու ես... Այս քո ձեռքերն են... քո երեսն է... Չգում եմ քո շունչը, քո բուրմունքը... Դու ես... դու ես... (Համբուրում է նրա երեսը, ձեռքերը, ծնկները):

*Ռուքայա.* (Յանկարծ ուժգին թափով աղաւուում է նրա գրկից եւ ձեռքն իշխանաբար դնում է նրա գլխին) Սպասիր: Այժմ ամեն մի բոլորէն թանկ է: Առ այժմ ստացիր վերջին համբոյրս: (Սիրաբորբոր եւ նրկար համարուում է նրան: Յետոյ յանկարծ ընդհատում է համբուրելը եւ նայում է նրա աչքերին): Այժմ արդէն դու իմն ես: Ես ներս ծծեցի քո հոգին:

*Էրեկլէ.* (Երջանկութեամբ, ասես խելքը կորցրած՝ նայում է նրա աչքերի մէջ) Այո, այս դու ես... դու:

*Ռուքայա.* Ես ուզում եմ, որ դու իմը լինես յաւիտեան, և այդպէս էլ կը լինի: Սիւլէյման թագաւորին դաւաճանութիւն է սպառնում: Այս քանի օրերս ինձ պահում էին գերուհու նըման: Ես չէի կարող մարդ ուղարկել նրա մօտ: Եթէ Ալ-Ռազաքին սպանելու պէտք չլինէր, ես նրա միջոցով ամեն բան իմաց կը տայի: Բայց նրան պէտք էր սպանել, ապա թէ ոչ՝ ինձ կը սպանէին:

*Էրեկլէ.* Օ, այժմ էլ ոչ մի բանից մի վախենար: Դու չգիտես, ո՞վ է քեզ սիրողը: Ես քո Սիւլէյմանին ոտքիս տակ կը տամ ու կը տրորեմ, այս կոշտացած կաւի պէս: (Կխճորում է կաւի քուծօր):

*Ռուքայա.* Դու: (Մեղմ ու զրգոյշ ծիծաղով): Դու լաւ համբուրել պիտես, աւելի լաւ, քան թէ նա. իսկ մարդիկ ոտքի տակ տալ՝ նա աւելի լաւ գիտէ, քան թէ դու: Ո՛չ, նրան ոչ թէ պիտի ոտքի տակ տալ, այլ ինձ հետ միասին պիտի փախչել, գնալ նրա մօտ և հէնց իսկոյն: Ես ամեն բան իմացել եմ. նրանք ուզում են մտնել քաղաքը ու ապստամբների առաջ դարպասները բանալ: Ո՛չ, ես նրանցից առաջ կը հասնեմ այնտեղ: Ես եղջերուի նման արագ եմ վազում, իսկ նրանց կարաւանը դանդաղ է ընթանում... Նրանք ճանապարհից ծռուել չեն կարող, իսկ ես միայն այս սարը պիտի կտրեմ:

*Էրեկլէ.* Ռուքայա, սպասիր, դու չգիտես... Քեզ չեն թողնիլ ներս մտնես: Այնտեղ մերոնք բռնել են բոլոր անցքերը:

*Ռուքայա.* Ճշմարիտ: Նոյն իսկ եթէ ասեմ. «Թափառական Սարա»: (Ծիծաղում է): Օ, Չէյնար թագուհի, դու խորամանկ ես, բայց ես աւելի խորամանկն եմ: Ես քեզ խաբեցի: Ես ամեն բան իմացայ: Ես գաղտուկ ականջ էի դնում, երբ դու երկար-բարակ խօսում, դաւադրութեան ծրագրներ էիր կազմում քո անիծեալ պառաւի հետ: Ես կտուրից լսում էի, ինչպէս դաւաճան Օթար-բէկը խորհրդակցում էր այն թափառական Սարայի հետ... Նրանք իմ ձեռքումն են: Նրանք ինձ բերին, հասցրին այստեղ, քաղաքին մօտ: Որպէս զի գեղեցկութիւնս չփչանայ, չթառամի, նրանք ինձ սայլ նստեցրին,

մեն-մենակ, որ ոչ ոքի չկաշառեմ և շրջապատեցին ինձ պատուաւոր պահակախմբով: (Ծիծաղում է): Եւ ահա, տեսնում ես: Այս եպիսկոպոսն ու բաշլըղը իմ ծառաներից մէկինն է: Նրանք մէկ էլ բերդում կը տեսնեն ու կը ճանաչեն ինձ և այնտեղ էլ կը դիմաւորեմ ես նրանց: Նրանք ուզում են բերդը մտնել—և կը մտնեն: Եւ նրանց ամենքին, ամենքին էլ կտոր-կտոր կ'անեն այնտեղ: Իսկ թագուհուն, զ, թագուհուն առանձին պատիւ է սպասում... Ես ոտքի տակ կը տամ նրա հպարտ աչքերը: Եւ նա ոտքիս տակ շնչասպառ կը լինի: Ի՞նչ պատահեց քեզ:

*Էրեկլէ.* (Մեղմ պէս գունատուած, ապուշ աչքերով նայում է նրան): Ո՛չ, Ռուքայա, դու չգիտես...

*Ռուքայա.* Ի՞նչ չգիտես: Ես մի բան միայն գիտեմ, որ տեսել եմ քեզ և դու ազատ ես: Ես կարող էի ուղղակի փախչել, բայց քեզ էի որոնում... հասկանում ես: Ես քեզ այնտեղ էլ կ'ազատէի, բայց հիմա լաւ է... Ես շերմ փափագում էի տեսնել քեզ... Իսկ հիմա... Մենք երկուսս կը գնանք թագաւորի մօտ: Ես կասեմ, որ դու ինձ օգնեցիր փախչելու, որ քեզ դաւաճանները կալանաւորեցին, որովհետեւ հաւատարիմ մնացիր թագաւորին, և դու գործով կ'ապացուցանես նրան քո հաւատարմութիւնը: Նա կը պարգևատրէ քեզ, և ես թագուհի դառնալով կը սիրեմ ու փառք ու պատուի կը հասցնեմ քեզ Փախչենք: Նրանք դեռ ճանապարհի կէսը չանցած՝ մենք արդէն այնտեղ կը լինենք: Այժմ իսկ ժամանակն է: (Վաղիով բարձրանում է զինտան աւերակների պատի վրայ եւ դիտում է հեռուն): Զօրքը ցած է իջնում... հրէն, նա գալարում, պտոյտներ է անում սև ու երկար բծի նման: Օ, ես կատուի պէս սրատես եմ. ես լսում եմ նոյն իսկ խոտի աճիլը: (Ծիծաղում է իր սովորական ծիծաղով): Գնացէք, գնացէք... Ես կը դիմաւորեմ ձեզ... (Ուժգին թափով ընկնում է Էրեկլէի վրայ): Օ, ինչպէս երջանիկ կը լինենք մենք: Ահա քեզ էլի գրաւական: (Համարում է նրան և բրբռում): Նրանք տանում են Ռուքայային: Հա, հա, հա: Հիւանդ Ռուքային... հա, հա, հա: Պահակներով շրջապատած... Երևի, դարպասների մօտ թագուհին կը բարձրացնէ սայլի ծածկոցը և կ'ասէ. (ծաղրով ձեւայնում է թագուհուն) հիմա քեզ լաւ ես դում, գեղեցկուհի: Օ, մի տեսնէի նրա երեսն այն բոլորին, երբ նրա աչքը կ'ընկնէր դատարկ վանդակին: Ուշ է: Դէ, թոչէնք՝ թե առած: Ինձ ծանօթ է այստեղի ամեն մի շաւիղը... Թըռչենք, սլանանք երջանկութեան ետեւից... Զմոռանաս՝ «Թափառական Սարա»: Հա, հա, հա: (Փաշում է նրան իր ետեւից): Ի՞նչ է, վախենում ես հետեւել ինձ:

Էրեկլէ. Սպասիր, Ռուքայա... Անկարելի է, անկարելի է...  
Ռուքայա. (Ապշած) Ի՞նչն է անկարելի...

Էրեկլէ. Դու չգիտես—սիկ եմ ես և ի՞նչ պիտի անեմ...  
Դու չգիտես—սիկ ես ուզում կորստի մատնել... Նա իմ մայրն է, Ռուքայա:

Ռուքայա. Ի՞նչ... դու գառանցում ես:

Էրեկլէ. (Ուժգին եւ բռն) Ո՛չ, Ռուքայա: Այդ Սիւլէյման թագաւորը սղանել է իմ հօրը... Նա ուղեցել է ինձ էլ սպանել... Ինձ փրկել է ձերունի Գլախան... Իմ հայրը թագաւոր է եղել... Ինքը թագունին, Օթար-բէկը և ձերունին... այս ընկալիս ծոնակ էին չորել իմ առաջ... Ամեն ինչ պատրաստ է... Ռուքայա, ամեն ինչ: Ես այսօր օդ պիտի թռչնեմ Մետեխի պահեստները... Իմ մարդիկը ներս կը խուժեն խորտակուած ամբողջ և քո տէր-իշխան Սիւլէյմանը կը ջնջուէ իր ամբողջ զօրքով: Ես կը բարձրանամ հայրենի գահը և դու կը բազմես իմ կողքին...

Ռուքայա. (Աչքերը չած նայում է նրան) Դու ցնորուել ես:

Էրեկլէ. ո՛չ, իմ հոգիւ հատոր, ո՛չ, իմ պայծառ արեւ: Դու էիր իմ առաջին մտածածները, երբ իմացայ, թէ սիկ եմ ես: Նրանք ուզում են Օթար-բէկի աղջիկը տալ ինձ կնութեան...

Ռուքայա. (Չար յոյզի եւ խանդոտութեան ախմայ ձեռով) Ա՛:

Էրեկլէ. Բայց սիկ կը համարձակուի հրամաններ տալ թագաւորին: Քեզ համար կը շողշողայ իմ գլխի թագը: Քո ոտքերի առաջ կը խոնարհուի իմ ամբողջ թագաւորութիւնն՝ ինձ հետ միասին:

Ռուքայա. Սպասիր... սպասիր... (Յօնքերը կիտած՝ սատոկ մտածում է): Դու՛ այդ երեխայ տեղովդ... Թագաւոր: Դու—թագաւոր: Եւ Ձէյնար թագունին քո գլխին խնամակալ... Հապան ես... (Քահ-քահ ծիծաղում է):

Էրեկլէ. Մի ծիծաղել, Ռուքայա: Ես երեխայ չեմ, դու չգիտես իմ ոյժը:

Ռուքայա. (Սրտ) Քեզ խաբել են: Քեզ խելքից հանել են, այ երեխայ: Դու ի՞նչ թագաւոր ես: Միթէ թագաւորներին կալանաւորում ու սպանուելու են ուղարկում: Դու նրա որդի՞ն ես: Միթէ մօր սիրտը կը տայ, որ մի ամբողջ շաբաթ իր որդին շղթայակապ պահուի: Միթէ մայրը կը թողնէ, որ որդին ժայռերի փլուածքներում գտնէ իր գերեզմանը:

Էրեկլէ. (Վարանման մէջ, չիմանալով որին հաւատալ) Ո՛չ... ո՛չ... Անանխան հետս է լինելու... Նա ինձ սիրում է...

Ռուքայա. Ինքդ ասացիր, թէ դու նրա որդին չես: Էլ ի՞նչի նա պիտի մեղքանայ քեզ: Նրա հարազատ որդին փա-

խաւ, իսկ քեզ բռնեցին...

Էրեկլէ. Բայց չէ՞ որ նա իր վրայ առաւ իմ գործած ոճիրը: Ռուքայա. Եւ փախաւ, իսկ քեզ բռնեցին: Հիմա էլ քո հոգեհայրը քեզ ամբողջ պայթեցնել կը տայ և ինքը կը փախչէ. իսկ դու կտոր-կտոր եղած՝ օդ կը թռչես: Հէնց այդ բանի համար էլ քեզ պատրաստել են... Ո՞ւմ ես պէտք դու: Ո՞վ է սիրում քեզ: Միայն ես: (Համբուրում է նրան: Յանկարծ): Սպասիր, ուրեմն դու ես նա... Քո մասին էին խօսում Օթար-բէկն ու թագունին...

Էրեկլէ. (Մոլորում) Ի՞նչ էին ասում:

Ռուքայա. Այն, ինչ որ ես միայն հիմա եմ հասկանում: Համբերի՛ք. թող միտս բերեմ: (Որպէս թէ մտաբերելով): «Այն ընկեցիկը կը պայթեցնէ Մետեխը»...

Էրեկլէ. (Յնչուելով) Ընկեցի՞կ:

Ռուքայա. Այո՛, այո՛... Իսկ ինձ համար այդ ընկեցիկը բոլոր թագաւորներից աւելի է սիրելի: Ես չեմ թողնիլ, որ քեզ կորուստի մատնեն: Ես նրանց կը կորցնեմ: Ես վրէժ-խընդիր կը լինեմ... քո փոխարէն: Օ՛, սիրելիս, հոգիս կեանքս: (Համբուրում է նրան: Սովորական ծիծաղով): Բայց եթէ դու իսկապէս էլ որ թագաւոր լինէիր... միթէ Ձէյնար թագունին ինձ... ողջ-ողջ կը տար քեզ: Ինձ՝ սարկուհուս: Նա ինձ կը թունաւորէ: Բայց չէ՞ որ այդ բոլորը սուտ է... Նա վաղուց է սիրում Օթար-բէկին: Նրան է ուզում թագաւոր դարձնել: Օ՛, ես այդ բոլորը գիտեմ, այդ բոլորը հասկանում եմ... Ես լսել եմ նրանց խօսակցութիւնը... Բայց քեզ չեն խիլ ինձանից: Քեզ չեն կորցնիլ, քանի ես կենդանի եմ... Ես կ'ազատեմ քեզ... Դու ես իմ աշխարհը, իմ թագաւորութիւնը...

Էրեկլէ. (Նայելով նրա աչքերի մէջ) Նրանք ինձ խաբել են: Այո՛... Օ՛, անիծուածներ: (Հեռուից լսում է թնկեւ սուլոց):

Ռուքայա. Այս ի՞նչ է:

Էրեկլէ. Գլախան կանչում է ինձ...

Ռուքայա. Ո՞ւր:

Էրեկլէ. Կաստ նստելու:

Ռուքայա. (Փառածուելով նրան) Թող կանչի: Դու ինձ հետ կ'երթաս, չէ՞:

Էրեկլէ. Վերջին անգամ, Ռուքայա: Երգե՛մ ես, որ սիրում ես ինձ:

Ռուքայա. Եթէ չսիրէի, չէի ազատիլ քեզ: (Համբուրում է նրան: Երկրորդ սուլոց): Սուլի՛ր: Մենք առանց քեզ էլ ճանապարհը կը գտնենք: (Ներկուց միասին վազում են կիրճի խորք):

### ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հանգստի սենեակ Միլէյմանի ապարանքում: Խորքում՝ պատուհանի լայն խոռոչ (ամօրպաթ), որի գունաւոր ապակիներով պատը նայում է դէպի մաւրիտանական սիւներով զարդարուած բաց պատշգամբը (տէրրա): Գետի միւս կողմում երևում են Մետեխի ժայռերը՝ ամրոցի ամբարտակներով և տաճարով, ինչպէս առաջին արարուածում: Սենեակի պատերը ծածկուած են գորգերով, առաստաղը նախշած ու կամարաւոր: Պատերի մէջ խորունկ խորշեր, ուր շարուած են ամաններ: Առաստաղի զանազան մասերից շրթաներով կախուած են կանթեղանման լապտերներ: Պատերի տակ՝ գորգերով ու բարձերով ծածկուած լայն թախտեր, որոնց վրայ փռուած են ոսկեկար ու մետաքսանկար նուրբ գործուածքներ: Ձախ կողմը, պատի մօտ, դրած է գահաթախտ, որի վերևը, պատից կախուած են գէնքեր՝ ատրճանակներ, թրեր, տապարածն տէգեր և նիզակներ: Աջ ու ձախ կողմի դռները, բացի միջին դռնից, մօտ են նախաբեմին: Սենեակի մէջտեղում—աւազան՝ գունաւոր մարմարից: Գիշեր է: Երկինքն յաճախակի լուսաւորուում է կայծակի փայլատակուածներէ: Մերթ ընդ մերթ լսելի են որոտմունքի խուլ, ուժգին հարուածներ:

### I

Միլէյման-խանը կիսամեր բազմած է թախտին: Ղարա-Իւտուֆը կանգնած է նրա առաջ ստրկական դիրքով: Խօրրում, պատշգամբի վրայ, երևում է Խախարի կերպարանքը:

Միլէյման-խան. Գիշերապահ ձիււորները շատ մարդ են բռնել այսօր քաղաքի շրջականներում:

Ղարա-Իւտուֆ. Իննսուն հոգի, ով աշխարհի զարդ: Այս բոլորին Օթար-բէկի սուրհանդակը լուր բերեց վերջին դադարի տեղից, որ Էրիսթան իր հետ դարձեալ յիսուն մարդ է բերում:

Միլէյման-խան. Բռնուածներն ի՞նչով են զինուած:

Ղարա-Իւտուֆ. Ամենից շատ—հովուական երկաթապատ մահակներով, մուրճերով ու մանգաղներով: Քչերն ունեն թուր ու դաշոյն և միայն չորս հոգի՝ հրացաններ:

Միլէյման-խան. Եւ այդ զէնքով նրանք գալիս են... իմ դէմ կուռելու: Ի՞նչ են ասում հարց ու փորձի ժամանակ: Ի՞նչի են հաւարում:

Ղարա-Իւտուֆ. Ոմանք ընտանեկան, ոմանք էլ առևտրական գործերն են պատճառ բերում, ով յաղթողների յաղթող: Մէկը միայն չդիմացաւ տանջանքներին, սկսեց բղաւել ու ըստ պառնալիքներ կարդալ... (Միտաղում է):

Միլէյման-խան. Ի՞նչ սպառնալիքներ:

Ղարա-Իւտուֆ. Յիմար բաներ, ով ամենազօր: Բարբանջում էր, թէ խաչի դէմ գնացողին՝ խաչը կը կործանէ, թէ մօտ է Աստուածային ցասումը, թէ... լցուել է համբերութեան բաժակը... Նրանք մահից առաջ յաճախ են այդպէս բղաւում ու տակից-գլխից դուրս տալիս: (Որոտմունք):

Միլէյման-խան. Թագուհին այսօր հաղորդում է, որ Օրբելեանն ու Սմբատը, փախել, գնացել են Մոսկովի թագաւորի մօտ՝ նրանից օգնութիւն խնդրելու:

Ղարա-Իւտուֆ. Հեռո՞ւ է Մոսկովի թագաւորը, ամենայն ժամ տէր:

Միլէյման-խան. Կովկասի այն կողմը, ցուրտ ու մութ երկրներում, ապրում են Գոգն ու Մագօզը, ասում է ղուրանը: Բայց դեռ շուտ չի լսուիլ Իսլամի վախճանական ժամը:

Խախար. (Պատշգամբից) Արդէն լսում է... հեռուից:

Միլէյման-խան. Ի՞նչ ասացիր, Խախար:

Խախար. Ես լսում եմ ձիերի հեռաւոր տրոփիւնը: Թագուհին մօտենում է:

Միլէյման-խան. Ղարա-Իւտուֆ, թագուհին տեղեկացնում է, որ հարկահանների վրայ յարձակումն են գործել, որ Ալ-Ռագաբին սպանողները հարց ու փորձի ժամանակ յանդգնում են անպատիւ խօսքեր ասել թագուհու երեսին:

Ղարա-Իւտուֆ. Թագուհին է տեղեկացնում: Թող նա իմ ձեռքը տայ նրանց, տէր: (Աչքերը ծռելով): Բայց թոյլ տուր իմանալ—Ռուքայայից լուր կայ:

Միլէյման-խան. Նա տեղեկացնում է, որ թագուհին վախենում է Օթար-բէկի աղջկայ գեղեցկութիւնից: Էրիսթան աշակերտելիս է եղել թագուհուն՝ յայտնելու ինձ, որ նրա աղջիկն արժանի չէ փառլշահի հայեացքին: Ռուքայան վերջին սուրհանդակի բերանով հաղորդում է, թէ թագուհին կը փչացնէ այդ աղջկան: (Հեղձանքով): Կին-արարածը կարծում է, թէ աշխարհիս երեսին էլ ուրիշ ոչինչ չկայ, բացի իր գեղեցկութիւնից:

Ղարա-Իւտուֆ. Փառք քո իմաստութեան, ով ամենազէտ Խախար.

Միլէյման-խան. Օրբելեանի խմբերի դէմ ուղարկուած զօրաբաժինը վերադարձել է:

Ղարա-Իւտուֆ. Ի՞նչ, ով հուր ու շանթ անհաւատների:

Միւլէյման-խան. Ես հրամայել էի երրորդ օրը վերադառնալ: Այսօր հինգերորդ օրն է:

Ղարա-Իւսուֆ. Հինգերորդն է, արդարութեան օթեան: Փոթորիկն ու հեղեղները փչացրել են ճանապարհները, գետերը վարարել են...

Միւլէյման-խան. Այդպիսի փոթորիկներին, վախկոտ շնն, ես հազար բեղուինի հետ Ինդոսն եմ անցել ու հազար փիղ առջև ձգած՝ դէս ու դէն փախցրել: (Մտախոհ): Ճշմարիտ է, այն ժամանակ արեգակն այնպէս սև չէր երևում աչքիս, երբ ես նայում էի նրան:

Դասխար. Ես շուտով էլի կը փայլի:

Միւլէյման-խան. Ի՞նչ ես ասում, Իսախար:

Դասխար. Ասում եմ, արեւը շուտով կը փայլի... այս գիշերուայ փոթորկից յետոյ:

Միւլէյման-խան. Ամպը չէ, որ սքօղում է նրան, այլ դաւաճանութիւնը: (Հանդիստ): Ղարա-Իւսուֆ, ի՞նչ է գրում Սարգարը Երևանից:

Ղարա-Իւսուֆ. Ասող... (Երկիւղից մեռելի գոյն ստացած՝ չի կարողանում ոչ մի խօսք ասել: Ծնկները դողողալով՝ իրար են խփում): Միւլէյման-խան. (Սարսուռ բերող եղանակով, առանց նայելու նրա վրայ) Ի՞նչ է գրում քեզ սարգարը Երևանից:

Ղարա-Իւսուֆ. Ասող... ասողերի ախոյեան, ես նամակ չեմ ստացել...

Միւլէյման-խան. Ստացիր ուրեմն... Դու վաղուց է սպասում ես այս պատասխանին: (Տալիս է նամակը: Ղարա-Իւսուֆը ոտքերն հազիւ շարժելով՝ մօտենում է, վերջնում է նամակը եւ փուռում Միւլէյմանի ոտքերի առաջ):

Դասխար. (Ինքն իրան) Հրդեհից առաջ միները դէսուղէն են փախչում: (Քարձրածայն): Տէր իմ, դահճին կանչեմ:

Ղարա-Իւսուֆ. (Շրթունքներն հազիւ շարժելով) Տիեզերքի... զանգ... լճյսի... ես չեմ դաւաճանել... ես ուզում էի նրանց դիտաւորութիւններն իմանալ... Խղճա...

Միւլէյման-խան. Ի՞նչի համար: (Որոտքի հարուած):

Ղարա-Իւսուֆ. (Փորսոյ տալով նրա ոտքերի առաջ) Ես ծառայել եմ քեզ... Խղճա...

Միւլէյման-խան. Հարցնում եմ—ի՞նչի համար: Ասան, ո՞ւր է քո իմաստութիւնը, Ղարա-Իւսուֆ, իմ խելօք վեղիր,—այնտեղ, ինչտեղ քո հաւատարմութիւնն է:

Դասխար. Դահիճներին կանչեմ, տէր իմ:

Միւլէյման-խան. (Մտախոհ եւ մտալ) Արժէ՞, որ մարդ կեանքի համար աղերսէ: Ամեն բան կանցնի: Չկայ ժամանակ, կայ

միայն յաւիտենականութիւն: Այն, ինչ որ կար երէկ, չկայ այլևս: Այն ինչ որ լինելու է էգուց, չի լինիլ երկու օրից յետոյ... Չկայ այլևս այն, ինչ որ ասացի քեզ, երբ սկսեցի իմ խօսքը: Ի՞նչիդ է պէտք ներումն: Ամեն բան կանցնի:

Ղարա-Իւսուֆ. Ես քո առաջ կը բանամ թշնամիներդ բոլոր մեքենայութիւնները: (Համբուրում է նրա ոտքերը):

Միւլէյման-խան. (արհամարանքով) Ասան:

Ղարա-Իւսուֆ. (Քուռն ուրախութիւնից խելակորոյս ձշալով) Տիեզերքի տէր ու թագաւոր, ես ամենքին կը մատնեմ, ամեն բան կ'ասեմ: Այս օրերս այստեղ է գալու փաղիշահի դեսպանը: Ըստ սովորութեան, դու պէտք է դիմաւորես նրան ամրոցից դուրս, դարպասների առաջ: Քեզ ուզում են կտոր-կտոր անել, տէր իմ:

Միւլէյման-խան. Դու շնտ ասացիր, Ղարա-Իւսուֆ: (Վեր կենալով, անվրդով): Արի իմ ետեից: (Մօտենում է պատշպամբի դռանը եւ բացում է): Դու ինձ այլևս պէտք չես: Դու ո՞ւրն ասացիր: Թող կատարուի արդարադատութիւնը: Դու արժանի ես մահուան պատժի, քանի որ դաւաճանեցիր ինձ, և—ներման, քանի որ նրանց ես դաւաճանում: Ալլահը ցոյց կը տայ, թէ ո՞վ պիտի մեզանից յաղթողը լինի. եթէ կտրար—կը յաղթեմ ես, իսկ եթէ ազատուեցար—կը յաղթեն նրանք: Ահա քո ճանապարհը: (Յոյց է տալիս ցածում հոտոյ վետր):

Ղարա-Իւսուֆ. Տէր իմ, այնտեղ գետի խոր ու արագ տեղն է: Այնտեղ սուր-սուր քարեր կան... Դա մահուան պատիժ է, ո՞վ աշխարհի տէր-իշխան:

Միւլէյման-խան. Եթէ քեզ վիճակուած է ազատուել, կ'ազատուես... (Իւսուֆն ընկնում է նրա ոտքերը): Խօսքս—խօսք է և կտրուկ, սրիս պէս: (Ղարա-Իւսուֆը նետում է գետը):

Դասխար. Սա երկրորդն է: Մէկ-մէկ ընկնում են թուխաւոր տերևները:

II

Միւլէյման-խան. (ներքեւ նայելով) Կորսու: Այսպէս էլ իմ թշնամիները կը կորչեն: (Ձեռքը սարգելով դէպի Մեռիլը): Թող փորձեն յաղթել ինձ, քանի Մեռիլը կանգնած է Թիֆլիսի բարձունքներին:

Դասխար. Պահպանիր Մեռիլը, տէր իմ: Պահպանիր Մեռիլը:

Միւլէյման-խան. (Շուտ գալով՝ նայում է նրա աչքերի մէջ) Ի՞նչ ասացիր:

Իսախար. Ասում եմ, Մետեխը պահպանիր: Այնտեղ է քո ամբողջ զորքը: Այնտեղ են քո բոլոր պահեստները: Մետեխը պահպանիր: Դու ասում ես, չկայ ժամանակ, կայ յաւիտեանականութիւն: Իսկ առ այժմ—Մետեխը պահպանիր:

Սիւլէյման-խան. (Յանկարծ բռնելով նրա ձեռքը) Ասա, պառաւ: Ի՞նչ գիտես:

Իսախար. (Խուլ ձայնով ծիծաղում է) Տէր իմ, վաղուց է իմ սոկորները գերեզմանի կարօտ են քաշում, և իմ մարմինը տանջանքներից չի վախենում: Ի՞նչ ունեմ ես այս երկրի վրայ ամբաստանութիւն: Վաղուց է ես մի չճշ-գլուխ եմ, մեն-մենաձկ, գերեզմանի քարի պէս: Ի՞նչ կարող ես անել, որից ես սարսափեմ:

Սիւլէյման-խան. (Աւելի սեղմելով նրա ձեռքը) Ի՞նչ գիտես, ասա:

Իսախար. Անյաղթ Սիւլէյման, դու յաղթել ես աշխարհքի կէսը, բայց ինձ յաղթել չես կարող: Ի՞նչպէս պիտի յաղթես ոչնչութիւնը: Ես—ոչինչ եմ:

Սիւլէյման-խան. (Ձեռքը բաց թողնելով) Ոչինչ:

Իսախար. Ոչնչութիւն դարձիր դու էլ ինձ նման, և էլ չես վախենալ ոչ մահից ու տանջանքներից, ոչ դաւաճանութիւնից ու փաղիշահից: Ես էլ վախենում էի, քանի պահելու ու պահպանելու բան ունէի: Որդիք ունէի—որդիներին համար էի վախենում, աղջկերք ունէի—աղջիկներին պատիւն էի պահպանում. տուն ունէի—տունս էի սիրում... Իմ որդին ձիու ոտի տակ սպանուեց:

Սիւլէյման-խան. Քո որդին:

Իսախար. Այո... նա ահա այսչափ էր:

Սիւլէյման-խան. Ե՞րբ:

Իսախար. Եստ ժամանակ է: Աղջկերքս—խայտառակութեան են մատնուած: Տունս—քար ու քանդ է եղած: Եւ հիմա ամեն բան իմ աչքին թեթեացել է. էլ ոչինչ չունեմ—և ինքս էլ՝ ոչինչ եմ: (Ծիծաղելով): Էլ ոչ դաւաճանելու, ոչ էլ կոռուելու պէտք ունեմ... միայն պիտի սպասել:

Սիւլէյման-խան. Պառաւ, թող այդ դառանցանքներդ: Ասա, ի՞նչ գիտես:

Իսախար. (Թերեւելով դէպի նա) Գնա Մետեխ: Այնտեղ վրտանդ չկայ: Այնտեղ են քո զինւորները: Այնտեղ է քո զէնք ու զրահը: Այնտեղ կենդանի մարդիկ բեզ վրաս չեն տալ: Իսկ մեռածները... (Յոյց տալով Մետեխի վրայ կիտուած ամպերը): Նրանք այն ամպերի մէջ են: Նրանք սաւառնում են Մետեխի վրայ: Մէկ է, դու նրանց յաղթել չես կարող:

Սիւլէյման-խան. (Ակամայ ցնցուելով) Դու դառանցում ես: Իսախար. Դու նրանց յաղթել չես կարող, խեղճ, անյաղթ Սիւլէյման: Իսկ մարդկանց աչքից—պահուիր Մետեխում: (Ներս են մտնում Ջէյնաթն ու Օթար-բէկը. Օթարի դիմին՝ չափազուրկ պատած սաղաւարտ):

III

Ջէյնաթ. (Նետուելով Սիւլէյմանի ոտքերի առջ) Վերջապէս, արժանացայ քո ծունկերին փարեւու, տէր իմ: Օ՛, անխճուէն անջատման օրերը: Ո՛չ հեղեղ, ոչ փոթորիկ էի հարցնում. թե առած՝ դէպի քեզ էի թռչում:

Օթար-բէկ. (Մուտքի մօտ ծունկ է չորիլ) Յաղթութիւնը բեզ հովանաւոր, մեծագօր տէր:

Սիւլէյման-խան. (Հանդիստ եւ մոծապանծ) Վերադարձդ բարի, Ջէյնաթ: (Ջէյնաթը ձեռքը համբուրելով՝ ոտքի է կանգնում): Ո՞վ էր Ալ-Ռազաբին սպանողը:

Ջէյնաթ. Ռուքայան: Նա փախաւ:

Սիւլէյման-խան. (Սփքը գցելով նրա վրայ) Ե՞րբ:

Ջէյնաթ. Ես նրան տեսայ դեռ երկու ժամ առաջ, վերջին դադարի ժամանակ: Այն օձը երեք օր հիւանդ էր ձեռնում: Մթնանալու վրայ էր, երբ մենք տեղից շարժուեցինք: Նա շարունակ շուր էր խնդրում և դէտուգէն էր ընկնում: Պահակախումբ էր նրան շրջապատել—պատուաւոր պահակախումբ: Ես չէի համարձակուում շղթայակալ բերել նրան—դու նրան հսկող էիր նշանակել իմ ամեն մի քայլիս: Կարծում ես, ես այդ չհասկացայ:

Սիւլէյման-խան. Նա փախել է հազար հոգուց բողբոջած զօրաբաժնից: Օթար-բէկ:

Օթար-բէկ. Ես ամեն կողմ սուրհանդակներ եմ ուղարկել: Նրան կը գտնեն, տէր:

Ջէյնաթ. Ես պիտի հետևէի համ աղջկանը, տէր իմ, համ սոկուն ու արծաթին, համ գերիներին, համ, վերջապէս, հէնց սրան իրան: Ոյժերս սպառուել էին... Ինձ տանջեց ու յոգնեցրեց մի կողմից՝ ճանապարհ գալը, միւս կողմից՝ քո կարօտը... Անհամբեր սպասում էի մեր տեսութեանը... ժամանակ ունէի, որ հսկեմ անարգ ստրկուհուն, ինձ լրտեսողին: Երգում եմ, Սիւլէյման, եթէ քո կամքն օրէնք չլինէր ինձ համար, անառակ Ռուքայան այժմ շղթայակալ ընկած կը լինէր քո ոտքերի տակ: Բայց և այնպէս՝ ամբողջ դարպասների առաջ ես կրկին անգամ մօտեցայ, որ նրա սայլն աչքի անցնեմ: Սայլը դատարկ էր:

Պահակներից մէկը, համարեա մի երեխայ, անանց ետնու և առանց բաշխելի էր. հրամայեցի, որ բռնեն նրան—և նրա աչքերից ու խօսքերից հասկացայ, որ քո սիրական հաւատարիմ Ռուբայան նրան խելքից հանել է:

Միւլէյման-խան. Ռուբայան ինքն է սպանել Ալ-Ռազաքին: Դու այդ աչքովդ տեսել ես:

Ձէյնար. Ո՛չ, տէր իմ: Մարդասպանը փախել է: Բռնուած են նրա հայրը և... (նրա ծայնը դողում է) եղբայրը: (Արագ, աշխատելով խօսքերը վրայ տալ, որ Միւլէյմանն ընդհատել չկարողանայ): Ես նրանց շղթայած բերել եմ հետս, և հրամայել եմ, որ մինչև առաւօտ նրանց Մետեխի բանտում պահեն: Կարելի է, ուզեմ ես հէնց հիմա հարցաքննել նրանց: Կը հրամայեմ, որ իսկոյն նրանց բերեն: (Ուզում է գնալ):

Միւլէյման-խան. Ո՛չ, նրանց հարցաքննելու ժամանակ միշտ կը գտնուի:

Ձէյնար. Օ՛, եթէ տեսնէիր, թէ ինչ օձի աչքեր էր շինել Ռուբայան, երբ մենք յանցաւորներին կալանաւորում էինք: Եթէ ականջ դնէիր նրա կախարդիչ ձայնի խարդախ ելեէջներին... Կասկածն իսկոյն, փայլակի պէս, շողաց իմ գլխում... բայց ես նրա աչքերում կարդացի—ինքը թագաւորն է ինձ նշանակել, որ ես հսկեմ Ձէյնար թագուհին... (Դառն ծիծաղով): Կարծես Ձէյնար թագուհուն հաւատալ չէր կարելի: Կարծես քո հայեացքը, քո շունչը, քո արտեւանութիւնները ամեն մի շարժումը միշտ օրէնք չեն եղած խեղճ Ձէյնար թագուհու համար... Եւ ես չը համարձակուեցի ձեռք տալ քո անառակ Ռուբայային... Իսկ հիմա, տեսնում ես, թէ ումն ես հաւատ ընծայել, որ հսկէ ինձ: Օ՛, ինչպիսի անարգանք: Եթէ դու նրան այդպէս հաւատում էիր, էլ ի՞նչու միայն նրան չյանձնեցիր:

Միւլէյման-խան. Ընծաները պատրաստ են:

Օթար-բէկ. Պատրաստ են, տէր իմ: Ոսկի, արծաթ, ձիեր ու աղջիկներ... բոլորն էլ բերել, հասցրել եմ տասերորդ օրը:

Ձէյնար. Տէր իմ, բոլոր ընծաներն էլ արժանի են փաղիշահի բարձր շեմին: Բայց աղջիկը—սրա աղջիկը: Օ՛, իմ թագաւոր, Իրանի իշխողը նրա մի հայեացքի համար Երևանի սարդարին շղթայած քո ոտքի տակ կը ձգէ... Մնացեալ պարզեմքը դու վազն էլ կարող ես նայել, բայց աղջկանը նայիր հէնց իսկոյն: Կը հրամայեմ, բերեն նրան: (Միւլէյմանը գլխով անանուծեան նշան է տալիս): Օթար-բէկ, (նշանակալից) աղջկանդ բեր և ինքդ էլ պահստորդ կանգնիր... ձիերի ու բեռների մօտ:

Իսախանը, դու էլ գնա հետը, որ աղջկանը բերես: (Օթար-բէկը եւ Իսախարը դուրս են գնում):

IV

Ձէյնար. (Արագ եւ նետրոյային դրուծեան մէջ) Օթար-բէկն հիմա մինչև գերեզման հաւատարիմ կը մնայ քեզ: Այդ աղջիկը նրա համար կեանքից էլ թանգ է: Իսկ մեզ այժմ հաւատարիմ մարդիկ են հարկաւոր: Վրաստանն յուզում է:

Միւլէյման-խան. Ալ-Ռազաքը սպանուած է: Մարդասպանը բռնուած չէ: Ռուբայան փախել է: Վրաստանը յուզում է: Ղարա-Իւսուֆը մահուան պատիժ է ստացել:

Ձէյնար. Մահուան պատիժ: Ի՞նչի համար:

Միւլէյման-խան. (Նայելով նրա աչքերի մէջ) Դաւաճանութեան համար: Ձէյնար թագուհի, Ձէյնար թագուհի:

Ձէյնար. (Վիշտ ու ցաւ ցոյց տալով, գրկում է նրա ծնկները) Ի՞նչ է: Ի՞նչ ես հրամայում, աչքիս լոյս: Ի՞նչի ես այդպիսի մեղսնող հայեացքով նայում ինձ: Վախեցած քո շուրջ տիրած դաւաճանութիւնից, դու այլևս չես հաւատում քո ստրկուհուն... Այն, ստրկուհուն, ստրկուհուն, իր ամբողջ կեանքը քեզ նուիրած ստրկուհուն: Բայց ես ստրկուհի եմ, որին դու կոչում ես ձեռք բերել, և ոչ ոսկով գնել կամ պարգև ստացել... Ես ստրկուհի եմ քո շանթալից աչքերի, քո անխելային սրտի, քո երկաթի բազկի... (Չայն ակամայից ատիւնծեան եւ չարածեան եղանակ է ստանում): Ի՞նչ թողիր դու ինձ համար, բացի միայն քեզանից: Դու զրկեցիր ինձ իմ որդուց, իմ թագաւորութիւնից, իմ հաւատից... (Փոխում է եղանակը): Դու նուաճեցիր ու բնաջինջ արիւր ամեն բան—և ես, աղանիկի պէս, կուչ եմ գալիս արծուի թևերի տակ... Ո՛ւր կարող եմ թռչել քո ձեռքից: Ամեն ինչ քո զօրեղ մագիլներումն են... և յոշոտիք, պատառ պատառ արա ամենքին, բայց ոչ ինձ... (Գարծեալ չկարողանալով իրան զսպել): Յոշոտիք, քանի գեռ քո մագիլները... (Որոտ ու կայծակի ուժգին հարուած): Ա՛...:

Միւլէյման-խան. Ի՞նչ պատահեց քեզ:

Ձէյնար. (Ննքն իրան տիրապետելով) Վախեցայ: Միրտս մաշուել է տանջուելուց, քո հոգսը քաշելուց... և ես վախեցայ... Մի նայիր այդպէս:

Միւլէյման-խան. Ես կեղծիք եմ զգում քո ձայնի մէջ...

Ձէյնար. (Չայրոյթով) Դէ, սպանիր ինձ... և կը հանգըստանաս: Նա կեղծիք է զգում իմ ձայնի մէջ: Իսկ անառակ Ռուբայայի ձայնի մէջ դու ճշմարտութիւն էիր զգում: Իսկ շո-

դորքութ, կաշառուած Ղարա- Իւսուֆի ձայնը քեզ ճշմարտութիւն էր ներշնչում: Միւլէյման, ես չեմ դաւաճանողը, քո լսողութիւնն է քեզ դաւաճանում: Գո աչքերն են քեզ խարում: Ասողներն ես դու սեւացած տեսնում, թէ այս ամպերն են քո աչքին գիշերը լուսաւորում: Սպանիր ինձ, սպանիր: Ես ուրախութեամբ կը մեռնեմ, միայն թէ դու հանգիստ գտնես: Կամ հաւատան ինձ, կամ սպանիր:

Միւլէյման-խան. (Մեղմացած բայց մոայլ) Մինչև այժմ մահըն ընթանում էր ինձ հետ միասին, իմ առաջից. նա երբէք չէր վստահանում շուռ գալ, նայել աչքիս մէջ: Այժմ նա իր երեսն է դարձրել դէպի ինձ... նա թիկունքով է կանգնել դէպի իմ թշնամիները—և նրա ճակատից, որպէս Ղաֆ-Դադի ստոցապատ խորքերից, ինձ վրայ սարսուռ է փչում: (Զէյնաբը նայում է նրան անպէս, ինչպէս մար կը նայէր): Ես անցել եմ կեանքիս ուղին: Ահեղ էր այդ ուղին, որպէս Իսլամը, և փառքի փայլն էր նրան լուսաւորում: Բայց մարգարէն ասել է—նձ գարշապարները ծածկուած են յանուն Ալլահի մղած կռիւնների փոշիով, նա վերջին դատաստանի օրը հեռու կը մնայ գեհնից, աւելի հեռու, քան այն տարածութիւնը, որ ամենաարագալուրդ ձին կարող է անցնել հազար օրուայ մէջ: (Ներս է մտնում Օթար-բէկը, նրա հետ Իսախարը եւ Գայեան, ն' երեսի քողն իջեցրած. երևում են միայն աչքերը):

V

Զէյնաբ. (Արագ մտնելով նրան) Թո՛ղ այդ ծանր մտքերն, ո՛վ իմ տէր: Մի տես, ի՜նչ գեղեցկութիւն է: (Գայեանէի երեսից յետ է գցում քողը եւ մտնցնում է նրան Սիւլէյմանին: Գայեանէն գունատ է. դէմքի արտայայտութիւնը խիստ եւ լուրջ: Զէյնաբն արագ աչքը գցում է Օթար-բէկին):

Օթար-բէկ. (Հազիւ լսելի) Մերոնք բռնել են դարպասները: Օրբելեանը ներսուճն է:

Զէյնաբ. Մի այս աչքերին նայիր, տէր իմ... Այժմ չարութեան հուրն է նրանց բորբոքել... Նա վայրի ու երկչոտ է... Բայց երբ կիրբը նրանց լուսաւորէ... (Ականջ է դնում, խօսում է համարնա անդիտակցարար) երբ փաղաքշանքի ցողը նրանց ծածկէ... հապա այս մազերը... Այս կուսական իրանը:

Միւլէյման-խան. (Զմայլանքով) Փաղիշանը գոհ կը մնայ:

Գայեանէ. (Սուր ձայնով) Ո՛չ:

Միւլէյման-խան. (Ուշադրութիւն չգործնելով) Զէյնաբ, սրան դու ինքդ կը տանես փաղիշանին:

Գայեանէ. Մեռած:

Միւլէյման-խան. (Իսախարին) Իսախար, սրան տան:

Դոսխար. (Ուզում է բռնել նրա ձեռքը) Գնանք, աղջիկս: Գայեանէ. Զեռք... Յոյց տներ, ի՜նչ տեղ է իմ բանտը: Դոսխար. Յոյց կը տամ, գնանք: (Տանում է Գայեանէին):

VI

Միւլէյման-խան. Օթար-բէկ, ես գոհ եմ քո հռանդից: Ինքը թագուհին աղջկանդ կը տանէ Սպահան:

Օթար-բէկ. Մեծ է քո ողորմութիւնը, տէր իմ, և ես փոխարէնը կը հատուցանեմ քեզ:

Միւլէյման-խան. Վաղը դու պիտի ցիր ու ցան անես Թիֆլիսի շուրջ կիտուած թշնամիների խմբերը: Գնա, Օթար-բէկ: (Օթար-բէկը զուլս է խոնարհում եւ գնում է աջ կողմը):

Զէյնաբ. (Գայեանէին ծանուցարն դրած՝ վերադառնալով) Ի՜նչ սոսկալի փոթորիկ է: Տէր իմ, ես միանգամայն թուլացել եմ... Ոյժեքս ինձ դաւաճանում են: Օ՛, ի՜նչ ծանր յուզումներ ու մտատանջութիւններ ասես չեմ քաշել ես այս քանի օրս: (Սիւլէյմանը նայում է դէպի Մեռեալը): Ի՜նչ ես աչքդ յառել դէպի գիշերային խաւարը:

Միւլէյման-խան. Մեռածներից վախեցիր, իսկ կենդանի մարդկանցից—գնա, պահուիր Մեռեալում:

Զէյնաբ. (Աարսափից դողալով) Մեռեալում: Ի՜նչո՛ւ: Ի՜նչ մեռածների մասին ես խօսեմ:

Միւլէյման-խան. Ես սնուել եմ Արարատանի անապատներում. ես նուաճել եմ Մինդն ու Զերալը. ես նամազ եմ կատարել Ինդոսի ջրով՝ առաջ բան Իսլամի սուրը մտցրել եմ կովկասի սահմանները: Իմ հոգին միշտ սովոր է եղել շշնջալու ինձ.—Միւլէյման, զրահաւորվիր, սաղաւարտ գիր գլուխդ, ձեռք առ մերկացրած սուրդ—թշնամիդ մօտ է—նա այնտեղ, լեռների ետևն է, նա պահուած է գետերի թփուտներում, նա փոռած է անապատի աւազներում: Եւ քանի դեռ ես սոսկ զինուոր էի, իմ հայեացքը խաւարն էր թափանցում, իմ ականջը չորցած տերևի խշրոցն էր լսում և, որպէս բազէն բարձրից, ես նետում էի թշնամիներիս գլխին: Իսկ հիմա քսան տարուայ հանգիստը բթացրել է ինձ: Ես վստահ եմ զգում, բայց թէ ի՜նչ տեղ է, ո՞ր կողմից է նա գալիս—չգիտեմ: (Զափ կողմից, պատշգամբից, Թուրքայի ձայնը՝ «դաւաճանութիւն», տէ՛ր իմ, դաւաճանութիւն»: Միւլէյմանը Թուրքայի ձայնը ճանաչելով՝ մ կէն շտկում է, ասես, օձից խայթուած, եւ հասկանալով բանի էութիւնը, բռնում է Զէյնաբի ձեռքից):

Միւլէյման-խան. Օ՛ձ:

Զէյնաբ. Գտնուեց: Ահա նա: Նա իմ կորուստն է փափագում: (Ներս է մտնում Թուրքայան):

VII

Ռուբայա. (Վրան ետիսցի ձգած, զխից բաշլորը պոկելով՝ մագերը թափում են երեսին ու ուսերին) Տէր իմ, ես ժամանակին հասայ: Ես փրկեցի քեզ... Թագուհին քեզ դաւաճանել է:

Ձէյնար. (Ուժալից, աշխատելով ժամանակ շահել) Դաւաճանութիւնը քո մէջ է, անամօթ ստրկուհի: Զրպարտութեամբ ես ուղում քողարկել քո անառակութիւնը: Ի՞նչտեղ է քո սիրեկանը: Ո՞ւմ հետ էիր փախել:

Ռուբայա. (Կատարի) Իմ սիրեկանը: Նա ինձ հետ է: (Նետում է դէպի պատշգամբ եւ արագ թափով դուրս քաշելով՝ առաջ է բերում էրեկէին): Ահա նա:

Ձէյնար. (Գերմարդկային ուժով դուրս է արծնում Սիւլէյմանի ձեռքից, նետում է դէպի որդին եւ մի երկար ու խոր մկտանքով՝ երեսի վրայ փռում է գետին):

Ռուբայա. (Հիւալով) Հիմա էլ ոչ մի բանից մի վախենար, տէր իմ: Ես հետամուտ եղայ աղուէսին... ես հագիւ-հազ կարողացայ ներս մտնել այստեղ... Անթիւ, անհամար ամբոխ է շրջապատել բերդը... նրանք բոլորովին մօտ են պարիսպներին... նրանք թագնուած են լեռներում... քաղաքի կտուրների վրայ... նրանք ամեն տեղ են: Նրանց նշանն է՝ «Թափառական Սաբա»... Առանց այդ խօսքերի... (Նրա ձայնը կտրւում է):

Սիւլէյման-խան. Ո՞վ է այս մարդ... (Նա խորը նայում է եւ քայլ առ քայլ ետ-ետ է քաշում, ասես, տեսիլքի առաջ) Մեռեցները կենդանանում են:

Ռուբայա. Սա քո հաւատարիմ ծառան է: Սա մասնեց ամենքին: Սա պիտի պայթեցնէր Մետեխը: Սրան սպառնանքով հարկադրում էին. սրան խարել էին, ասելով թէ ինքը թագաւորի որդի է... Բայց ես ասացի—փախչենք թագաւորի մօտ, պատմենք նրան բոլորը, նա կը վարձատրէ քեզ...

Սիւլէյման-խան. (Սթափուելով, արագ քաշում, բարձրացնում է յատակից Ձէյնարին) Սա քո որդի՞ն է:

Ձէյնար. (Մարած ձայնով) Ո՛չ:

Ռուբայա. (Էրեկէին) Լսում ես:

Էրեկէ. (Կատարի) Ո՛չ, արքայ, ես ընկեցիկ եմ: Նրանք ինձ պահել, մեծացրել են, որ յետոյ ոչնչացնեն... Ես ընկեցիկ եմ: Ես մատաղ բերուած ոչխարի պէս, արիւնաբամ լինելով՝ նրանց ոտքերի տակ պիտի ընկնէի... Եւ Օթար-բէկն ընկեցիկի գլխին պիտի յենէր իր ոտքը՝ քո գահը բարձանալիս...

Ռուբայա. (Արագ շարժումով դուրս հանելով նրա ծոցից վառօղի պատրոյզը) Նայիր, տէր իմ, ահա ի՞նչ է տուել սրան քո հաւատարիմ Ձէյնարը: Քո ոյժ ու նեցուկ Մետեխը օդը կը թռչէր

եթէ ես չթափանցէի նրա խարդախ սիրտը: Ե՛ս քեզ փրկեցի:

Սիւլէյման-խան. Ձէյնար, ես բարձր եմ կանգնած: Ինձանից էլ բարձր—իշխում է Աստուած: Դաւաճանութիւնն ընկած է ներքևում: Թո՛ղ նա ինձ տապալէ, եթէ կարող է: (Նայում է նրան): Հիմա ո՞վ պիտի ձեզ փրկէ:

Ձէյնար. Սիւլէյման արքայ, ի՞նչ եմ անում ես հիմա փրկութիւնը: Դու տեսնում ես, ո՞վ է ինձ մատնողը... Ի՞նչիս է պէտք փրկութիւնը: (Նրեկէին՝ մեղմ ու անսպաս լի վշտով): Այո, դու իմ որդին չես, այո: Ես ուզում էի քեզ ոչնչացնել... Բայց քո հայրենիքը... քո եղբայրները... Սաչը քո անարգ կրծքին... մի՞թէ այդ ամենը... այդ ամենը դու կարողացար զո՞ւ բերել սրա փաղաքշանքներին... և այն մարգու շնորհին, որը քո երկրի արիւնը ծծեց... Իմանում ես—ի՞նչ արիւր դու: Ո՛չ, լաւ է, որ մեռնես և չիմանաս: Իմանում ես—ի՞նչ արիւր: Դու արեգակը հանգցրիր, երբ նա ծագելու վրայ էր: Դու անլոյս, մըշտախաւար գիշեր ստեղծեցիր քո հայրենիքի համար:

Էրեկէ. Ռուբայա: Իմ միտքը պղտորում է... Ռուբայա:

Սա ճշարտութեան ձայնն է:

Ռուբայա. Ես փրկեցի քեզ, տէր իմ:

Սիւլէյման-խան. (Ձէյնարի ընկնում տեսքով զուարճացած) Ձէյնար: Սա է քո վրիժառուն: Դու իմանում ես ընտրութիւն անել: (Գէպի դուրը): Հէյ, պահակներ: Օթար բէկին բռնեցէք և իսկոյն ինձ մօտ բերէք: Ոտքի հանէք ամենքին... Յարձակուեցէք... Կտոր-կտոր արէք թագուհու ամբողջ զօրաբաժինը: (Ընդհարում քեմի ետեւը: Սարսփելի աղաղակներ: Ձէյնարի շռայլում):

Ձէյնար. (Նստուելով դէպի էրեկէին) Գէթ վերջին ամօթանքից ազատիր քեզ: Գնա—այնտեղ քեզ համար են մեռնում: Մետիւր նրանց հետ: Օ՛, էլ մի ապրիլ: Մի ապրիլ: Մարդիկ չեն ներիլ քեզ... Կարելի է, քեզ Քրիստոս... որին դու վաճակեցիր... որը աւազակին ներեց... Գնա. մեռիր:

Էրեկէ. (Հեկեկալով) Ռուբայա:

Ռուբայա. (Ուշ չարձնելով նրա վրայ) Ես փրկեցի քեզ, տէր իմ:

Սիւլէյման. (Աճալից) Ձէյնար: Աստուած հանարի համար չէ ստեղծել երկիրը և ոչ էլ երկինքը—խաղի համար: Նախ բան մեռնելը, դու նորից կը տեսնես այն ամենը, ինչ որ տեսել ես քսան տարի առաջ: Ես կրկին անգամ ձիուս ոտքով կը կոխկատեմ որդուդ կուրծքը, բայց առաջ քո ժողովուրդը կը պիտի իմանայ, թէ ի՞նչպէս քո որդին ծախեց թէ իրան՝ ժողովրդին և թէ իր մօրը: Դու ես քո ժողովուրդն հաւաքել այստեղ, դու էլ կը մօտեցնես վառօղի պատրոյզը ժողովրդիդ

կրծքին ուղղած թնդանօթներին: (Պատուհանը լուսաւորում է ար-  
րինազոյն փայլով: Լսում է խնայուցիչ պայծիւն: Երևում են օդը թըռ-  
չող բեկորներ: Սարսափելի աղաղակներ եւ զէնքերի շառաչիւն: Ռուբալան  
յուսահատական ձիւղձ դուրս է փախչում):

Զէյնաբ. Անանիան, Աստուած քեզ փրկէ:

Էրեկէ. (Նետուելով դէպի դուռը) Մայր, մի ներիւ ինձ, քա-  
նի կենդանի եմ, աղօթիւր, երբ կը մեռնեմ: (Դուրս է վազում):

VIII

Սիւլէյման-խան. (Սարսափից քար կտրած, նետում է դէպի  
պատը, ինչ տեղ որ զէնքեր են գտնուած, եւ ատրճանակ ու թուր է առ-  
նում ձեռքը) Դէպի ինձ: Ալլահի զինուորներ: (Բոլոր դռների մէջ եւ  
պատշգամբում կռիւ է սկսուած: Սրով ճանապարհ բանալով՝ պատշգամբից  
ներս է ընկնում Գաթօն եւ դէմառդէմ ելնում Սիւլէյմանին):

Դաթօ. Գայլ, դուրս եկ քո որջից: (Հարուածն՝ րի փոխանա-  
կումից յետոյ, կուրծք-կրծքի տուած՝ կռուի են բռնում):

Զէյնաբ. (Շուր միջոցին, նախաբեմում, ծուկի չորած) Օ՛, սուրբ  
Աստուածածին: Քո խոցուած սրտին իմ ուղղում իմ աղօթքը:  
Ի՞նձ վրայ բարձիւր նրա մեղքի լուծը, միայն ինձ վրայ: Մի-  
այն ինձ վրայ: (Գաթօն վայր է ձգում Սիւլէյմանին եւ ծուկը դնում  
է կրծքին: Ներս են խուժում—Օրբելիանը՝ բարձրահասակ, ծաղատ ձե-  
րունի. Սմատր՝ սեւ ու ալեխառն միրուքով, միւս զօրավարները, գիւ-  
ղացիներ: Սաբան ներս է մտնում՝ մի ձեռքին գաւազան, միւս ձեռքին՝  
մերկայրած սուր: Կռուի աղմուկին միախառնում է նկեղեցու զանգա-  
հարուածան ձայնը: Ձախ կողմից դուրս է վազում Գայիանէն, նրա ետեւ-  
ից՝ Իսախարը):

IX

Աղաղակներ դռների մէջ. Բերդը մեր ձեռքին է: Նրանք  
փախչում են: Թագուհուն փրկեցէք: Ի՞նչտեղ է Սիւլէյմանը:  
Մահ Սիւլէյմանին:

Դայիանէ. Դաթօ:

Դաթօ. (Սիւլէյմանին ծնկի տակ պահած) Զօրավարներ, նա  
իմ ծնկի տակն է:

Իսախար. Ճիւլիւր, ճիւլիւր դրան, ինչպէս դա քո եղբորը  
ճիւլեց: Ձախջախիւր դրան, ինչպէս դա քո երկիրը ջախջախեց:  
(Մտնում է Սախտի փայ ընկած Սիւլէյմանին): Հիմա մեռած ման-  
կանը տեսնում ես, անյաղթ Սիւլէյման: Նրա եղբոր ծուկն  
է ճիւլում քո կուրծքը, ինչպէս քո ձիւ սմբակը ճիւլեց ան-

մեղին, անյաղթ Սիւլէյման: (Մօտիկ կանգնած զինուորներից մէկի  
գաշոյնը խելով): Թող քո արիւնն էլ այնպէս ցայտէ, ինչպէս ան-  
մեղի արիւնը ցայտեց: (Ուզում է գաշոյնը վրայ բերել):

Սարա. (Բռնում է նրա ձեռքից) Սպասիւր: Ո՞վ կը վստահա-  
նայ Թամար թագուհու ներկայութեամբ դատաւոր լինել այս-  
տեղ: Բաց թող դրան, պատանի: Հիմա դա վտանգաւոր չէ  
(Գաթօն հեռացնում է ծուկը: Կռիւը հետզհետէ զարարում է: Սիւլէյմանին  
կալանաւորում են):

Օրբելիան. (Ձեռքը դնելով Սիւլէյմանի ուսին): Ես, Օրբելիանս,  
արքայական զինուորների ժառանգական զօրավարս, իմ ձեռքը  
դնում եմ յափշտակողի վրայ եւ առնում եմ նրա սուրը:

Սմբատ. (Պոկելով նրա գլխից ապարօշը): Ես, Սմբատս, որ  
ժառանգական իրաւունքով թագադրում եմ թագաւորներին,  
պոկում եմ աւագակի ու սրիկայի գլխից այս պաճուճանքը եւ  
ձգում եմ ոտքիս տակ: (Ոտքով կիսձորում է չլվան):

Ամբոխը. Կուրացրէք դրան: Կտոր-կտոր արէք կատաղի  
գազանին: (Սիւլէյմանն անշարժ կանգնած է՝ աչքերն երկինք ուղղած):

Սարա. (Պաշտպանողական դիրքով նրան պատսպարելով, բար-  
ձրաձայն) Սպասեցէք, այ մարդիկ: Սրա վիճակը թագուհին ու  
թագաւորը կը որոշեն:

Ամբոխը. Դատիւր դրան, ո՞վ թագուհի: Կեցցէ թագածա-  
ռանգ Գէօրգին:

X

Օթար-բէկը՝ (Վերաւոր եւ ուժասպառ՝ ուրիշների հետ միասին  
ձեռքերի վրայ ներս է բերում մահացու վէրք ստացած Էրեկէին):

Օթար-բէկ. (Երկրուելով) Թագուհի... քո որդին... սպան-  
ուած է: (Էրեկէին դնում են թագուհու ոտքերի տուօջ: Թագուհին չի  
նայում որդուն: Սմնքը լուռ են):

Զէյնաբ. Գո՛հ եմ քեզանից, ո՞վ Տէր:

Էրեկէ. Ներիւ ինձ... մայր իմ... (Մեռնում է):

Զէյնաբ (Լուռ ու մուծջ խոնարհում է որդու դիակի վրայ. եր-  
կար նայում է նրան: Ապա կամաց բարձրանալով, ծանրաքայլ մտնում  
է Սիւլէյմանին եւ կանգնում նրա առաջ՝ աչքը չհեռացնելով նրանից):

Սիւլէյման-խան. (Գլուխը բարձրացրած, վեր նայելով) Յաղ-  
թութիւնը քոնն է, Զէյնաբ: Հրամայիւր, որ ինձ սպանեն:

Զէյնաբ. Քեզ սպանել: Միթէ քո յաղթութիւնից յետոյ՝  
դու ինձ սպանեցիր: Դու կաթիլ-կաթիլ ձեռքիւր իմ հոգին, իմ  
հաւատը, իմ պատիւը: Դու ամբողջ քսան տարի անարգում ու  
ոտքի տակ էիր տալիս իմ ժողովուրդն, իմ Աստծուն եւ այժմ՝

յաղթութեան և բերկրանքի այս ժամին, ես՝ թագուհիս՝ այրուում ու կարմրում եմ ամօթից և խայտառակութիւնից: Մի հատիկ աստղ էր ինձ լոյս տալիս անթափանցելի խաւարում... (Հեկեկանքներից ծայն ընդատում է): Մի նուիրական ժամի համար էի ես շարունակ աղօթում Աստծուն անքուն գիշերներ... Մեծանում ու զօրանում էր վրիժառուն խուլ ու յետ ընկած անկիւնում, չքաւորութեան մէջ... Եւ ես տեսնում էի այն փափագելի ժամը, երբ պիտի ծունկ իջնէի նրա ոտքերի առաջ և նա պիտի լինէր իմ խարէութեան, իմ ամօթանքի դատաւորը... Նա, իմ երկրի ազատարարը, իմ ժողովրդի թագաւորը, նա՛ն անարատ ու անվեհեր... Եւ դու... քո պիղծ հարեմը... քո խլամբ... ստրկացնող և անողորմ... (Նրա ծայնը կտրւում է) խլեցիք... խլեցիք իմ վերջին լոյսը... հանգցրիք իմ աստղը... Եւ այդ ամենի փոխարէն՝ միայն մահ... Զօրավարներ և ժողովուրդ: Մրա կեանքով վարձատրեցէք իմ բոլոր տառապանքները... ինձ բաշխեցէք այդ կեանքը... (Տրտունջ): Զօրավարներ և ժողովուրդ: Վրէժխնդիր եղէք ձեր թագուհու փոխարէն: Բայց ոչ մահով, ոչ տանջանքներով: Ի՞նչ են տանջանքներն ու մահը մոլեռանդի համար: Ո՛չ: Այս անյաղթին, հզօրին, այս գոռոզին ձգեցէք իր տիրոջ ոտքերի տակ, ձգեցէք ողջ-նոջ: յաղթում անգօր, ստորացած... Վրին լուծ դրած՝ սրան տարէք, տուէք թշնամիների ձեռքը: Թող սա մասնակից չլինի այսօրուայ գոհեալների փառքին... Թող ստրկութիւնն ու անարգանքը տան նրան արժանի վարձը իմ կրած խայտառակութեան, ձեր ստրկութեան... սրա փառագուրկ մահուան համար: (Յոյց է տալիս որդու դիակը): Այսօր մեռաւ ձեր թագաւորը... իմ որդին... Իմ որդին: (Ընդհանուր տրտունջ):

Միւլէյման-խան. Գո որդին—գաւաճ...

Զէյնաբ. (Նշխանարար) Լոխր, ստրուկ: Բնածին թագուհին չի խաբում իր ժողովրդին: Զօրավարներ և ժողովուրդ: Այս սպանուած պատանին—իմ և ձեր թագաւորի որդին—գաւաճանեց ձեզ: Ծղմարիտ է, նրան խարել էին, բայց նա գաւաճանեց: Եւ ես հրամայեցի նրան մեռնել—և նա մեռաւ: Թող, ուրեմն, երկուսիս միասին դատէ Աստուած: (Փոքրիկ խենջարով իրան սպանում է: Զարնուրանքի ընդհանուր ձիչ ևւ լապա մեռելային ւրուածին):

Սարա. Հանգչեցէք խաղաղութեամբ—դուք ձեր մեղքը մահով յաղթանակեցիք: Զեզ սպասում է Տէրը երկնքում:


ՎԱՐՍՏՅՈՅՐ



X

« Ազգային գրադարան  
  
NL0318895

13.591



891.71  
U-78